ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Պատարագը սքանչելի և փրկագործ խորհուրդ է հաղորդության մեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսի անմահացուցիչ մարմնի և արյան, որը եկեղեցու պաշտոնյաների միջոցով սրբագործվելով նվիրվում է Հայր Աստծուն հաղորդության արժանացածների մեղքերի քավության ու թողության համար:

Հաղորդություն է կոչվում քանի որ սրանով մենք միանում ենք նրա հետ, իսկ Նա՝ մեր: Հաղորդության ժամանակ քահանան ձեռքով շոշափում է անշոշափելին, իսկ մենք շրթունքներով համբուրում ենք Տիրոջը (Սղմ. 2.12) և բերանով ճաշակում բոլորիս կերակրողին և ընդունում Նրան մեր սրտում ու հոգիով միանում Նրա հետ:

Նրանք ովքեր արժանիորեն ճաշակում են երկնային հացը, որը տրվում է Կյանքի աղբյուրից և ըմպում են անմահացուցիչ արյունը Կենդանի Աստծո, ճանաչում են որ Տերը քաղցր է:

Սուրբ Պատարագի խորհուրդը հաստատեց Հիսուս Քրիստոսը Իր մատնության երեկոյի ընթացքում, կամ որ նույն է Ավագ Հինգշաբթի օրը: Որը նախ հիշատակն է կամավոր չարչարանքների և փրկագործ խաչելության մեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսի:

Երկրորդ՝ սա նաև մեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսի մարմնի և արյան երկրպագությունն է: Նա բաշխելով Իր մարմինը և արյունը Նոր Ուխտ սահմանեց:

Երրորդ՝ սա նաև հաղորդություն է սրբության հետ, և սրանով մենք սրբվում ենք:

Չորրորդ՝ այս խորհուրդը պարգև է մեզ երկնքից որպես կյանքի հաց:

Սուրբ Խորհուրդը ներգործում է արժանավորապես հաղորդվածների վրա և նրան շնորհում հավիտենական կյանք, ըստ այն խոսքի. ***«Ով ուտի Իմ մարմինը և ըմպի Իմ արյունը հավիտենական կյանք կունենա»*** (Հովի 6. 55):

Երկրորդ՝ ներգործում է սրտի և հոգու վրա և շնորհում մեղքերի քավություն և թողություն. ***«Սա է Նոր ուխտի Իմ արյունը որ հեղվում է շատերի վրա մեղքերի թողության համար»:***

Երրորդ՝ ճաշակողը հարակից է լինում Տիրոջը, ըստ այն խոսքի. ***«Ով ուտի Իմ մարմինը և ըմպի Իմ արյունը նա Իմ մեջ կբնակվի և Ես նրա մեջ»*** (Հովի 6. 57):

Խորհուրդի նպատակն է հոգևոր միություն հաստատել Աստծու և մարդու միջև: Եվ քանի որ Աստված հոգի է, ապա մարմնացավ անմարմին **«Բանն Հօր»**, որպեսզի միավորվի մեզ հետ: Այս խորհրդով Հայրն Աստված սրբագործված հացը և գինին Սուրբ Հոգով փոխում է Իր Միածնի մարմնի և արյան, որպեսզի մենք այն ճաշակելով միավորվենք Աստծու հետ:

Սուրբ Պատարագ կարելի է մատուցել ամեն օր, ըստ առաքյալների սովորության, բայց այժմ սովորություն է շաբաթ և կիրակի օրերին միայն մատուցել: Շաբաթը իբրև յոթերորդ օր, քանի որ այդ օրը Աստված հանգստացավ Իր բոլոր գործերից, և կիրակին որպես Հիսուս Քրիստոսի հարության օր: Սուրբ Պատարագ մատուցվում է նաև տերունական և սրբոց տոներին ի պատիվ սրբերի և տոների:

Ըստ Հայաստանյայց Եկեղեցու սահմանադրության, սուրբ Պատարագ չի մատուցվում աղուհացի օրերին, այսինքն Մեծ Պասին, բացի շաբաթ և կիրակի օրերից, առաջավորաց պահքի յոթնյակի հինգ օրը և հինգ տաղավարների պահոց շաբաթների ընթացքում, որովհետև այս հիշյալ օրերը սգո և ապաշխարության օրեր են, այն ինչ Սուրբ Պատարագը հոգևոր ուրախության հանդես է և կոչվում է մինչև անգամ «Հարսանիք Գառան»:

Մատուցելու ժամանակը սովորաբար առավոտն է, այսինքն երրորդ ժամը ըստ եբրայացիների, որը եվրոպական ժամանակով առավոտյան ժամը իններից մինչև ժամը տասնմեկն է: Իսկ Ծննդյան և Զատկական ճրագալուցները սահմանվեց երեկոյան ժամերին: Ավագ Հինգշաբթի օրը Սուրբ Պատարագ մատուցվում է ճաշից հետո որը մոտ է երեկոյին:

Սուրբ Պատարագ մատուցելու վայրը ըստ առաքելական սահմանադրության ընդունված է եկեղեցին՝ տաճարը և օրհնված մատուռները: Զոհասեղանը պետք է ունենա օծված վեմ: Մեր եկեղեցին շարժական սեղանի վրա պատարագ չի մատուցում, մանավանդ որ պատարագի ժամանակ քահանան ասում է. «Ի յարկի Քո սրբութեան...» աղոթքը, որը որ միայն եկեղեցում կարելի է ասել: Չնայած որ ինչ որ ժամանակ այդպիսի բան եղել է, բայց սուրբ հայրերի ժողովը մերժել է այն: Ըստ եկեղեցու հայրերի առանց օծման և նավակատիքի օրհնության եկեղեցին սոսկ տուն է

և ոչ Առագաստ և Հարսնարան «Բանին Աստուծոյ»: Նախ անհրաժեշտ է սկզբում մաքրել հոգևոր երգերով, սաղմոսներով և օրհնությամբ և ապա օծել: Միայն սրանից հետո է պատրաստ տաճարը Աստվածային խորհրդի կատարման համար: Եկեղեցուց դուրս չի կարելի պատարագ մատուցել, թեպետ Քրիստոսը Երուսաղեմից դուրս խաչվեց, որը նշան էր որ եկեղեցին տարածվելու էր ամբողջ աշխարհում, սակայն Իր խորհրդական մարմինն ու արյունը Վերնատանը պատարագեց և մեզ անհրաժեշտ է Քրիստոսին հետևել եկեղեցում կատարելով: Եվ բացի այդ Քրիստոսի մարմնի և արյան օրհնությունը անհրաժեշտ է կատարել սուրբ սեղանի վրա: Աշխարհի տները՝ մարդկանց բնակարանները մեղքերից մաքուր չեն, հետևապես չի կարելի տանը պատարագ մատուցել:

Սուրբ Պատարագի սրբազան անոթներն են սկիհը և մաղզման: Սկիհը գինու համար է, իսկ մաղզման նշխարի՝ այսինքն հացի: Սկիհը և մաղզման պետք է պատրաստված լինի ոսկուց կամ ոսկեզոծ արծաթից:

Պատարագը մատուցում է կամ քահանան կամ էլ քահանայից էլ ավելի բարձր հոգևոր կոչում ունեցող հոգևորականը, նախապես մի քանի օր առաջ ըստ կանոնների պատրաստվելով պատարագին: Պատարագիչի հետ միասին պետք է մասնակցեն նաև սարկավագներ, կիսասարկավագներ և դպիրներ: Պատարագիչ քահանան հատուկ սպասավոր է սրբագործ խորհուրդին և պաշտոնյակից Մեծ Քահանայապետին՝ մեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսին. «Վասն զի Դու ես որ մատուցանես՝ և մատչիս՝ և ընդունիս, և տաս Քրիստոս Աստուած մեր» (Պատարագամատոյց): Եվ Աստված կատարյալ առաքինություն է պահանջում խորհրդի սպասավորներից, քանի որ սա մեր կյանքի փրկության համար է: Եվ անհրաժեշտ է որպեսզի խորհուրդին չմոտենան այնպես ինչպես երկրային գործերին, այլ ահով ու դողով պետք է սպասավորել:

Քահանաները Աստծո Տան տնտեսներն են, իսկ Աստծո տունը ուղղափառ հավատացյալների ժողովն է: Հոգևորականները պարտավոր են հովվել Քրիստոսի բանավոր հոտը, որը նա գնեց Իր արյունով: Հոգևորականները Աստծու պաշտոնյաներն են և դրված են Աստծո հրամանները կատարելու համար:

Պատարագիչ քահանայի պարտավորությունն է մաքրել խիղճը,

միտքը և սիրտը կատարյալ զղջմամբ, ճշմարիտ խոստովանությամբ և բավական ապաշխարությամբ ըստ այն խոսքի. **«Այսուհետև ով ուտի հացը կամ ըմպի բաժակը անարժանությամբ, պարտական է Տիրոջ մարմնին և արյանը, իր դատաստանն է ուտում և ըմպում»:**

Եթե անգամ Քահանան անարժան լինի, և ամեն տեսակ մեղքերով շաղաղված, նույնիսկ այս դեպքում նրա մատուցած պատարագը իրական պատարագ է, և հացն ու գինին ստուգապես փոխակերպվում են մեր Տիրոջ մարմնի և արյան: Որովհետև անբաժանելի է քահանայական շնորքը քահանայից: Չնայած որ այս դեպքում նա առավել պատժի և դատապարտության է արժանանում: Մանավանդ որ ճաշակում է նաև Տիրոջ մարմինը և արյունը անարժանապես:

Պատարագին մասնակցող ժողովուրդը պետք է լռությամբ ներքին աղոթքի վիճակում գտնվի: Եվ քանի որ գտնվում է Աստծու ներկայության մեջ ամբողջ պատարագի ընթացքում պետք է կանգնած վիճակում լինի: Մարմնավոր տկարության դեպքում զգեստավորության և պատարագիչի քարոզի ժամանակ կարող է նստել: Իսկ «Վերաբերումի» ժամանակ սկսած սրբասացություններից մինչև «Մեծ փոխը» ինչպես նաև «Խոնարման», «Բարձրացման» և «Փառաբանության» ամբողջ ընթացքում, և «Տէր ողորմեայի» ժամանակ պետք է ծունկի իջնի:

Անհրաժեշտ է որպեսզի մասնակից ժողովուրդը համերգ լսողի կեցվացք չընդունի, ինչպես նաև ոչ մի դեպքում չպետք է ձայնակցի քահանային և սարկավագներին: Մասնակիցները պետք է ձայնակցեն միայն դպրաց դասին, առանց բարձրաձան գոչումների և խառնաշփոտ առաջացնելու: Մասնակիցները հիմնականում պետք ձայնակցեն «Հավատամքը», «Հայր մերը» ասելիս, ինչպես նաև դպրաց դասին հատկացված շարականները և մեղեդիները երգելիս, մեղմ ձայնով առանց իրենց կողքը կանգնած մարդկանց խանգարելու: Բացի այդ չի կարելի պատարագը կիսատ թողած հեռանալ տաճարից այլ միայն քահանայի օրհնությունը ստանալուց հետո անհրաժեշտ է մոտենալ համբուրել նրա աջը և սուրբ Ավետարանը, ապա միայն դրանից հետո դուրս գալ տաճարից:

Ա. ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆ ԶԳԵՍՏԱՒՈՐԼՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՉ ՔԱՀԱՆԱՅԻ

Մտցէ քահանայն յաւանդատունն հանդերձ սարկաւագօք եւ դպրօք, եւ նախ զգեցեալ սարկաւագայն եւ այլ պաշտօնէից, ասասցեն Սաղմոս Հանդերձի ՃԼԱ տուն առ տուն:

Քհ - *Քահանայք Քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք Քո ցնծալով ցնծասցեն:*

Սրկ - *Յիշեա՛ Տէր զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա:*

Քհ - *Որպէս երդուաւ Տեառն, եւ ուխտս եդ Աստուծոյ Յակոբայ:*

Սրկ - *Թէ ո՛չ մտից ի յարկս տան իմոյ, եւ թէ ելից յանկողինս մահճաց իմոց:*

Քհ - *Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտեւանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց, մինչեւ գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ:*

Սրկ - *Ահա՛ լուաք զՆմանէ յԵփրաթայ, եւ գտաք զՆա ի դաշտս մայրեաց:*

Քհ - *Մտցուք ի յարկս Նորա, երկիր պագցուք ի տեղւոջ ուր կացեալ են ոտք Նորա:*

Սրկ - *Արի՛, Տէր, ի հանգիստ Քո, Դու եւ տապանակ կտակի սրբութեան Քոյ:*

Քհ - *Երիցունք Քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք Քո ցնծալով ցնծասցեն:*

Սրկ - *Վասն Դաւթի սիրելւոյ Քոյ, մի դարձուցաներ զերեսս Քո յօծելոյ Քումմէ:*

Քհ - *Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ո՛չ ստեաց նմա, ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:*

Սրկ - *Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս Իմ, եւ զվկայութիւնս Իմ զոր ուսուցից նոցա:*

Քհ - *Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո:*

Ա. ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆ ԶԳԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՉ ՔԱՀԱՆԱՅԻ

Քահանան սարկավագների ու դպիրների հետ պետք է մտնի ավանդատուն և նախ սարկավագների ու մյուս պաշտոնյաների զգեստավորվելուց հետո տուն առ տուն պետք է արտասանեն 131-րդ՝ Հանդերձի սաղմոսը:

Քհ - *Քո քահանաները թող արդարություն հագնեն, և Քո սրբերը ցնծալով ցնծան:*

Սրկ - *Տե՛ր, հիշի՛ր Դավթին և նրա ողջ հեզությունը:*

Քհ - *Թե ինչպես նա երդվեց Տիրոջը, և ուխտեց Հակոբի Աստծուն:*

Սրկ - *Թե՝ չեմ մտնի իմ տան սրահներից, չեմ բարձրանա իմ մահճի անկողինը:*

Քհ - *Թե՝ իմ աչքերին քուն չեմ տա, կամ նինջ իմ արտևանունքներին, և կամ հանգիստ՝ իմ մարմնին, մինչև որ Հակոբի Տեր Աստծո համար բնակվելու վայր չգտնեմ:*

Սրկ - *Ահա Նրա մասին լսեցինք Եփրաթայում, և Նրան գտանք մայրինների դաշտերում:*

Քհ - *Մտնենք Նրա հարկի տակ, երկրպագենք այն տեղում, ուր կանգնած են Նրա ոտքերը:*

Սրկ - *Ելիր Քո հանգստավայրը, Տե՛ր, Դու և տապանակը Քո սրբության կտակի:*

Քհ - *Քո երեցները թող արդարություն հագնեն, և Քո սրբերը՝ ցնծալով ցնծան:*

Սրկ - *Հանուն Քո սիրելի Դավթի, մի՛ շրջիր երեսդ Քո օծյալից:*

Քհ - *Տերը ճշմարտությամբ երդվեց Դավթին, ու չխաբեց նրան, որ նրա որովայնի պտուղից է նրա աթոռին նստեցնելու.*

Սրկ - *Եթե որդիներդ պահեն Իմ օրենքը և Իմ վկայությունները, որոնք նրանց պիտի սովորեցնեմ:*

Քհ - *Նրանց որդիները հավիտյանս հավիտենից նստելու են քո դահին:*

Սրկ - *Հաճեցաւ Տէր ընդ Սիոն, եւ ընտրեաց բնակել ի նմա, ասէ. Այս է հանգիստ Իմ յաւիտեանս յաւիտենից, ի սմա բնակեցայց զի հաճեցայ ընդ սա:*

Քհ - *Զայրիս սորա օրհնելով օրհնեցից, եւ զաղքատս սորա լցուցից հացիւ:*

Սրկ - *Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն, եւ սուրբք սորա ցնծալով ցնծասցեն:*

Քհ - *Անդ ծագեցից զեղջիւր ի Դաւիթ, պատրաստ արարից զճրագ օծելոյ Իմոյ:*

Սրկ - *Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, եւ ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն Իմ:*

Քհ - *Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.*

Սրկ - *Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպ - *Տէ՛ր, ողորմեա՛:*

Սրկ - *Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս Իւր արասցէ ի վերայ մեր. ամենակալ Տէր Աստուած մեր, կեցուսցէ եւ ողորմեսցի:*

Դպ - *Կեցո՛, Տէր:*

Սրկ - *Ողորմեց մեզ Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:*

Դպ- *Տէ՛ր, ողորմեա՛* (եւ ասասցեն երկոտասան անգամ):

Եւ քահանայն ասասցէ երկոտասան «Տէր ողորմեայս» եւ զաղօթս զայս:

Քհ - (ի ծածուկ) *Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ, Տէր մեր Յիսուս Քրիստոս: Անճառելի խոնարհութեամբ յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար:*

Որ եղեր Քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի եւ զարդարեցեր զեկեղեցի Քո սուրբ: Տէր ամենակալ, որ պարգեւեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ, արժանի արա՛ եւ զիս ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս Քո, որ համարձակիմ եւ մերձենամ ի նոյն հոգեւոր պաշտօն փառաց Քոց: Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս

Սրկ - *Տերը հավանեց Սիոնը և նախընտրեց բնակվել այնտեղ՝ ասելով. «Այս է հանգիստն Իմ հավիտյանս հավիտենից, այստեղ պիտի բնակվեմ, քանզի հավանեցի սա»:*

Քհ - *Սրա այրիներին օրհնելով օրհնելու եմ, և սրա աղքատներին լիացնելու եմ հացով:*

Սրկ - *Սրա երեցներին փրկություն եմ հագցնելու, և սրա սրբերը ցնծալով ցնծալու են:*

Քհ - *Այնտեղ Դավթից եղջյուր եմ ծլեցնելու, Իմ օծյալի համար ճրագ եմ պատրաստելու:*

Սրկ - *Նրա թշնամիներին ամոթ եմ հագցնելու, իսկ նրա վրա ծաղկելու է սրբությունն Իմ:*

Քհ - *Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Սրկ - *Եվ խաղաղության համար եւս աղաչենք Տիրոջը:*

Դպ - *Տե՛ր, ողորմի՛ր:*

Սրկ - *Հավատով միաբանված Տիրոջից խնդրենք, որպեսզի Իր ողորմության շնորհները սփռի մեզ վրա:*

Ամենակալ Տեր Աստված մեր, կեցո և ողորմեա:

Դպ - *Կեցո՛, Տեր:*

Սրկ - *Եվ բոլորս միաբանությամբ ասենք՝ մեր Տեր Աստված, ողորմի՛ր մեզ՝ Քո մեծ ողորմությամբ:*

Դպ - *Տե՛ր, ողորմի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր:*

Եվ քահանան տասներկու անգամ պետք է ասի «Տե՛ր, ողորմի՛ր» և ապա այս աղոթքը.

Քհ - (ծածուկ) *Մեր Տեր Հիսուս Քրիստոս, Դու, որ լույսը հագել ես իբրև հանդերձ, անպատմելի խոնարհությամբ երևացիր երկրի վրա և շրջեցիր մարդկանց մեջ:*

Դու, որ եղար հավիտենական քահանայապետ ըստ կարգի Մելքիսեդեկի և զարդարեցիր Քո սուրբ եկեղեցին: Ամենակա՛լ Տեր, որ մեզ ևս պարգևեցիր հագնելու նույն երկնային հանդերձը, այս ժամին արժանի արա՛ և ինձ՝ Քո անպիտան ծառային, որ համարձակվում եմ մոտենալ Քո փառքի նույն հոգևոր պաշտոնին, որպեսզի մերկանամ իմ բոլոր ամ-

մերկացայց, որ է հանդերձ պղծութեան, եւ զարդարեցայց լուսով Քով:

Ընկեա՛ յինէն զչարիս իմ, եւ թօթափեա՛ զյանցանս իմ. որպէս զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ ի Քէն:

Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց Քոց ընդ այնոսիկ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս Քո. զի եւ ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստիդ ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զՔեզ, Քրիստո՛ս, որ բարձեր զմեղս ամենեցուն:

Զի Դու ես սրբութիւն անձանց մերոց եւ Քեզ՝ բարերարիդ Աստուծոյ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ մատուցեալ կիսասարկաւագացն զգեցուսցեն զհանդերձսն ասելով վասն իւրաքանչիւրոցն.

Սրկ ~ *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:*

Քահանայն խաչակնքելով ի վերայ իւրաքանչիւրոցն ասասցէ:

Քհ ~ *Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Նախ դիցէ քահանայն զԽոյրն ի գլուխ իւր ասելով:

ՍԱՂԱՒԱՐՏԻՆ

Դի՛ր, Տէր, սաղաւարտ փրկութեանն ի գլուխ իմ՝ զնշան խաչի Քո, պատերազմել ընդ զօրութիւնս թշնամւոյն, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՇԱՊԿԻՆ

Զգեցո՛ ինձ Տէր հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան, եւ շուրջ պատեա՛ զզգեստովս փրկութեան, շնորհօք Տեառն մերոյ

բարշտութիւններից, որոնք պղծության զգեստ են, և զարդարվեմ Քո լույսով, Ինձանից դեն գցիր իմ չարությունները, թոթափի՛ր իմ հանցանքները, որպեսզի արժանի լինեմ Քո պատրաստած լույսին:

Շնորհի՛ր ինձ քահանայական փառքով մտնել Քո սրբությունների պաշտամունքի մեջ նրանց հետ, ովքեր անմեղությամբ պահեցին Քո պատվիրանները, որպեսզի ես ևս պատրաստ գտնվեմ իմաստուն կույսերի հետ միասին Քո երկնային առագաստին և փառավորեմ Քեզ, Քրիստոս, որ վերցրիր բոլորի մեղքերը: Որովհետև Դու ես մեր անձերի սրբությունը, և Քեզ՝ բարերար Աստծուդ, վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Եվ կիսասարկավագները մոտենալով՝ զգեստավորում են նրան, յուրաքանչյուր զգեստի համար ասելով.

Սրկ ~ *Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը՝ ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր:*

Քահանան, խաչակնքելով յուրաքանչյուրի վրա, պետք է ասի.

Քհ ~ *Օրհնություն և փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Նախ քահանան իր գլխին է դնում խույրը՝ ասելով.

ՍԱՂԱՎԱՐՏԻՆ

Տե՛ր, փրկության սաղավարտ դի՛ր իմ գլխին՝ պատերազմելու համար թշնամու զորությունների դեմ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՇԱՊԻԿԻՆ

Տե՛ր, ինձ փրկության հանդերձ և ուրախության պատմուճան հագցրո՛ւ և շրջապատի՛ր փրկության զգեստով՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի

Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՓՈՐՈՒՐԱՐԻՆ

Զգեցո՛, Տէր, պարանոցի իմոյ զարդարութիւն, եւ սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԳՕՏԻՈՅՆ

Շուրջ պատեսցէ՛ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ եւ մտացս եւ շիջուսցէ ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս, եւ զօրութիւն շնորհաց Քոց յամենայն ժամ բնակեսցէ՛ ի սոսա, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԲԱԶՊԱՆԻՆ

Տո՛ւր Տէր զօրութիւն աջոյ (յահեակ) ձեռին իմոյ, եւ լուա՛ զամենայն աղտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել Քեզ անախտութեամբ հոգւոյ եւ մարմնոյ, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Զերկոսին ձեռն համբառնելով ի վեր ասէ.

Սրբեա Տէր զձեռս իմ յամենայն մեղաց, համբառնալ առ Քեզ արդարութեամբ եւ մաքրութեամբ: Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

շնորհներով, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՓՈՐՈՒՐԱՐԻՆ

Տե՛ր, իմ պարանոցին արդարություն հագցրո՛ւ և իմ սիրտը մաքրի՛ր մեղքի ամեն տեսակ աղտեղությունից մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհ-ներով, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԳՈՏՈՒՆ

Հավատի կամարը թող շրջապատի իմ սրտի և մտքի մեջքը և թող հանգնցնի նրանցում աղտոտ խորհուրդները, և Քո շնորհների զորու-թյունը թող ամեն ժամ բնակվի նրանց մեջ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԲԱԶՊԱՆԻՆ

Տե՛ր, զորություն տո՛ւր իմ աջ (ձախ) ձեռքին և լվա՛ իմ բոլոր աղտե-ղությունները, որպեսզի հոգու և մարմնի անարատությամբ կարողանամ սպասավորել Քեզ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավի-տենից. ամեն:

Երկու ձեռքերը վեր բարձրացնելով ասում է.

Սրբի՛ր, Տեր, իմ ձեռքերը բոլոր մեղքերից, որ դեպի Քեզ բարձրացնեմ արդարությամբ և մաքրությամբ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՎԱԿԱՍԻՆ (ուրարին)

Զգեցո՛, Տէ՛ր, պարանոցի իմոյ զարդարութիւն, եւ սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՆԱՓՈՐՏԻՆ՝ որ է Շուրջառն

Տէր ողորմութեամբ Քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ եւ պարսպեա՛ ընդ դէմ ներգործութեան չարին, զի արժանի եղէց փառաւորել զՔո փառաւորեալ անունդ, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուքն ասէ.

Քh - *Ցնծասցէ՛ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան. իբրեւ փեսայի եդ ինձ պսակ, եւ որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

ԹԱՇԿԻՆԱԿԻՆ

Սրբեա՛ Տէր զձեռս իմ յամենայն աղտեղութենէ մեղաց: Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Դպիրք ի փոքր ատենի եկեղեցւոյն սկսանիցին զԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆՆ ի ձայն:

(Շարական հանդերձի)

Խորհուրդ խորին, անհաս անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ, ի յառագաստ անմատոյց լուսոյն, գերապանծ փառօք՝ զդասս հրեղինաց:

ՎԱԿԱՍԻՆ (ուրարին)

Տե՛ր, իմ պարանոցին արդարություն հագցրո՛ւ և իմ սիրտը մաքրի՛ր մեղքի ամեն տեսակ աղտեղություններից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՆԱՓՈՐՏԻՆ, *որը շուրջառն է*

Տե՛ր, Քո ողորմությամբ ինձ պայծառ զգեստ հագցրո՛ւ և ինձ պարսպապատի՛ր չարի ներգործության դեմ, որպեսզի արժանի լինեմ փառավորելու Քո փառավորված անունը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Սրբազան զգեստներով զգեստավորվելուց հետո ասում է.

Քh - *Թող ցնծա իմ անձը Տիրոջով, որովհետև ինձ զգեստավորեց փրկության հանդերձներով և ուրախության պատմուճանով: Իբրև փեսայի պսակ դրեց իմ գլխին և իբրև հարսի՝ զարդերով զարդարեց ինձ՝ շնորհներով մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

ԹԱՇԿԻՆԱԿԻՆ

Տե՛ր, իմ ձեռքերը սրբի՛ր մեղքի ամեն տեսակ աղտեղությունից մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Դպիրները եկեղեցու փոքր ատյանում պետք է սկսեն ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆը երգել

Խոր, անհասանելի, անսկիզբ խորհուրդ, դու՝ որ երկնային թագավորությունդ զարդարեցիր՝ անմատչելի լույսի առագաստում, և գերապանծ փառքով՝ հրեշտակների դասերը:

Անճառահրաշ զօրութեամբ, ստեղծեր զԱդամ պատկեր տիրական. եւ նազելի փառօք զգեստաւորեցեր ի դրախտն Ադենի տեղի բերկրանաց:

Զարչարանօք Քո Սուրբ Միածնիդ, նորոգեցան արարածք ամենայն, եւ վերստին մարդն անմահացաւ զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:

Անձրեւածին բաժակ հրահոսան, որ հեղար յառաքեալսն ի սուրբ վերնատունն. հեղ եւ ի մեզ Հոգիդ Սուրբ Աստուած, ընդ պատմուճանին զՔո զիմաստութիւնդ:

Տան Քում վայելէ սրբութիւն, որ զգեցար զվայելչութիւն, սրբութիւն փառաց ընդ մէջ Քո ածեալ, պատեա՛ զմէջս մեր ճշմարտութեամբ:

Որ զարարչագործ բազուկս Քո տարածեցեր ընդդէմ աստեղաց. հաստատեա՛ զբազուկս մեր կարողութեամբ, համբարձմամբ ձեռաց առ Քեզ միջնորդիլ:

Իւսմամբ թագ ի գլուխս, պատեսցես զմիտս եւ զզգայարանս, խաչանիշ ուրարմամբ ըստ Ահարոնի. ծաղկեալ յոսկեթել ի զարդ խորանիս:

Ամենից բոլորից տիրապէս աստուածպետական, նափորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր, Քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր:

Թագաւոր երկնաւոր զեկեղեցի Քո անշարժ պահեա՛, եւ զերկրպագուս անուանդ Քում պահեա՛ ի խաղաղութեան:

Անպատմելի և հրաշալի զորությամբ, ստեղծեցիր Ադամին որպես Տիրական պատկեր և նազելի փառքով զգեստավորեցիր նրան Ադենի դրախտում՝ բերկրանքների վայրում:

Զարչարանքներով Սուրբ Միածնիդ նորոգվեցին բոլոր արարածները, և մարդը վերստին անմահացավ՝ անկողոպտելի զգեստներով զարդարված:

Անձրևածին բաժակ հրահոսան, որ սուրբ վերնատան մեջ առաքյալների վրա հեղվեցիր. ո՛վ Սուրբ Հոգի Աստված, պատմուճանի հետ նաև մեզ վրա հեղիր Քո իմաստությունը:

Տե՛ր, Քո տանը վայել է սրբությունը. Դու, որ վայելչություն հագար՝ մեջքդ փառավոր սրբությամբ գոտեպնդելով, ճշմարտությամբ պատիր մեր մեջքերը:

Որ Քո արարչագործ բազուկները տարածեցիր աստղերի դեմ, մեր բազուկներին զորություն տուր՝ որպեսզի վեր պարզած դեպի Քեզ միջնորդվելու:

Մեր գլուխը թագով հյուսելով՝ պատիր մեր միտքն ու զգայարանները խաչանիշ ուրարով՝ Ահարոնի նման՝ ոսկեթել ծաղկված որպես խորանի զարդ:

Բոլոր երամներից տիրապես աստվածապետականությամբ, նափորտապատ սիրով զգեստավորեցիր մեզ՝ Քո սուրբ խորհրդին սպասավոր լինելու համար: Երկնավո՛ր թագավոր, Քո եկեղեցին անշարժ պահի՛ր և Քո անվանը երկրպագողներին պահի՛ր խաղաղության մեջ:

ԿԱՆՈՆ ՍՊԱՍ ԴՆԵԼՈՅ

ԼՈՒԱՑՈՒՄՆ

Քահանայն հանդերձ սարկաւագօք եկեսցէ առաջի բեմին եւ լուասցէ զձեռս ասելով ի ծածուկ սաղմոս Լուացման Իե:

Քհ - *Ալէլուիա, ալէլուիա.*

Լուացից սրբութեամբ զձեռս իմ եւ շուրջ եղէց զսեղանով Քով, Տէ՛ր:

Սրկ - *Դատ արա՛ ինձ, Տէր, զի ես յամբծութեան իմում գնացի, ի Տէր յուսացայ զի մի՛ եղէց հիւանդ:*

Քհ - *Փորձեա՛ զիս, Տէ՛ր, եւ քննեա՛ զիս, փորձեա՛ զերիկամունս իմ եւ զսիրտ իմ:*

Սրկ - *Ողորմութիւն Քո, Տէր, առաջի աչաց իմոց, եւ հաճոյ եղէց ճշմարտութեան Քում:*

Քհ - *Ոչ նստայց ես յաթոռս նանրաց, եւ ընդ անօրէնս ես ոչ մտից:*

Սրկ - *Ատեցի ես զժողովս չարաց, եւ ընդ ամբարիշտս ես ոչ նստայց:*

Քհ - *Լուացից սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով Քով, Տէ՛ր:*

Սրկ - *Լսել ինձ զձայն օրհնութեան Քոյ, եւ պատմել զամենայն սքանչելիս Քո:*

Քհ - *Տէ՛ր, սիրեցի զվայելչութիւն տան Քո, եւ զտեղի յարկի փառաց Քոց:*

Սրկ - *Մի՛ կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ, եւ մի՛ ընդ արս արիւնահեղս զկեանս իմ:*

Քհ - *Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են, եւ աջ նոցա լի է կաշառօք:*

Սրկ - *Ես յամբծութեան իմում գնացի, փրկեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ:*

Քհ - *Ոտն իմ կացցէ յուղղութեան:*

Սրկ - *Յեկեղեցիս մեծս օրհնեցից զՔեզ:*

Քհ - *Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.*

Սրկ - *Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Քհ - *Եվ վասն սրբուհւոյ Աստուածածնի բարեխօսութեան, Տէ՛ր, ընկա՛լ զաղաչանս մեր եւ կեցո՛ զմեզ:*

ԿԱՆՈՆ ՍՊԱՍ ԴՆԵԼՈՅ

ԼՈՒԱՑՈՒՄՆ

Քահանան սարկավագների հետ գալիս է բեմի առջև և լվանում է ձեռքերը՝ ծածուկ արտասանելով 25/26- րդ՝ Լվացման սաղմոսը:

Քհ - *Ալելուիա, ալելուիա: Սրբությամբ կլվանամ ձեռքերն իմ և սեղանիդ շուրջը կլինեմ, Տեր:*

Սրկ - *Դատ արա ինձ, Տեր, քանզի անբասիր ընթացա, Տիրոջը հուսացի, որպեսզի հիվանդ չլինեմ:*

Քհ - *Փորձի՛ր ինձ, Տեր, և քննի՛ր ինձ, երիկամներս փորձի՛ր ու սիրտս:*

Սրկ - *Ողորմությունդ, Տե՛ր, աչքիս առաջ է, և ճշմարտությունդ հաճելի է ինձ:*

Քհ - *Ունայնամիտների աթոռին ես չեմ նստի և անօրենների մոտ չեմ մտնի:*

Սրկ - *Չարագործների ամբոխը ես ատեցի և ամբարիշտների կողքին չեմ բազմի:*

Քհ - *Սրբությամբ կլվանամ ձեռքերն իմ և սեղանիդ շուրջը կլինեմ, Տեր:*

Սրկ - *Լսելու Քո օրհնության ձայնը և պատմելու Քո բոլոր սքանչելիքները:*

Քհ - *Տե՛ր, սիրեցի Քո տան վայելչությունը և Քո փառքի բնակության վայրը:*

Սրկ - *Ամբարիշտների հետ իմ անձը կորստյան մի մատնիր և ոչ էլ կյանքս՝ արյուն թափող մարդկանց հետ:*

Քհ - *Որոնց ձեռքերն անօրինության մեջ են, և աջը նրանց լի է կաշառքով:*

Սրկ - *Ես անբասիր ընթացա, փրկիր ինձ, Տեր, և ողորմի՛ր:*

Քհ - *Ոտքն իմ թող ուղղության մեջ մնա:*

Սրկ - *Մեծ հավաքներում Քեզ պիտի օրհնեմ:*

Քհ - *Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:*

Սրկ - *Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Քհ - *Տե՛ր, նաև սրբուհի Աստվածածնի բարեխոսությամբ ընդունի՛ր մեր աղաչանքները և ապրեցրու մեզ:*

Սրկ - *Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի եւ գթացեալ կեցուսցէ զարարածս Իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:*

Քհ - *Ընկա՛լ, Տէ՛ր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին՝ անարատ ծնողի Միածնի Որդւոյ Քոյ, եւ աղաչանօք ամենայն սրբոց Քոց. եւ որոց այսօր է յիշատակ* (կամ աւուրս շնորհիւ). *լուր մեզ, Տէ՛ր, եւ ողորմեա՛, ներեա՛, քաւեա՛ եւ թո՛ղ զմեղս մեր: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Եւ դարձեալ առ ժողովուրդն ասասցէ:

Մեղայ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուհւոյ Աստուածածնին, եւ առաջի ամենայն սրբոց, եւ առաջի ձեր, հա՛րք եւ եղբա՛րք, զամենայն մեղս, զորս գործեալ եմ. քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, եւ ամենայն մեղօք, զոր գործեն մարդիկք: Մեղա՛յ, մեղա՛յ: Աղաչեմ զձեզ, խնդրեցէ՛ք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն:

Ժամօրհնողն կամ աւագագոյնն ի քահանայից ասասցէ (1):

Ավագերեց - *Ողորմեսցի՛ քեզ Աստուած հզօրն եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց՝ անցելոյն եւ այժմուս եւ յառաջիկայէն փրկեսցէ՛ եւ հաստատեսցէ՛ յամենայն գործս բարիս, և հանգուսցէ զքեզ ի հանդերձեալ կեանս. Ամէն:*

Քհ - *Ազատեսցէ՛ եւ զձեզ մարդասէրն Աստուած եւ թողցէ զամենայն յանցանս ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս. ուղղեսցէ եւ զառաջիկայ կեանս ձեր շնորհօք Սուրբ Հոգւոյն, հզօրն եւ ողորմածն, եւ Նմա փառք յաւիտեանս. Ամէն:*

Ավագերեց - *Յիշեսջի՛ր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:*

Քհ - *Յիշեալ լիջի՛ք առաջի անմահ Գառինն Աստուծոյ:*

Սրկ - *Սուրբ Աստվածածնին և բոլոր սրբերին բարեխոս դարձնենք Հոր առջև՝ երկնքում, որպեսզի կամենալով ողորմի և գթալով ապրեցնի Իր արարածներին: Ամենակալ Տեր Աստված մեր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր:*

Քհ - *Տե՛ր, սրբուհի Աստվածածնի՝ Քո Միածին Որդու անարատ ծնողի բարեխոսությամբ և աղաչանքներով Քո բոլոր սրբերի՝ նաև նրանց, որոնց հիշատակն է այսօր* (կամ՝ և այսօրվա շնորհներով), *ընդունի՛ր մեր աղաչանքները: Տե՛ր, լսի՛ր մեզ և ողորմի՛ր, ների՛ր, քավի՛ր և թողությո՛ւն տուր մեր մեղքերին և արժանի արա՛ գոհությամբ փառավորելու Քեզ՝ Քո Որդու և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Եվ դառնալով դեպի ժողովուրդը, ասում է.

Մեղանչեցի Աստծո առջև: Խոստովանում եմ Աստծո և սուրբ Աստվածածնի, բոլոր սրբերի և ձեր առջև, ո՛վ հայրեր և եղբայրներ, այն բոլոր մեղքերը, որ գործել եմ, որովհետև մեղանչեցի խորհրդով, խոսքով, գործով, և այն բոլոր մեղքերով, որ գործում են մարդիկ: Մեղանչեցի եմ, մեղանչեցի, աղաչում եմ ձեզ, ինձ համար Աստծուց թողություն խնդրե՛ք:

Ժամօրհնողը կամ քահանաներից ավագագույնն ասում է.

Ավագերեց - *Թող քեզ ողորմի հզորն Աստված և թողություն շնորհի քո անցյալ և ներկա բոլոր հանցանքներին, և առաջիկայում թող փրկի ու հաստատի քեզ բոլոր բարի գործերի մեջ և հանգչեցնի հանդերձյալ կյանքում. ամեն:*

Քհ - *Ձեզ նույնպես թող ազատի մարդասերն Աստված և թողություն տա ձեր բոլոր հանցանքներին, տա ժամանակ ապաշխարելու և բարիքներ գործելու, թող հզորն ու ողորմածն ուղղի նաև ձեր առաջիկա կյանքը Սուրբ Հոգու շնորհներով և Նրան փառք հավիտյանս. ամեն:*

Ավագերեց - *Հիշի՛ր և մեզ Աստծու անմահ Գառան առջև:*

Քհ - *Հիշված լինեք Աստծու անմահ Գառան առջև:*

ՆԱԽԱՄՈՒՏ

Փոխասցուք տուն առ տուն ՍԱՂՄՈՍ մտից (ՂԹ)

Դպ 1 - *Աղաղակեցէ՛ք առ Տէր, ամենայն երկիր, ծառայեցէ՛ք Տեառն ուրախութեամբ:*

Դպ 2 - *Մտէ՛ք առաջի Նորա ցնծութեամբ, ծաներուք, զի Նա է Տէր Աստուած մեր:*

Դպ 1 - *Նա արար զմեզ եւ ոչ մեք էաք. մեք ժողովուրդք եւ խաշն արօտի Նորա:*

Դպ 2 - *Մտէ՛ք ընդ դրունս Նորա խոստովանութեամբ եւ օրհնութեամբ ի յարկս Նորա:*

Դպ 1 - *Խոստովան եղերո՛ւք Տեառն, եւ օրհնեցէ՛ք զանուն Նորա:*

Դպ 2 - *Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն Նորա, յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն Նորա:*

Դպ 1 - *Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:*

Դպ 2 - *Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Սրկ - *Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:*

Քհ - *Ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք, զսուրբ, զհրաշալի եւ զյաղթող զտէրութիւնդ Քո փառաւորեմք, եւ Քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Քահանայն սաղմոսելով (ՍԱՂՄՈՍ ԽԲ) ընդ նախասարկաւագին, ընդ հիւսիսային աստիճանսն ելցէ ի բեմն առաջի սեղանոյն:

Քհ - *Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:*

Սրկ - *Դատ արա՛ ինձ, Աստուած եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:*

Քհ - *Յազգէ, որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս:*

Սրկ - *Դու, Աստուած, հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:*

ՆԱԽԱՄՈՒՏ

Փոխնիփոխ տուն առ տուն ասում են Մուտքի Սաղմոս 99

Դպ 1 - *Աղաղակե՛ք Տիրոջը, բոլոր, երկրներ, ծառայեցեք Տիրոջն ուրախութեամբ:*

Դպ 2 - *Նրա առջև ելեք ցնծությամբ. ճանաչեք որ Նա է մեր Տեր Աստվածը.*

Դպ 1 - *Նա ստեղծեց մեզ՝ և ոչ թե մենք եղանք. Նրա ժողովուրդն ենք մենք ու Նրա արոտի հոտը:*

Դպ 2 - *Խոստովանությամբ մտե՛ք Նրա դռներով, և Նրա սրահները՝ օրհնությամբ.*

Դպ 1 *Խոստովանեցե՛ք Տիրոջն ու Նրա անունը օրհնեցե՛ք:*

Դպ 2 - *Քաղցր է Տերը, Նրա ողորմությունը հավիտյան է, Նրա ճշմարտությունը՝ սերնդից սերունդ:*

Դպ 1 - *Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն.*

Դպ 2 - *Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Սրկ - *Այս սուրբ եկեղեցիով աղաչենք Տիրոջը, որպեսզի սրանով մեզ փրկի մեղքերից և Իր ողորմության շնորհիվ ապրեցնի մեզ. ամենակալ Տեր Աստված մեր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր:*

Քհ - *Այս տաճարում և աստվածընկալ ու պայծառացած սուրբ նշանների առջև և սուրբ վայրի առջև երկյուղածությամբ խոնարհվելով երկրպագում ենք և Քո սուրբ, հրաշալի և հաղթող տերությունը փառավորում ու Քեզ՝ Քո Հոր և Սուրբ Հոգու հետ, մատուցում ենք օրհնություն և փառք, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Քահանան նախասարկավագի հետ սաղմոս ասելով (Սաղմոս 42/43) հյուսիսային աստիճաններով բարձրանում է բեմ՝ սեղանի առջև:

Քհ - *Ես մտնելու եմ Աստծո սեղանի առջև, Աստծո մոտ, որ երջանկացնում է իմ երիտասարդությունը:*

Սրկ - *Դատի՛ր ինձ, Աստված, և դատաստանիս ժամին արդարացրու ինձ:*

Քհ - *Անսուրբ ազգերից, մեղավոր ու նենգավոր մարդուց փրկի՛ր ինձ:*

Սրկ - *Դու իմ զորացուցիչն ես, Աստված, ինչո՞ւ ինձ մոռացար, ինչո՞ւ եմ ես տխուր գնում, երբ թշնամին նեղում է ինձ:*

Քհ - *Առաքեա՛, Տէր, զլոյս Քո եւ զճշմարտութիւն Քո, զի առաջնորդեսցեն ինձ, եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս Քո:*

Սրկ - *Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:*

Քհ - *Խոստովան եղէց Քեզ օրհնութեամբ, Աստուած Աստուած իմ:*

Սրկ - *Արդ ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս, յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ Նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:*

Քհ - *Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:*

Սրկ - *Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. Օրհնեսցո՛ւք զամենակալն Աստուած, զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջ փառաբանութեան եւ երգել զերգս հոգեւորս. Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ եւ ողորմեա՛:

Քհ -*Ի յարկի Քում սրբութեան եւ ի տեղւոջ փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ զհրաշալի եւ զյաղթող զՏէրութիւնդ Քո օրհնեմք եւ փառաւորեմք. եւ Քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Իսկ եթէ եպիսկոպոս լինիցի խորհրդածուն, ածցէ ի վերայ լանջացն զպատուական եմիփորոնն, եւ մատուցեալ առ Ընծայարան Սեղանոյն, եւ ի ծունկս անկեալ առաջի սեղանոյն, յորդահոս արտասուօք լուռ եւ անմռունչ ասասցէ ի ծածուկ զաղօթս առ Սուրբ Հոգին, տնօրինիչ գործոյն:

Ս. ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅՆ ԲԱՆ ԼԳ., հատուած Դ, և բան լգ., հատուած Ե

Քհ- (ի ծածուկ) *Ամենակալ բարերար մարդասէր Աստուած բոլորից, յօրինող երեւութից եւ աներեւութից, փրկող եւ հաստատող, խնամող եւ խաղաղարար, Հօր հզօր Հոգի՛, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան՝ յանդիման եղեալ Քեզ Ահաւորիդ:*

Մատչիմք մեծաւ դողութեամբ, սաստիկ երկիւղիւ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ Քում անզննին զօրութեանդ, իբր Աթոռ-

Քհ - *Առաքի՛ր, Տե՛ր, Քո լույսն ու ճշմարտությունը, որպեսզի ինձ առաջնորդեն և հանեն Քո սուրբ լեռն ու օթևանը:*

Սրկ - *Ես մտնելու եմ Աստծո սեղանի առջև, Աստծո մոտ, որ երջանկացնում է իմ երիտասարդությունը:*

Քհ *Օրհնությամբ Քեզ եմ խոստովանում, Աստված, Աստվա՛ծ իմ:*

Սրկ - *Արդ, ինչո՞ւ ես տրտում, անձ իմ, կամ ինչո՞ւ ես ինձ խռովում. հուսա Աստծուն, խոստովանիր Նրան, իմ անձը փրկողն Աստված է:*

Քհ - *Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն.*

Սրկ - *Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը: Օրհնենք Ամենակալ Աստծուն, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հորը, որ արժանի արեց մեզ՝ կանգնելու փառաբանության տեղում և երգելու հոգևոր երգեր: Ամենակալ մեր Տեր Աստված, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր:

Քհ - *Քո սրբության հարկի տակ և փառաբանության վայրում, հրեշտակների բնակարանում և մարդկանց քավարանում, Աստվածընկալ և պայծառացած սուրբ նշանների և սուրբ սեղանի առջև խոնարհվելով՝ երկյուղածությամբ երկրպագում ենք և Քո սուրբ, հրաշալի և հաղթող տերությունը օրհնում ու փառավորում. և երկնային զորքերի հետ միասին մատուցում ենք օրհնություն և փառք Քեզ՝ Քո Հոր և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Իսկ եթե խորհրդակատարը եպիսկոպոս է, պետք է վրան գցի պատվական եմիփորոնը, մոտենա սեղանի ընծայարանին և ծնկի եկած, լուռ ու մունջ, հորդահոս արցունքներով աղոթի Սուրբ Հոգուն, որն ամեն մի գործի տնօրինողն է:

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ. Աղոթք առ Սուրբ Հոգին, Բան ԼԳ, հատ. Դ և ԼԳ, հատ. Ե

Քհ - *Ո՛վ ամենակալ, բարերար, մարդասեր Աստված ամենքի, անտեսանելիների և տեսանելիների հորինող, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար, Հոր հզոր Հոգի, բազկատարած մաղթանքների հառաչալից գոչմամբ ներկայանալով ահավորիդ՝ հայցում ենք:*

Ահով ու դողով և սաստիկ երկյուղով մոտենում ենք՝ մատուցելու Քո անզննելի զորությանը նախ այս բանավոր պատարագը, իբրև [Հոր] *աթոռակցի, փառակցի և արարչակցի՝ Քո հայրենի անկողոպտելի պատվիդ,*

ռակցի, Փառակցի եւ Արարչակցի հայրենի անկապուտ պատուոյդ, եւ քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ Էմմանուէլի՝ զՔեզ Առաքչի, Փրկչի եւ Կենդանատուի եւ Արարչի ամենայնի: Ի ձեռն Քո ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միասնական Աստուածութեանդ, Յորոց մի եւ Դու ճանաչիս անհաս: Քեւ եւ ի ձեռն Քո առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալսն եւ զգալոցսն, զեղեալսն եւ զոչ գոյացեալսն անսուերաբար բարբառով բանի վերապատմեցին:

Հոգի Աստուծոյ քարոզեալ զՔեզ Մովսիսի, որ ի գնալն Քո ի վերայ ջրոցն, անպարագիր զօրութիւն, ահեղ շրջարկութեամբ տածողականաւ, թեւապարփակ պաշտպանողօրէն գթասիրեալ ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր:

Յոր կերպարան օրինակութեան նախ քան զկառուցանել զլոյծդ մածուած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր կարող տիրապէս զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն էից՝ յանէից: Քեւ ստեղծանին ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ ի Քէն՝ յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, եւ օր առաջին երկրին կենդանեաց: Քեզ հնազանդեցաւ միութեամբ կամացն որպէս Հօրն Իւրում ազգակիցն Քո՝ Էակիցն Հօր՝ անդրանիկն Որդի մերովս կերպիւ. զՔեզ աւետարանեաց ճշմարիտ Աստուած հաւասար եւ համագոյ Հօր Իւր հզօրի, եւ զառ ի Քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց, եւ իբր զաստուածամարտիցն զՔո հեստելոցն չարաբանական բերանս կարկեաց եւ զիւրն չնորհեաց Արդարն եւ Անարատն՝ Գտիչն ամենայնի, որ վասն մեղաց մերոց մատնեցաւ, եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ: Նմա փառք ի ձեռն Քո, եւ Քեզ բարեբանութիւն ընդ Հօր ամենակալի, յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Դարձեալ կրկնեցից ի նոյն կարգ բանի, մինչեւ վստահութիւն վերահայեցողութեան լուսոյ՝ հրաշապէս յայտնեսցի, ազդեալ աւետարանել վերստին զկրկին զխաղաղութիւն:

Աղաչեմք եւ աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ եւ անստեղծ անժամանակ Հոգւոյդ գթածի, որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հեծութիւնս՝ առ

և Էմմանուելի Հոր, Քեզ Առաքողի, փրկչի, կենդանատուի և ամեն բաների արարչի ամենակատար կամքի խորածածուկ խորհուրդները քննողի: Քո միջոցով մեզ ծանուցվեց միասնական Աստվածությանդ երրյակ անձնավորությունը, որոնցից մեկն էլ Դու ես ճանաչվում, Ո՜վ անհասանելի: Քեզնով և Քո միջոցով նահապետական տոհմի առաջին շառավիղները, որոնք տեսանող են անվանակոչվում, անցյալն ու գալիքը, եղածներն ու չգոյացածները պայծառ խոսքով վերապատմեցին:

Մովսեսը Քեզ Աստծո Հոգի քարոզեց, Դու որ ջրերի վրա գնալու ժամանակ, Ով անպարագիր զորություն, թեւապարփակ պաշտպանողության հոգածության ահեղ շրջարկությամբ գութ ու գորով ցույց տալով նորածին արարչությանը, ավազանի խորհրդին ծանոթացրիր: Որի կերպարանքի օրինակով նախքան վերջին վարագույրիդ հալհլուկ մածվածքը կառուցելը, տիրական կարողությամբ անէությունից հորինեցիր բոլոր գոյությունների և էությունների բովանդակ բնությունը:

Քեզանից եղածները հարության նորոգությամբ Քեզնով են ստեղծվում այն պահին, որն այս կյանքի վերջին օրն է և կենդանիների երկրի առաջին օրը: Քո ազգակիցը և Հոր էակից անդրանիկ Որդին Իր կամքի միությամբ Քեզ հնազանդվեց, ինչպես Իր Հորը, և մեր կերպարանքը առած Քեզ ավետարանեց, որպես Իր հզոր Հորը հավասար և համագո ճշմարիտ Աստված, և Քեզ ուղղված հայհոյությունը անքավելի մեղք հայտարարեց և Քեզ անհնազանդ աստվածամարտների չարախոս բերանը փակեց, մինչդեռ Իր դեմ եղածը ներեց Արդարը, Անարատն ու ամենքին Գտնողը, որ մեր մեղքերի համար մատնվեց և մեզ արդարացնելու համար հարություն առավ:

Քո միջոցով Նրան փառք և Քեզ բարեբանություն՝ ամենակալ Հոր հետ հավիտյանս հավիտենից. ամեն:

Դարձյալ պիտի կրկնեմ խոսքերը նույն կարգով, մինչև լուսո վստահությունը հրաշապես հայտնվի իմ մեջ, որպեսզի ազդվելով վերստին ավետարանեմ կրկնակի խաղաղություն:

Աղաչում և արտասվալից հառաչանքով աղերսում ենք մեր բոլոր էությամբ փառավորված Արարչիդ, անապական, անստեղծ, անժամանակ և գթացող Հոգուդ, որ անմռունչ հեծությամբ բարեխոսում ես մեզ համար

ողորմածդ Հայր, որ զսուրբսն պահես, եւ զմեղուցեալսն մաքրես եւ տաճարս կազմես կենդանի եւ կեցուցիչ կամաց բարձեալդ Հօր: Արդ, ազատեա՛ զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ո՛չ է հաճոյ Քումդ բնակութեան. եւ մի՛ չիջցին առ ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք ի տեսականացս աչաց իմաստից. վասն զի զՔեզ ուսաք միանալ ի մեզ ի ձեռն աղօթից եւ ընտիր վարուց խնկելոց:

Եւ քանզի մինդ յԵրրորդութենէդ պատարագի, եւ միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ Անդրանկի Իւրոյ. իսկ Դու ընկալցիս զմեր պաղատանս, եւ յարդարեսցես զմեզ օթեւանս պատուականս ամենայն պատրաստութեամբ ի վայելումն ճաշակման երկնաւոր Գառինդ, առանց պատժոց դատապարտութեան՝ ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան:

Եւ հալեսցի ի հրոյս յասմանէ գայթակղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն՝ ի ձեռն ունելեացն մատուցման, զի յամենայնի Քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս Որդւովդ Աստուծոյ՝ Հօր քաղցրութիւն, որ զանառակ որդին մերձեցոյց ի հայրենի ժառանգութիւնն, եւ զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն՝ արդարոցն երանութեան:

Այո՛, այո՛, եւ ես մի եմ ի նոցանէ. եւ զիս ընկա՛լ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք Քո ապրեալ, զարեամբ Քրիստոսի ստացեալս: Զի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի Քո Աստուածութիւնդ՝ ընդ Հօր փառաւորեալ համապատուաբար ի մի կամս՝ եւ ի մի իշխանութիւն գովութեան:

ՍՐԿ *-Օրհնեա՛, տէր:*

ՔԻ - (ի ձայն) *Զի Քո՛ է գթութիւն եւ կարողութիւն եւ մարդասիրութիւն, զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Եւ ապա ձգեն զվարագոյրն եւ դպիրքն եղանակեն ըստ պատշաճի աւուր: Զընտրեալն որ ասես մեղեդի մի. ասեր:

ԴՊ *-Ընտրեալդ յԱստուծոյ, ո՛վ երջանիկ սուրբ քահանայ: Նմանեալ Ահարոնի եւ Մովսէսի մարգարէին, այնմ, որ զգեստուցն էր յօրինող, զոր Ահարոն միշտ զգենոյր: Յօրինէր զպատմուճանն, զոր ի չորից*

Քո ողորմած Հոր առջև, որ սրբերին պահպանում ես և մեղավորներին մաքրում և Քո բարձրյալ Հոր ապրեցնող ու կենդանի կամքի տաճարներ կազմում: Այժմ մեզ ազատի՛ր ամեն անմաքուր գործերից, որոնք հաճելի չեն Քո բնակությանը, և Քո շնորհների լույսի շողերը թող չհանգեն մեր մտքի տեսության աչքերից, քանի որ սովորեցինք, որ Դու մեզ հետ միանում ես մեր ընտիր խնկաբույր վարքի և աղոթքի միջոցով:

Եվ որովհետև Երրորդությունիցդ մեկը պատարագվում է, և մյուսն՝ ընդունում, և հաշտվելով մեզ հետ Իր անդրանիկի հաշտարար արյամբ, Դու էլ ընդունի՛ր մեր պաղատանքը և մեզ համար պատվական ու ամենապատրաստ օթևաններ հարդարիր առանց պատժի դատապարտության երկնավոր Գառանդ ճաշակումը վայելելու համար և ընդունելու նոր փրկության կյանքի այս անմահական մանանան:

Եվ թող այս հրով հալվեն մեր գայթակղությունները, ինչպես մարգարեինը՝ ունելիներով մատուցված կենդանախարույկ կայծակով, որպեսզի ամեն ինչում քարոզվի Քո գթությունը, ինչպես Աստծու Որդվդ՝ Հոր քաղցրությունը, որ անառակ որդուն մոտեցրեց հայրենի ժառանգությանը և պոռնիկներին առաջնորդեց դեպի արդարների երանության երկնային արքայությունը:

Այո՛, այո՛, ես էլ նրանցից մեկն եմ. ինձ էլ ընդունի՛ր նրանց հետ, որպես մեծ մարդասիրությանդ կարոտողի, Քո շնորհներով ապրող և Քրիստոսի արյամբ գնվածիս, որպեսզի այս ամեն ինչով ամեն ինչի մեջ ճանաչվի Քո աստվածությունը, Հոր հետ համապատվաբար փառավորվելով մեկ կամքով և մեկ գովելի իշխանությամբ:

ՍՐԿ *-Օրհնի՛ր, տե՛ր:*

ՔԻ - (եղանակով) *Որովհետև Քոնն են գթությունը, կարողությունը, մարդասիրությունը, զորությունը և փառքը, հավիտյանս հավիտենից. ամեն:*

Եվ ապա փակում են վարագույրը և դպիրներն օրվան պատշաճող մեղեդի են երգում: Ընտրյալը ասելիս մեղեդի չեն ասում:

ԴՊ - *Աստծու ընտրյալ, ով երջանիկ սուրբ քահանա, որ նման ես Ահարոնին և Մովսես մարգարեին՝ նրան ով զգեստների հորինողն էր, որով Ահարոնը միշտ զգեստավորված էր: Հորինում էր պատմուճա-*

կազմեալ նիւթոց. ի կարմրոյ, ի կապուտոյ, ի բեհեզոյ, ի ծիրանւոյ: Թել զթելն յօրինէր, կարգն առաջին էր կարկեհան: Եւ օծումն գրապանին շուրջանակի բոլորաշէն: Եւ յընթացս գարշապարին հնչէր երկիր, ցնծայր խորանն: Արդ ի նոյն նմանութեան Քրիստոս զմեր Տէրս յօրինէ: Յորժամ մտցես ի սուրբ խորանն, անդ յիշեսցես զմեր ննջեցեալսն: Յորժամ առնես զպատարագն, յիշեա՛ եւ զիս զբազմամեղսն, զի եւ մեզ ողորմեսցի ի միւս անգամ Իւր գալստեանն:

Հօրն փառք, Որդւոյն պատիւ եւ Սուրբ Հոգւոյն այժմ յաւիտեան, յաւիտեանս յաւիտենից Քրիստոս օրհնեալ ի համայնից:

ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

Պատարագիչն գնացեալ ի խորհրդանոցն, եւ նախասարկաւագն մատուցեալ զնշխարն ասելով:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՆՇԽԱՐԻ

Սրկ ~ (ի ցած) *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*
Ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա:

Զոր առեալ քահանայն ի ձեռս, ասասցէ:

Քհ ~ (ի ցած) *Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Եւ դիցէ ի մաղզմայն ասելով:

Քհ ~ (ի ցած) *Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որ բազմեալ հանգչի յանարուեստ աթոռ. զմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան. † օրհնեցէ՛ք, գովեցէ՛ք եւ բարձր արարէ՛ք զնա յաւիտեան:*

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԳԻՆԻՈՅ

Եւ ապա մատուցեալ նախասարկաւագն զգինին ասելով:

Սրկ ~ (ի ցած) *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*
Ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա:

նը, որը չորս նյութից էր կազմված՝ կարմրից, կապույտից, բեհեզից և ծիրանից: Թել առ թել էր հյուսում և առաջին շարքը կարկեհանն էր: Եվ գրապանի օծումը շուրջանակի բոլորաձև շինված: Եվ գարշապարի ընթացքի հետ հնչում էր երկիրը, ցնծում էր խորանը: Արդ, այս նույն նմանությամբ Քրիստոս մեր Տիրոջն է հարդարում:

Երբ մտնես սուրբ խորան, այնտեղ հիշիր մեր ննջեցյալներին: Երբ պատարագ մատուցես, հիշիր և ինձ՝ բազմամեղիս, որպեսզի և մեզ ողորմի Իր մյուս գալստյանը:

Հորը՝ փառք, Որդուն և Սուրբ Հոգուն՝ պատիվ այժմ և հավիտյան: Հավիտյանս հավիտենից Քրիստոս օրհնված է ամենից:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պատարագիչը գնում է խորհրդանոց և նախասարկավագը մատուցում է նշխարն՝ ասելով.

ՆՇԽԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Սրկ ~ (ցածր) *Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը:*
Ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր մեզ:

Որը քահանան, վերցնելով ձեռքն, խաչակնքում է և ասում.

Քհ ~ (ցածր) *Օրհնություն և փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Եվ դնում է մաղզմայի վրա՝ ասելով.

Քհ ~ (ցածր) *Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հիշատակի համար, Ով բազմած հանգչում է անձեռակերտ աթոռին, Ով մարդկային ցեղի համար հանձն առավ խաչի մահը, օրհնեցե՛ք, գովեցե՛ք և հավիտյան բարձրացրե՛ք Նրան:*

ԳԻՆՈՒ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Եվ ապա նախասարկավագը մատուցում է գինին՝ ասելով:

Սրկ ~ (ցածր) *Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը:*
Ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր մեզ:

Զոր առեալ քահանային, ասասցէ:

Քհ ~ (ի ցած) *Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Եւ հեղցէ զգինին խաչանիշ ի սկիհն ասելով:

Քհ ~ (ի ցած) *Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեառն Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որ ի կողահոս արեան աղբերէն նորոգեցան արարածք եւ անմահացան. † օրհնեցէ՛ք, գովեցէ՛ք եւ բարձր արարէ՛ք զնա յաւիտեան:*

Առեալ քահանային ի ձեռս զմաղզմայն հանդերձ նշխարաւն՝ ասասցէ ի ծածուկ զաղօթս Յովհաննու Ոսկեբերանին:

Քհ ~ (ի ծածուկ) *Տէր Աստուած մեր, որ զերկնաւոր Հացդ՝ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս զկերակուրդ ամենայն աշխարհի՝ առաքեցեր Փրկիչ եւ Կեցուցիչ եւ Բարերար՝ օրհնել եւ սրբել զմեզ. Ինքնին Դու, Տէ՛ր, † օրհնեա՛ եւ այժմ զառաջադրութիւնս զայս:*

Դիցէ զմաղզմայն հանդերձ նշխարաւ ի վերայ սկհոյն ասելով:

Ընկա՛լ զսա յերկնային Քո սեղանդ: Յիշեա՛ որպէս բարերար եւ մարդասէր զմատուցողս եւ վասն որոց մատուցանի: Եւ զմեզ անդատապարտ պահեա՛ ի քահանայագործութիւն աստուածային խորհրդոց Քոց. զի սուրբ եւ փառաւոր է ամենապատիւ մեծ վայելչութիւն փառացդ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ աքողեսցէ քահանայն զսկիհն՝ ասելով ընդ սարկաւագին տուն առ տուն ՍԱՂՄՈՍ Առաջադրութեան (ՂԲ):

Քհ ~*Ալէլուիա, ալէլուիա. Տէր թագաւորեաց՝ վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զօրութիւն՝ ընդ մէջ Իւր ածաւ:*

Սրկ ~*Հաստատեաց զաշխարհ զի մի՛ սասանեսցի. պատրաստ է աթոռ Քո ի սկզբանէ, յաւիտեանս Դու ես:*

Քհ ~*Ամբարձան գետք, Տէր, եւ ամբարձին գետք զձայնս իւրեանց,*

Որը վերցնելով խաչակնքում է և ասում:

Քհ ~ (ցածր) *Օրհնություն և փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Եվ գինին խաչաձև լցնում է սկիհի մեջ՝ ասելով.

Քհ ~ (ցածր) *Մեր Տեր Աստծո և մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի փրկագործ տնօրինության հիշատակի համար, Ում կողից հոսած արյան աղբյուրից նորոգվեցին արարածները և անմահացան, օրհնեցե՛ք, գովեցե՛ք և հավիտյան բարձրացե՛ք Նրան:*

Մաղզման նշխարով հանդերձ ձեռքը վերցնելով՝ քահանան ծածուկ ասում Հովհաննես Ոսկեբերանի աղոթքը.

Քհ ~ (ծածուկ) *Տեր Աստված մեր, Դու, որ երկնային հացդ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ ամբողջ աշխարհի կերակուրը ուղարկեցիր որպես փրկիչ, ապրեցնող և բարերար՝ մեզ օրհնելու և սրբելու համար, Դու Ինքդ, Տե՛ր, օրհնի՛ր հիմա այս առաջադրությունը:*

Մաղման նշխարով դնում է սկիհի վրա՝ ասելով.

Ընդունի՛ր սա Քո երկնային սեղանին: Եվ իբրև բարերար ու մարդասեր, հիշի՛ր մատուցողներին և նրանց, ում համար մատուցվում է: Եվ մեզ պահի՛ր առանց դատապարտության Քո աստվածային խորհուրդների քահանայագործության մեջ, քանզի Հոր, Որդու և Սուրբ Հոգու փառքի ամենապատիվ մեծ վայելչությունը սուրբ ու փառավոր է, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Եվ քահանան աքողում է սկիհը, սարկավագի հետ տուն առ տուն արտասանելով Առաջադրության սաղմոսը (Սաղմոս 92/93-րդ) սաղմոսը:

Քհ ~ *Ալելուիա, ալելուիա: Տերը թագավորեց, վայելչություն հագավ, զորություն հագավ Տերն ու գոտևորվեց:*

Սրկ ~ *Հաստատեց աշխարհն, որ չսասանվի: Սկիզբից է պատրաստված է գահը Քո, և հավիտյան ես Դու:*

Քհ ~ *Բարձրացան գետերը, Տե՛ր, գետերը բարձրացրին ձայնն իրենց. գե-*

յարիցեն գետք ի գնացս իւրեանց:

Սրկ *~Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի եղեն զբօսանք ծովու:*

Քհ *~Սքանչելի ես Դու, Տէր, ի բարձունս, վկայութեանց Քոց մեք յոյժ հաւատացաք:*

Սրկ *~Տան Քում վայելէ սրբութիւն, Տէր, ընդ երկայն աւուրս:*

Քհ *~Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:*

Սրկ *~Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Սրկ *~Օրհնեա՛, տէր* (մեղմ ձայնիւ. երիցս)*:*

Քահանայն երիցս խաչակնքեսցէ ի վերայ սկհոյն ասելով:

Քհ *~ Հոգին Սուրբ † եկեսցէ ի քեզ. եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քոյ:*

ՊԱՇՏՕՆ ՃԱՇՈՒ
ԽՆԿԱՐԿՈՒԹԻՒՆ

Նախասարկաւագն բերցէ զբուրվառն, եւ քահանայն արկցէ զխունկ եւ առ սկիհն խնկարկելով ասասցէ:

Քհ ~ (ի ծածուկ) *Խունկ մատուցանեմ առաջի Քո, Քրիստոս, բուրումն հոգեւորական: Ընկա՛լ ի սուրբ, յերկնային եւ յիմանալի Քո մատուցարանդ ի հոտ անուշից: Առաքեա՛ առ մեզ փոխարէն զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ. եւ Քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Բացցի վարագոյրն, եւ դպիրք սկսանիցին զշարական խնկոցն «Բարեխօսութեամբ». մինչ նոքա երգեն, քահանայն՝ առաջի իւր ունելով զնախասարկաւագն, որ ունիցի խաչ եւ մոմ ի ձեռն, շուրջ դարձցի զսուրբ սեղանովն, եւ եկեալ խնկարկեսցէ առաջի սեղանոյն, եւ իջցէ ի վայր ընդ հիւսիսային աստիճանս բեմին, եւ քշոցակիրքն զկնի նորա, եւ խնկարկեալ որոց իցեն ի դասու՝ ելցէ ի բեմն ընդ հարաւային աստիճանս:

Իսկ եթե թափօր լինիցի, դպիրքն երգելով «զԲարեխօսութեամբն» մտցեն ի մէջ ժողովրդեան ի հիւսիսոյ կողմանէ, եւ քահանայն հանդերձ սարկաւագօք զկնի նոցա խնկարկելով առ ժողովուրդն շուրջանակի, մինչեւ եկեալ մտցեն ի ձախակողման դասն. նախա-

տերը պիտի հորդեն իրենց հունից դուրս:

Սրկ *~ Առատ ջրի ձայնից ծովի ալիքները սքանչելի դարձան:*

Քհ *~ Սքանչելի ես Դու բարձունքներում, Տե՛ր: Մենք անչափ հավատացինք Քո վկայություններին:*

Սրկ *~ Քո տանը վայել է սրբություն, Տեր, երկար օրեր:*

Քհ *~ Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն:*

Սրկ *~ Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Սրկ *~ Օրհնի՛ր, տե՛ր* (մեղմ ձայնով, երեք անգամ)*:*

Քահանան խաչակնքում է սկիհի վրա՝ երեք անգամ կրկնելով.

Քհ *~ Սուրբ Հոգին թող գա քո վրա, և Բարձրյալի զորությունը հովանի լինի քեզ:*

ՃԱՇՈՒ ՊԱՇՏՈՆ
ԽՆԿԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Նախասարկավագը բերում է բուրվառը, քահանան խունկ է լցնում և սկիհին խնկարկելով ասում է.

Քհ ~ (ծածուկ) *Ո՛վ Քրիստոս, խունկ եմ մատուցում Քո առաջ, որպես հոգևոր բուրմունք: Որպես անուշահոտություն, ընդունի՛ր Քո երկնային և իմանալի սուրբ մատուցարանը և փոխարենն ուղարկի՛ր մեզ Քո Սուրբ Հոգու շնորհներն ու պարգևները: Եվ Քեզ փառք ենք մատուցում, նաև Հորը և Քո Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Բացվում է վարագույրը և դպիրները սկսում են խնկարկման «Բարեխոսությամբ» շարականը. մինչ նրանք երգում են, քահանան՝ իր դիմաց ունենալով նախասարկավագին, որը ձեռքում խաչ և մոմ ունի, պտտվում է սուրբ սեղանի շուրջը և գալիս խնկարկում է սեղանի առաջ և հյուսիսային աստիճաններով իջնում է բեմից և քշոցակիրները նրա հետևից, և խնկարկելով դասում կանգնածներին, հարավային աստիճաններով բարձրանում է բեմ:

Իսկ եթե թափոր է, դպիրները, երգելով «Բարեխոսությամբը», հյուսիսային կողմից մտնում են ժողովրդի մեջ և քահանան նրանց հետևից՝ սարկավագների հետ միասին, շուրջանակի խնկարկելով ժողովրդին, մինչև որ գալիս մտնում են ձախակողմյան դասը.

սարկաւագն կացցէ առաջի բեմին, եւ քահանայն հանդերձ քշոցակրօք ելցէ ի վեր ընդ հարաւային աստիճանսն, եւ խնկարկեալ երկրպագեսցէ սուրբ սեղանոյն: Սարկաւագն առեալ զբուրվառն ի քահանայէն, տացէ նախասարկաւագին որ կայ առաջի բեմին յատեանն, եւ առեալ ի նմանէ զխաչն դիցէ յաստիճան սեղանոյն:

Շարական խնկարկութեան Սրբոյ Պատարագին

[ԳԿ] *Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարիս, ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշտման պաղատանաց առաջիկայ սուրբ պատարագիս, խնկօք անուշիւք խումբ առեալ պարեմք ի վերնայարկ սրահս խորանիս:*

Ուղղութեամբ ընկա՛լ զաղօթս մեր, որպէս բուրումն անուշահոտ խնկոց, տաշխից եւ կինամոնաց, եւ զմատուցողքս պահեա՛ սրբութեամբ միշտ եւ հանապազ Քեզ սպասաւորել:

Բարեխօսութեամբ մօր Քոյ եւ կուսի, ընկա՛լ զաղաչանս Քոց պաշտօնէից. որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի արեամբ Քո, Քրիստոս, եւ ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զդասս առաքելոց եւ մարգարէից, սուրբ վարդապետաց:

Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց, խունկ մատուցանեմք առաջի Քո Տէ՛ր, յօրինակ ըստ հնումն Զաքարիայ: Ընկա՛լ առ ի մէնջ զխնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի, զ Նոյի եւ զ Աբրահամու:

Բարեխօսութեամբ վերին Քո զօրացդ միշտ անշարժ պահեա՛ զաթոռ Հայկազնեայս:

Խնդա՛ յոյժ դուստր լուսոյ, մայր սուրբ կաթուղիկէ, մանկամբք քո Սիոն: Զարդարեալ պճնեա՛ հարսն պանծալի, երկնանման լուսաճեմ խորան, զի օծեալն Աստուած էնն ի յէնն անծախապէս ի Քեզ միշտ պատարագի Հօր ի հաշտութիւն, մեզ ի քաւութիւն բաշխէ զմարմին եւ զարիւն Իւր սուրբ վասն Իւր կատարման սուրբ տնօրէնութեանն, շնորհէ զթողութիւն կանգնողի տաճարիս:

Զանապական կոյսն Մարիամ Աստուածածին խոստովանի Սուրբ Եկեղեցի. ուստի տուաւ հացն անմահութեան եւ բաժակ մեզ ուրախարար. տո՛ւք օրհնութիւն Նմա հոգեւոր երգով:

նախասարկավագը կանգնում է բեմի դիմաց և քահանան քշոցակիրների հետ բարձրանում է հարավային աստիճաններով և խնկարկելով երկրպագում է սուրբ սեղանին: Սարկավագը քահանայից վերցնելով բուրվառը տալիս է նախասարկավագին, որը կանգնած է բեմի առաջ՝ ատյանում և վերցնելով նրանից խաչը՝ դնում է սեղանի աստիճանին:

Շարական խնկարկության սուրբ պատարագի

Այս ուխտ նվիրելու հարկում՝ Տիրոջ տաճարի մեջ, առաջիկա սուրբ պատարագիս խորհուրդը պաղատանքով և պաշտմամբ կատարելու համար այստեղ հավաքվածներս, անուշահոտ խնկերով խմբված պարում ենք խորանի վերնահարկի սրահներում:

Տե՛ր, ուղղությամբ ընդունի՛ր մեր աղոթքները իբրև անուշահոտ խնկերի, ստաշխների և կինամոնների բուրմունք և մատուցողներիս սրբությամբ պահի՛ր միշտ ու անընդհատ՝ Քեզ սպասավորելու համար:

Տե՛ր, Քո Մոր և Կույսի բարեխոսությամբ ընդունի՛ր Քո պաշտոնյաների աղաչանքները: Ո՛վ, Քրիստո՛ս, որ սուրբ Եկեղեցին Քո արյամբ երկնքից ավելի պայծառացրիր և երկնայինների նման սրա մեջ առաքյալների, մարգարեների և վարդապետների դասեր կարգեցիր:

Այսօր քահանաների, սարկավագների, դպիրների և կրոնավորների դասերը հավաքված՝ խունկ ենք մատուցում Քո առջև, ինչպես հնում Զաքարիան: Ընդունի՛ր մեզանից խնկանվեր մաղթանքները, ինչպես Աբելի, Նոյի և Աբրահամի պատարագները:

Քո վերին զորքերի բարեխոսությամբ միշտ անշարժ պահի՛ր Հայկազյաններիս աթոռը:

Շատ ուրախացիր լույսի դուստր, մայր սուրբ կաթողիկե, քո զավակներով Սիոն: Պճնվի՛ր զարդարված՝ պանծալի հարս, երկնանման լուսաճեմ խորան, քանի որ Օծյալն Աստված էնն, էի մեջ, անսպառ կերպով միշտ քո մեջ է պատարագվում՝ Հոր հետ հաշտեցնելու համար, Իր Սուրբ Մարմինը և Արյունը մեզ որպես քավություն է բաշխում, Իր սուրբ տնօրինությունը կատարելու համար և թողություն է շնորհում տաճարը կառուցողներին:

Սուրբ Եկեղեցին անապական կույս Մարիամին Աստվածածնին է դավանում, ումից մեզ տրվեց անմահության հացը և ուրախացնող բաժակը, տվե՛ք նրան օրհնություն հոգևոր երգով:

ՕՐԵՆՔ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ (ՍԿԻԶԲՆ)

Եւ երիցս երկրպագեալք քահանայն համբուրեսցէ զսեղանն: Յաւարտ շարականի խնկոցն ասասցէ նախասարկաւագն:

Սրկ - *Օրհնեա՛, տէր:*

Քհ - (ի ձայն) *Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Դպիրքն ասասցեն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն:

Դպ - *Միածին Որդի եւ Բանդ Աստուած եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն: Անփոփոխելիդ, մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած մեր. մահուամբ զմահ կոխեցեր. մինդ ի Սրբոյ Երրորդութենէն, փառաւորակից ընդ Հօր եւ Սրբոյ Հոգւոյն, կեցո՛ զմեզ:*

Սրկ - *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛: Օրհնեա՛, տէ՛ր:*

Քհ - *Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

† Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ - *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ - *Աստուծոյ երկիրպագեսցուք:*

Դպ - *Առաջի Քո Տէր:*

Նախասարկաւագն ելցէ ի վեր ի բեմն:

Քհ - (ի ձայն) *Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքննին է եւ փառքդ՝ անհասանելի: Որոյ ողորմութիւնդ անչափ է եւ գթութիւնդ՝ անբաւ: Դու ըստ առատ մարդասիրութեանդ Քում, նայեա՛ց ի ժողովուրդս Քո եւ ի տաճարս յայս սուրբ:*

Եւ արա՛ ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւն Քո եւ զգթութիւն: Զի Քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ ասասցեն դպիրքն զճաշու սաղմոս (փոխ):

ՕՐԵՆՔ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ (ՍԿԻԶԲ)

Եվ երեք անգամ երկրպագելով քահանան համբուրում է սեղանը: Խնկարկման շարականի ավարտին նախասարկավագն ասում է.

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - *Օրհնյալ լինի Հոր, Որդու և Սուրբ Հոգու թագավորությունը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Դպիրներն ասում են օրվան պատշաճող ժամամուտը:

Դպ - *Ո՛վ Բանդ Աստված, Միածին Որդի և անմահ էություն, որ հանձն առար մարմնանալ սրբուհի Աստվածածնից և միշտ Կույսից: Մեր Քրիստոս Աստված, Դու՝ անփոփոխելիդ, մարդ լինելով, խաչվեցիր և մահվամբ մահը խափանեցիր: Դու, որ մեկն ես Սուրբ Երրորդությունից և փառակից ես Քո Հորն ու Սուրբ Հոգուն, ապրեցրո՛ւ մեզ:*

Սրկ - *Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը. ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր: Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - *Օրհնություն և փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Խաղաղություն ամենքին:

Դպ - *Եվ քո հոգուն:*

Սրկ - *Աստծուն երկրպագենք:*

Դպ - *Քո առաջ, Տե՛ր:*

Նախասարկավագը բարձրանում է բեմ:

Քհ - (եղանակով) *Մեր Տեր Աստված, Քո կարողությունն անքննելի է և փառքդ՝ անհասանելի, ողորմությունդ անչափ է և գթությունդ անբավ: Դու, ըստ Քո առատ մարդասիրության, նայի՛ր Քո ժողովրդին և այս սուրբ տաճարին:*

Եվ մեզ ու մեր աղոթակիցներին առատորեն շնորհի՛ր Քո ողորմությունը և գթությունը, որովհետև Քեզ վայել է փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Եվ դպիրներն ասում են ճաշու սաղմոսը

Դպ ~ *Տէր թագաւորեաց՝ վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զօրութիւն՝ ընդ մէջ Իւր ածաւ: Հաստատեաց զաշխարհ զի մի սասանեսցի:*

Եւ զշարական ըստ աւուր պատշաճի.

Զթագաւորն փառաց Քրիստոս, որ վասն մեր մարմնացաւ ի սրբոյ Կուսէն եւ խաչի համբերելով՝ միաբանութեամբ երգով բարեբանեսցուք:

Որ զթաղումն երեքօրեայ յանձն էառ յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ՝ միաբանութեամբ երգով բարեբանեսցուք:

Կարողապէս զդրունս դժոխոց խորտակեաց, եկեղեցւոյ Իւրում զգեցոյց զմեծ վայելչութիւն, միաբանութեամբ երգով բարեբանեսցուք:

Եւ յերգելն նոցա, քահանայն աասցէ զաղօթս:

Քհ ~ (ի ծածուկ) *Տէր Աստուած մեր, կեցո՛ զժողովուրդս Քո, եւ օրհնեա՛ զժառանգութիւնս Քո. զլրումն եկեղեցւոյ Քո պահեա՛, սրբեա՛ զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան Քո: Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ Քով, եւ մի՛ թողուր զյուսացեալսս ի Քեզ: Զի Քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:*

† Խաղաղութիւն ամենեցուն:

Որ հասարակաց զայս եւ միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, եւ զերկուց եւ զերից միաձայնելոց յանուն Քո զխնդրուածս պարգեւել խոստացար: Դու եւ այժմ զծառայից Քոց զխնդրուածս առ ի յօգուտն կատարեա՛, շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն Քումդ ճշմարտութեան, եւ ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս պարգեւելով: Զի բարերար եւ մարդասէր ես Աստուած, եւ Քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Տերը թագավորեց, վայելչություն հագավ, Տերը զորություն հագավ և Իր մեջքը գոտեպնդեց: Աշխարհն հաստատեց, որ չսասանվի:

Ճաշու շարական օրվան պատշաճող:

Փառքի թագավոր Քրիստոսին, որ մեզ համար մարմնացավ Սուրբ Կույսից և խաչի (չարչարանքին) *տոկաց, բոլորս միաբերան երգելով փառաբանենք:*

Որ հանձն առավ երեքօրյա թաղումը և մեռելներից իշխանությամբ հարություն առավ, միաբերան երգելով փառաբանենք:

Որ զորությամբ դժոխքի դռները խորտակեց և իր եկեղեցուն մեծ վայելչություն հագցրեց, միաբերան երգելով փառաբանենք:

Ու մինչ նրանք երգում են, քահանան ծածուկ աղոթում է:

Քհ ~ (ծածուկ) *Մեր Տեր Աստված, ապրեցրո՛ւ Քո ժողովրդին, օրհնի՛ր Քո ժառանգությունը, պահի՛ր Քո Եկեղեցու ամբողջությունը, սրբի՛ր նրանց, ովքեր Քո տան վայելչությունը սիրով ողջունեցին: Դու Քո Աստվածային զորությամբ փառավորի՛ր մեզ և մի՛ լքիր մեզ՝ Քեզ հուսացողներիս, քանզի Քոնն են կարողությունը, զորությունը և փառքը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Խաղաղություն ամենքին:

Դու, որ մեզ բոլորիս սովորեցրիր միաձայն աղոթել ու հրապարակայնորեն աղոթել և խոստացար Քո անվամբ միաբանված երկու կամ երեք հոգու խնդրանքները շնորհել, այժմ էլ ի օգուտ Քո ծառաների կատարի՛ր նրանց խնդրանքները, մեզ շնորհելով այս ժամանակներում Քո ճշմարտության գիտությունը և հանդերձյալում՝ պարգևելով հավիտենական կյանք, որովհետև Դու բարերար ու մարդասեր Աստված ես, և Քեզ վայել են փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՄՈՒՏՔ ՃԱՇՈՒ

Եւ ի վերջին տան շարականին՝ քահանայն երկրպագելով սեղանոյն՝ առցէ զսուրբ աւետարանն ի ձեռս, եւ ասասցէ զաղօթս զայս:

Քհ - (ի ծածուկ) *Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս եւ զզի-նուորութիւնս հրեշտակաց եւ հրեշտակապետաց ի սպասաւորու-թիւն փառաց Քոց:*

Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել եւ սրբոց հրեշտակաց եւ լինել պաշտօնակից մեզ եւ փառաբանակից Քում բարերարութեանդ:

Սրկ - *Օրհնեա՛, տէր:*

Քհ - (ի ձայն) *Զի Քո՛ է կարողութիւն եւ զօրութիւն, եւ փառք յաւիտեանս. Ամէն:* (Եւ համբուրեսցեն զսեղանն)*:*

Սրկ - *Պռոսխումէ:*

Դպ - *Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա՛ մեզ* (երիցս կրկնեա՛)*:*

Իսկ քահանայն համբուրելով զսուրբ աւետարանն տացէ սարկաւագին. որ բարձրացեալ վերաբերեսցէ շուրջ զսեղանովն ի հիւսիսոյ ընդ հարաւ: Եւ ի վերաբերելն քահանայն ասասցէ:

Քհ - (ի ծածուկ) *Աստուած Սուրբ, որ ի սուրբս հանգուցեալ ես, եւ երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զՔեզ եւ քերովբէք փառաբանեն, եւ ամենայն երկնային զօրութիւնք Քեզ երկիրպագանեն: Որ ի չգոյէ ի գոյ ածեր զամենայն արարածս, որ արարեր զմարդն ըստ պատկերի Քում եւ նմանութեան, եւ ամենայն շնորհիւ Քով զնա զարդարեցեր եւ ուսուցեր խնդրել զիմաստութիւն եւ զգգօնութիւն: Եւ ո՛չ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդեր ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութեան: Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ եւ զանարժան ծառայսս Քո ի ժամուս յայսմիկ, կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ Քո, եւ զօրինաւոր երկրպագութիւն եւ զփառաբանութիւն մատուցանել Քեզ:*

Դու Տէր, ընկա՛լ ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս, եւ պահեա՛ զմեզ Քոյին քաղցրութեամբդ. թո՛ղ մեզ զամենայն յանցանս մեր զկամայ եւ զակամայ: Սրբեա՛ զհոգի, զմիտս եւ զմարմինս մեր եւ շնորհեա՛ ի սրբութեան պաշտել զՔեզ զամենայն աւուրս կենաց մերոց,

ՃԱՇՈՒ ՄՈՒՏՔ

Եվ շարականի վերջին տունը երգելու ժամանակ, քահանան երկրպագելով սեղանին, ձեռքն է առնում սուրբ ավետարանը և ծածուկ ասում հետևյալ աղոթքը:

Քհ - (ծածուկ) *Մեր Տեր Աստված, Դու, որ երկնքում Քո փառքին սպասա-վորելու համար հրեշտակների և հրեշտակապետների դասերը և զին-վորությունները կարգեցիր:*

Արա և այժմ, որպեսզի մեզ հետ միասին մտնեն նաև սուրբ հրեշտակ-ները և լինեն մեզ պաշտոնակից ու փառաբանակից Քո բարերարությանը:

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - (եղանակով) *Քանի որ Քոնն է կարողությունը և զորությունը և փառ-քը հավիտյանս. ամեն (և համբուրում են սեղանը):*

Սրկ - *Պռոսխումե (ուշադրություն):*

Դպ - *Սուրբ Աստված, Սուրբ և հզոր, Սուրբ և անմահ, որ հարություն առար մեռելներից, ողորմի՛ր մեզ* (երեք անգամ կրկնիր):

Իսկ քահանան՝ համբուրելով սուրբ ավետարանը, տալիս է սարկավագին, ով էլ այն բարձրացնելով՝ վերաբերում է սեղանի շուրջը՝ հյուսիսից հարավ: Եվ վերաբե-րելու պահին քահանան ասում է այս աղոթքը.

Քհ - (ծածուկ) *Սուրբ Աստված, որ հանգչում ես սրբերի մեջ և երեքսրբ-յան ձայնով սերովբեները Քեզ գովում են, իսկ քերովբեները փառաբա-նում, և երկնային բոլոր զորությունները երկրպագում են Քեզ, որ չգո-յությունից գոյության կոչեցիր բոլոր արարածներին, որ մարդուն ստեղ-ծեցիր Քո պատկերով և նմանությամբ ու Քո բոլոր շնորհներով նրան զարդարեցիր և սովորեցրիր խնդրել իմաստություն և զգոնություն: Եվ չանտեսեցիր մեղավորին, այլ նրա վրա դրեցիր ապաշխարություն փր-կության: Նաև մեզ՝ Քո նվաստացած և անարժան ծառաներիդ, արժա-նացրիր այս ժամին կանգնել Քո փառքի սրբության սեղանի առջև և մա-տուցել Քեզ օրինավոր երկրպագություն ու փառաբանություն:*

Դու, Տե՛ր, մեղավորներիս բերանից ընդունի՛ր երեքսրբյան օրհնու-թյունը և պահի՛ր մեզ Քո քաղցրությամբ: Ների՛ր մեզ՝ մեր կամա և ակամա գործած բոլոր հանցանքները: Սրբի՛ր մեր հոգին, միտքն ու մար-մինը և շնորհիր մեզ սրբությամբ պաշտել Քեզ մեր կյանքի բոլոր օրերին՝

բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին եւ ամենայն սրբոց Քոց, որք յաւիտենից Քեզ բարեհաճոյացան:

Զի սուրբ ես Տէր Աստուած մեր, եւ Քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սրկ - (ի ձայն) Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպ - Տէ՛ր, ողորմեա՛:

Սրկ - Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպ - Տէ՛ր, ողորմեա՛:

Սրկ - Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց, զՏէր աղաչեսցուք:

Դպ - Տէ՛ր, ողորմեա՛:

Սրկ - Վասն հայրապետին մերոյ Տեառն (այս անուն) կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին, զՏէր աղաչեսցուք:

Դպ - Տէ՛ր, ողորմեա՛:

Սրկ - Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպ - Տէ՛ր, ողորմեա՛:

Սրկ - Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց, զօրավարաց եւ զօրաց նոցին, զՏէր աղաչեսցուք:

Դպ - Տէ՛ր, ողորմեա՛:

Սրկ - Վասն հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք:

Դպ - Յիշեա, Տէ՛ր, եւ ողորմեա՛:

Սրկ - Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպ - Տէ՛ր, ողորմեա՛:

Սրկ - Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպ - Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սրկ - Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպ - Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:

բարեխոսությամբ սրբուհի Աստվածածնի և Քո բոլոր սրբերի, որոնք հավիտենից Քեզ հաճելի եղան:

Քանզի սուրբ ես, մեր Տեր Աստված, և Քեզ վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Սրկ - (եղանակով) Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը:

Դպ - Տե՛ր, ողորմի՛ր:

Սրկ - Համայն աշխարհի խաղաղության և սուրբ Եկեղեցու հաստատության համար, Տիրոջն աղաչենք:

Դպ - Տե՛ր, ողորմի՛ր:

Սրկ -Բոլոր սուրբ և ուղղափառ եպիսկոպոսների համար, Տիրոջն աղաչենք:

Դպ - Տե՛ր, ողորմի՛ր:

Սրկ - Մեր հայրապետի Տեր (անունը) կյանքի և նրա հոգու փրկության համար, Տիրոջն աղաչենք:

Դպ -Տե՛ր, ողորմի՛ր:

Սրկ-Վարդապետների, քահանաների, սարկավագների, դպիրների և եկեղեցու բոլոր ուխտավոր մանուկների համար, Տիրոջն աղաչենք:

Դպ - Տե՛ր, ողորմի՛ր:

Սրկ - Բարեպաշտ թագավորների և աստվածասեր իշխանների, զորավարների և նրանց զորքերի համար, Տիրոջն աղաչենք:

Դպ -Տե՛ր, ողորմի՛ր:

Սրկ -Հանգուցյալ հոգիների համար, որոնք ճշմարտապես և ուղղությամբ Քրիստոսին հավատալով ննջեցին Տիրոջն աղաչենք:

Դպ -Հիշիր, Տե՛ր, և ողորմի՛ր:

Սրկ -Դարձյալ միաբանված մեր ճշմարիտ և սուրբ հավատի համար, Տիրոջն աղաչենք:

Դպ - Տե՛ր, ողորմի՛ր:

Սրկ - Մեր անձերը և միմյանց ամենակալ Տեր Աստծուն հանձնենք:

Դպ - Քեզ՝ Տիրոջդ, կհանձնվենք:

Սրկ - Եվ բոլորս միաբանված ասենք՝ մեր Տեր Աստված, ողորմի՛ր մեզ՝ Քո մեծ ողորմության համաձայն:

Դպ - Տեր ողորմի՛ր, Տեր ողորմի՛ր, Տեր ողորմի՛ր:

Քհ ~ (ի ծածուկ, բազկատարած) *Տէր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից Քոց վերընկալցիս եւ ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան Քում:*

Զգթութիւն Քո առաքեա՛ ի վերայ մեր եւ ամենայն ժողովրդեանս, որք ակն ունին առ ի Քէն առատ ողորմութեանդ:

Սրկ ~ *Օրհնեա՛, տէր:*

Քհ ~ (ի ձայն) *Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոլով, եւ Քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ ՃԱՇՈՒ

Յետ այսորիկ պատարագիչն, եթէ իցէ եպիսկոպոս եւ առաջնորդ վիճակի, երկրպագեսցէ սեղանոյն եւ եկեալ բազմեսցի յաթոռն: Դպիրք ըստ խորհրդոյ աւուրն ընթերցցին Սաղմոս Ճաշու, եւ զգիրս զմարգարէականս, ապա ասասցեն զՄեսեղի ըստ պատշաճ աւուրն եւ ընթերցին զառաքելական զգիրս: Եւ ապա Ալէլուիա ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն:

Սրկ ~ [Ալէլուիա], *Օրթի* (ոտքի):

Պատարագիչն դարձցի եւ խաչակնքեսցէ ի վերայ ժողովրդեանն ասելով:

Քհ ~ *✝ Խաղաղութիւն ամենեցուն:*

Դպ ~ *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ ~ *Երկիւղածութեամբ լուարուք:*

Սարկաւագն դառնալով առ ժողովուրդն:

Սրկ ~ *Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ...*

Դպ ~ *Փա՛ռք Քեզ Տէր Աստուած մեր:*

Սրկ ~ *Պռօսխումէ:*

Դպ ~ *Ասէ Աստուած:*

Սարկաւագն ընթերցցի զաւետարանն սուրբ, եւ յաւարտմանն, դպիրք ասասցեն եղանակաւ:

Դպ ~ *Փա՛ռք Քեզ, Տէր Աստուած մեր:*

Սարկաւագն դարձցի յարեւելս եւ բարձրացուցեալ ի վեր զսուրբ աւետարանն, ասասցէ զՆիկիական դաւանութիւնն:

Քհ ~ (ծածուկ, բազկատարած) *Տեր Աստված մեր, ընդունի՛ր Քո ծառաների բազկատարած աղաչանքները և ողորմի՛ր մեզ՝ ըստ Քո մեծ ողորմության:*

Քո գթությունն ուղարկիր մեր և ամբողջ ժողովրդի վրա, ովքեր Քեզանից ակնկալում են առատ ողորմություն:

Սրկ ~ *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ ~ (եղանակով) *Որովհետև Աստված լինելով՝ ողորմած և մարդասեր ես և Քեզ վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

ՃԱՇՈՒ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Դրանից հետո պատարագիչը, եթե եպիսկոպոս է և թեմի առաջնորդ, երկրպագում է սեղանին և գալիս բազմում աթոռին: Դպիրներն օրվա խորհրդին համապատասխան ընթերցում են Ճաշու Սաղմոսը: Եվ ընթերցում են մարգարեական գրքերը: Ապա ասում են Մեսեղի՝ օրվան համապատասխան և ընթերցում առաքելական գրքերը: Եվ ապա Ալէլուիա, ըստ ընթերցվածի ցուցման:

Սրկ ~ [Ալէլուիա], *ոտքի*

Պատարագիչը խաչակնքում է ժողովրդին՝ ասելով.

Քհ ~ *Խաղաղություն ամենքին:*

Դպ ~ *Եվ քո հոգուն:*

Սրկ ~ *Երկյուղածությամբ լսեցե՛ք:*

Սարկավագը դառնալով ժողովրդին.

Սրկ ~ *Հիսուս Քրիստոսի Սուրբ Ավետարանին՝ ըստ...*

Դպ ~ *Փառք քեզ, մեր Տեր Աստված:*

Սրկ ~ *Ուշադրությո՛ւն:*

Դպ ~ *Աստված է խոսում:*

Սարկավագն ընթերցում է սուրբ ավետարանը և երբ ավարտում է, դպիրներն եղանակելով ասում են.

Դպ ~ *Փառք քեզ, մեր Տեր Աստված:*

Սարկավագը շրջվում է դեպի արևելք և վեր բարձրացնելով սուրբ ավետարանը, ասում է Նիկիական հանդանակը

ՀԱՒԱՏԱՄՔ

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ո՛չ արարած: Նոյն Ինքն ի բնութենէ Հօր, Որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով:

Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք:

Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, Որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս:

Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Ի յարութիւն մեռելոց. ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց. յարքայութիւնն երկնից, եւ ի կեանսն յաւիտենականս:

Սրկ -Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ո՛չ էր Որդին, կամ էր երբեմն, յորժամ ո՛չ էր Սուրբ Հոգին. կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին, եւ թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթուղիկէ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

ՀԱՎԱՏԱՄՔ

Հավատում ենք մեկ Աստծո, Ամենակալ Հորը, երկնքի և երկրի, տեսանելիների և անտեսանելիների Արարչին:

Եվ մեկ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն, ծնված Հայր Աստծուց՝ միածին, այսինքն Հոր էությունից:

Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ արարած: Նույն Ինքը Հոր բնությունից, Որով ամեն ինչ եղավ երկնքում և երկրի վրա՝ երևելիներ և աներևույթներ:

Որ մեզ՝ մարդկանց և մեր փրկության համար իջնելով երկնքից՝ մարմնացավ, մարդացավ, կատարյալ կերպով ծնվեց Սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգով:

Որով առավ մարմին, հոգի և միտք և ամեն ինչ որ կա մարդու մեջ, ճշմարտապես և ոչ թվացյալ:

Զարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով ելավ երկինք, նստեց Հոր աջ կողմում:

Գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու համար կենդանիներին և մեռածներին և Որի թագավորությունը չունի վախճան:

Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն, անստեղծին և կատարյալին, որ խոսեց օրենքի և մարգարեների և ավետարանների մեջ:

Որ իջավ Հորդանան, քարոզեց առաքյալներին և սրբերի մեջ բնակվեց:

Հավատում ենք նաև Մեկ, Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Մեկ մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության և թողության:

Մեռելների հարությանը, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանին, երկնքի արքայությանը և հավիտենական կյանքին:

Սրկ - Իսկ նրանք, ովքեր ասում են, թե կար ժամանակ, երբ չկար Որդին, կամ կար ժամանակ, երբ չկար Սուրբ Հոգին, կամ ասում են, թե ոչնչից գոյացան կամ այլ էությունից են եղել Որդին Աստծո և կամ Սուրբ Հոգին, և թե՝ փոփոխական են կամ այլայլելի, այնպիսիներին նզովում է Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Սրկ -*Օրհնեա՛, տէր:*

Քհ - *Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպա-գանելով Սրբոյ Երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

ԱՂՕԹՔ ԶԿՆԻ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ

Սրկ - *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Դպ - *Տէ՛ր, ողորմեա:*

Սրկ - *Եւ եւս հաւատով աղաչեսցուք եւ խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման եւ աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր:*

Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի Տէրութեան Նորա: Եւ Նա տացէ մեզ միաբան միով հաւատով եւ արդարութեամբ վաստակել ի գործս բարիս, զի զողորմութեան զշնորհսն Իւր արասցէ ի վերայ մեր. Տէրն ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի:

Դպ -*Կեցո՛, Տէր:*

Սրկ -*Զժամ սուրբ պատարագիս եւ զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով՝ ի Տեառնէ խնդրեսցուք:*

Դպ - *Շնորհեա՛, Տէր:*

Սրկ - *Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:*

Դպ - *Շնորհեա՛, Տէր:*

Սրկ - *Զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:*

Դպ - *Շնորհեա՛, Տէր:*

Սրկ - *Զսրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:*

Դպ - *Շնորհեա՛, Տէր:*

Սրկ - *Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ,*

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - *Իսկ մենք փառավորենք Նրան, Ով հավիտյաններից առաջ է, երկրպագելով Սուրբ Երրորդությանն ու մեկ Աստվածությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն* (մեր Սուրբ Լուսավորչի աաածը)*:*

ԱՂՈԹՔ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Սրկ - *Եվ խաղաղության համար եւս աղաչենք Տիրոջը:*

Դպ - *Տե՛ր, ողորմի՛ր:*

Սրկ - *Աղոթքի և պաշտամունքի այս ժամին առավել հավատով աղաչենք և խնդրենք Տեր Աստծուց և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսից, որպեսզի ընդունելության արժանացնի և լսի Տերը մեր աղաչանքների ձայնը, ընդունի մեր սրտերի խնդրանքները, թողություն տա մեր հանցանքներին և ողորմի մեզ:*

Մեր աղոթքներն ու խնդրանքները թող ամեն ժամ մտնեն Նրա մեծ տերության առջև, և Նա մեզ տա միաբան մեկ հավատով ու արդարությամբ բարի գործերի մեջ վաստակել, որպեսզի մեր ամենակալ Տերն Իր ողորմության շնորհները ծավալի մեզ վրա, ապրեցնի և ողորմի մեզ:

Դպ - *Կեցո՛, Տեր:*

Սրկ - *Այս սուրբ պատարագի ժամը և առաջիկա օրը խաղաղությամբ ու հավատով անցկացնել Տիրոջից խնդրենք:*

Դպ - *Շնորհի՛ր, Տեր:*

Սրկ - *Մեր անձերի պահպանության համար խաղաղության հրեշտակ Տիրոջից խնդրենք:*

Դպ - *Շնորհի՛ր, Տեր:*

Սրկ - *Մեր հանցանքների համար քավություն և թողություն խնդրենք Տիրոջից:*

Դպ - *Շնորհի՛ր, Տեր:*

Սրկ - *Մեր անձերի համար որպես օգնություն սուրբ խաչի մեծ և կարող զորությունը՝ Տիրոջից խնդրենք:*

Դպ - *Շնորհի՛ր, Տեր:*

Սրկ - *Դարձյալ միաբանված մեր ճշմարիտ և սուրբ հավատի համար,*

զՏէր աղաչեսցուք:

Դպ - Տէր, ողորմեա:

Սրկ - Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպ - Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սրկ - Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպ - Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛:

Քհ - (ի ծածուկ) Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ եւ առատ պարգեւօք բարերարութեան Քո: Որ Դու Քոյին կամաւ ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի եւ մահու յաղագս մեղաց մերոց եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ երանելի առաքելոցն:

Հաղորդս արա՛ եւ զմեզ, Տէր, աղաչեմք զՔեզ, աստուածային պարգեւացդ. թողութեան մեղաց եւ ընդունելութեան Հոգւոյդ Սրբոյ:

Սրկ - Օրհնեա՛, տէր:

Քհ - (ի ձայն) Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

† Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ - Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ - Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպ - Առաջի Քո Տէր:

Քհ - (ի ձայն) Խաղաղութեամբ Քով Քրիստոս Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո՛ զմեզ եւ աներկիւղ պահեա՛ յամենայն չարէ: Հաւասարեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս Քո, որք հոգւով եւ ճշմարտութեամբ Քեզ երկիրպագանեն: Վասն զի Ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն:

Սրկ - Օրհնեա՛, տէր:

Քհ - † Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեան:

Դպ - Ամէն:

Տիրոջն աղաչենք:

Դպ - Տե՛ր, ողորմի՛ր:

Սրկ - Մեր անձերը և միմյանց ամենակալ Աստծուն հանձնենք:

Դպ - Քեզ՝ Տիրոջդ, հանձնվենք:

Սրկ - Եվ բոլորս միաբանությամբ ասենք՝ մեր Տեր Աստված, ողորմի՛ր մեզ՝ Քո մեծ ողորմությամբ:

Դպ - Տեր ողորմի՛ր, Տեր ողորմի՛ր, Տեր ողորմի՛ր:

Քհ - (ծածուկ) Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս, որ մեծ ես Քո ողորմությամբ և առատ՝ Քո բարերարության պարգևներով:

Դու, որ Քո կամքով այս ժամին մեր մեղքերի համար համբերեցիր խաչի և մահվան չարչարանքներին և Սուրբ Հոգուդ պարգևներն առատորեն շնորհեցիր երանելի առաքյալներին: Աղաչում ենք, Տե՛ր, մեզ ևս հաղորդակից արա՛ աստվածային պարգևներիդ, մեղքերի թողությանը և Սուրբ Հոգուդ ընդունելությանը:

Սրկ - Օրհնի՛ր, տե՛ր:

Քհ - (եղանակով) Որպեսզի արժանի լինենք գոհությամբ փառավորելու Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ միասին, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Խաղաղություն ամենքին:

Դպ - Եվ քո հոգուն:

Սրկ - Աստծուն երկրպագենք:

Դպ - Քո առաջ, Տե՛ր:

Քհ - (եղանակով) Քո խաղաղությամբ, Քրիստոս Փրկիչ մեր, որ վեր է մեր ամեն մտքից ու խոսքից, ամրացրո՛ւ մեզ և աներկյուղ պահի՛ր ամենայն չարից: Մեզ հավասարեցրո՛ւ Քո ճշմարտացի երկրպագողներին, որոնք հոգով և ճշմարտությամբ Քեզ են երկրպագում, քանզի ամենասուրբ Երրորդությանդ վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Օրհնյալ մեր Տեր Հիսուս Քրիստոս. ամեն:

Սրկ - Օրհնի՛ր, տե՛ր:

Քհ - Տեր Աստված թող օրհնի ամենքիդ:

Դպ - Ամեն:

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Ա. ՄԵԾ ՄՈՒՏՔ

Քահանայն հանցէ զխոյրն եւ զհողաթափսն, իսկ եթե եպիսկոպոս իցէ՝ զթագն եւ զեմիփորուն եւ զհողաթափսն:

Սրկ *-Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից, եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս:*

Դպ *-Մարմին տէրունական եւ արիւն փրկչական, կայ առաջի, երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով. Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէր զօրութեանց:*

Սրկ *-Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս:*

Կիրակէի, եկեղեցւոյ, Ծաղկազարդի եւ հրեշտակից

Դպ *-Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած զՔո սուրբ զեկեղեցի: Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի Քո: Եւ բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զՔեզ, Տէր, եւ ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն, ձայնիւ խորհրդականաւ: Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէր զօրութեանց:*

Սարկաւագն վերաբերեսցէ ի խորհրդանոցէն զնուիրեալ հացն եւ զգինին առ քահանայն: (*Հանդիսաւոր օր) Եւ գան խնկարկելով ի սուրբ խորհուրդն:

*Սրկ *- Յարեւու եհար զխորան Իւր եւ Ինքն որպէս փեսայ, զի ելանէ յառագաստէ Իւրմէ:*

*Դպ *- Եւ ցնծայ Նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս Իւր:*

*Սրկ *- Որք զքրովբէիցն*

*Դպ *- Խորհրդաբար կերպարանիմք:*

Եւ գան ի յարեւելից կողմն:

*Սրկ *- Ճանապարհ արարէ՛ք այնմիկ, որ նստի յերկնից երկինս ընդ արեւելս:*

ԿԱՆՈՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Մեծ մուտք

Քահանան հանում է խոյրը և հողաթափերը, իսկ եթե եպիսկոպոս է՝ թագը և եմիֆորոնը և հողաթափերը:

Սրկ *- Զմկրտվածներից, թերահավատներից, ապաշխարողներից և անմաքուրներից ոչ մեկը թող չմոտենա Աստվածային այս Խորհրդին:*

Դպ *- Տերունական մարմինն ու Փրկչական արյունը առջևում է, երկնային զորություններն անտեսանելիաբար երգում են և ասում անդադար ձայնով. Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տե՛ր զորությունների:*

Սրկ *- Դպիրնե՛ր, սաղմոս ասացեք մեր Տեր Աստծուն և քաղցր ձայնով՝ հոգևոր երգեր:*

Կիրակի, եկեղեցու, ծաղկազարդի և հրեշտակների:

Դպ *- Ո՛վ Աստված, հրեշտակային դասավորությամբ լցրիր Քո Սուրբ Եկեղեցին:*

Հազար հազարավոր հրեշտակապետներ կան Քո առաջ, և բյուր բյուրավոր հրեշտակներ պաշտում են Քեզ, Տե՛ր, և Դու հաճեցիր խորհրդական ձայնով մարդկանցից օրհնություն ընդունել:

Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տե՛ր զորությունների:

Սարկավագը նվիրաբերված հացն ու գինին խորհրդանոցից վերաբերում է առ քահանան: (Հանդիսավոր օր) Եվ գալիս են խնկարկելով դեպի սուրբ խորհուրդը:

*Սրկ *- Արևի վրա հաստատեց Իր խորանը և Ինքը նման է փեսայի, որ դուրս է գալիս առագաստից:*

*Դպ *- Եվ ցնծում է Նա որպես հսկա իր ճանապարհով ընթանալիս:*

*Սրկ *- Որ քերովբեներին ենք:*

*Դպ *- Խորհրդաբար կերպավորում:*

Եվ գալիս են դեպի արևելյան կողմը:

*Սրկ *- Ճանապարհ բացեք Նրա առաջ, որ նստում է երկինքների երկնքում՝ արևելյան կողմում:*

*Դպ -*Եւ կենդանարար Երրորդութեանն զերեքսրբեան օրհնութիւնս մատուցանեմք:*

Եւ գան ի հարաւկողմն

*Սրկ -*Աստուած ի հարաւոյ եկեսցէ, եւ Սուրբն՝ ի Փառան լեռնէ:*
*Դպ -*Զամենայն զկենցաղականս ի բաց դնելով զգործս:*

Իսկ մինչ դպիրքն երգեն՝ քահանայն խոնարհեցուցեալ զգլուխն առաջի սուրբ սեղանոյն աղօթեսցէ:

Քհ - (ի ծածուկ) *Ո՛չ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք եւ ցանկութեամբ մատչիլ ի սեղան Քո՛, կամ սպասաւորել արքունական փառաց Քոց: Քանզի պաշտել զՔեզ մեծ եւ ահաւոր երկնաւոր զօրութեանցդ իսկ է:*

Սակայն վասն անչափ բարերարութեան Քոյ անպարագրելի Բանդ Հօր եղեր մարդ, եւ Քահանայապետ մեր երեւեցար: Եւ իբր Տէր ամենեցուն այսմ սպասաւորութեան եւ անարիւն զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ:

Վասն զի Դու ես Տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց եւ երկրաւորաց: Որ ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս սերովբէից Տէր եւ Թագաւոր Իսրայէլի: Որ միայն սուրբ ես եւ ի սուրբս հանգուցեալ, աղաչեմ զՔեզ միայն բարերար եւ հեշտալուր, նայեա՛ յիս ի մեղուցեալ եւ յանպիտան ծառայս Քո: Եւ սրբեա՛ զհոգի եւ զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին: Եւ բաւականացո՛ զիս զօրութեամբ Սուրբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայականս շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս եւ քահանայագործել զՔո անարատ մարմինդ եւ զպատուական արիւնդ:

Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ մաղթեմ. մի՛ դարձուցաներ զերեսս Քո յինէն եւ մի՛ մերժեր զիս ի ծառայից Քոց: Այլ արժանի արա՛ մատուցանել Քեզ զընծայս զայս յինէն ի մեղուցեալ եւ յանարժան ծառայէս Քումմէ: Վասն զի Դու ես, որ մատուցանես եւ մատչիս եւ ընդունիս եւ տաս, Քրիստոս Աստուած մեր: Եւ Քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկիզբն Քո Հարդ եւ Ամենասուրբ եւ բարերար Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

*Դպ - *Եվ կենդանարար Երրորդությանը երեքսրբյան օրհնություններ ենք մատուցում:*

Եվ գալիս են դեպի հարավի կողմը:

*Սրկ - *Աստված հարավից է գալու և Սուրբը՝ Փառան լեռից:*
*Դպ - *Բոլոր կենցաղային գործերը մի կողմ դնելով.*

Մինչ դպիրները երգում են, քահանան գլուխը սուրբ սեղանի առաջ խոնարհած ծածուկ աղոթում է:

Քհ - (ծածուկ) *Մարմնավոր ախտերով և ցանկություններով բռնվածներից ոչ ոք արժանի չէ մոտենալու Քո սեղանին կամ սպասավորելու Քո արքունական փառքին: Որովհետև Քեզ Ահավորիդ և Մեծիդ պաշտելը երկնային զորություններին է հատուկ:*

Սակայն Քո անչափ բարերարության պատճառով, անպարագրելի Հոր Բանդ, մարդ եղար և մեզ Քահանայապետ երևացիր: Եվ իբրև ամենքի Տերը, այս սպասավորության և անարյուն զոհաբերության համար քահանայությունը մեզ ավանդեցիր:

Որովհետև Դու ես մեր Տեր Աստվածը, որ տիրում ես երկնավորներին և երկրավորներին, որ բազմում ես քերովբեների աթոռին. սերովբեների Տեր և Իսրայելի Թագավոր: Որ միայն Դու ես սուրբ և սրբերի մեջ հանգչած, ո՜վ միակ բարերար և քաղցրալուր, աղաչում եմ Քեզ՝ նայի՛ր ինձ՝ Քո մեղավոր և անպիտան ծառային և սրբի՛ր իմ հոգին ու միտքը չարի ամեն պղծություններից: Եվ ինձ զորացրո՛ւ Սուրբ Հոգուդ զորությամբ. ինձ, որ զգեստավորված եմ քահանայական շնորհներով, կանգնելու Քո սուրբ սեղանի առջև և քահանայագործելու Քո անարատ մարմինը և պատվական արյունը: Քո առջև խոնարհեցնելով իմ պարանոցը՝ աղերսում եմ, մի՛ դարձրու Քո երեսն ինձանից և ինձ մի հանիր Քո ծառաների շարքից: Այլ արժանի արա իմ՝ Քո մեղավոր և անպիտան ծառայի կողմից Քեզ մատուցելու այս ընծան: Քանզի Դու ես, մեր Քրիստոս Աստված, որ մատուցում ես և մատուցվում, ընդունում ես և տալիս: Եվ Քեզ, Քո անսկիզբ Հոր և Քո ամենասուրբ և բարերար Հոգուդ հետ միասին փառք ենք մատուցում, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Եւ դան յաստիճան խորանին, եւ բարձող ահաւոր խորհրդոյն, ասասցէ հանդարտութեամբ:

Սրկ - *Համբարձէ՛ք, իշխանք, զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:*

Եւ պատարագողն խնկարկէ եւ հարցանէ:

Քհ - *Ո՞վ է Սա, Թագաւոր փառաց, Տէր հզօր զօրութեամբ Իւրով, Տէր կարող ի պատերազմի:*
*Դպ - *Որպէս զի զԹագաւորն ամենեցուն ընդունիցիմք:*
Սրկ - *Համբարձէ՛ք, իշխանք, զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից եւ մտցէ Թագաւոր փառաց:*
Քհ - *Ո՞վ է Սա, Թագաւոր փառաց եւ Տէր զօրութեանց.*
*Դպ- *Եւ զհրեշտակացն հանդիսապէս ընծայեալ բերեմք զկարգ:*
Սրկ - *Սա՛ Ինքն է Թագաւոր Փառաց:*

Եւ պատարագողն երկրպագէ ահիւ եւ դողութեամբ եւ խնկարկելով եւ սկհոյն ընկալցի զընծայսն, եւ դառնալով բարձրացուսցէ ի տես ժողովրդեան, խաչակնքէ ի վերայ ժողովրդեանն, ասելով:

Քհ - † *Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:*
Դպ - *Ալէլուիա:*

Բ. ՄԱՏՈՒՑՈՒՄՆ ԸՆԾԱՅԻՑ

Եւ ապա դարձցի եւ բազմեցուսցէ ի սեղանն. եւ լուասցէ զծայրս մատանց ձեռաց իւրոց ասելով զմի տուն սաղմոս ի ծածուկ:

Քհ - (ի ծածուկ) *Լուացից սրբութեամբ զձեռս իմ եւ շուրջ եղեց զսեղանով Քով, Տէ՛ր:*
Սրկ - *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*
Դպ - *Տէր, ողորմեա՛:*
Սրկ - *Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի՛ խղճիւ եւ գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութե-*

Եվ խորանի աստիճանի վրա են գալիս և ահավոր խորհուրդը կրողն ասում է հանդարտությամբ.

Սրկ -*Իշխանն՝ե՛ր, բարձրացրե՛ք ձեր դռները դեպի վեր, թող բարձրանան հավիտենական դռները, որպեսզի փառքի Թագավորը ներս մտնի:*

Եվ պատարագողը խնկարկում է ու հարցնում.

Քհ - *Ո՞վ է Սա՝ փառքի Թագավորը, Իր զորությամբ հզոր Տերը, պատերազմում կարող Տերը:*
*Դպ - *Որպեսզի բոլորի թագավորին ընդունենք:*
Սրկ - *Իշխանն՝ե՛ր, բարձրացրե՛ք ձեր դռները դեպի վեր, թող բարձրանան հավիտենական դռները, որպեսզի փառքի Թագավորը ներս մտնի:*
Քհ - *Ո՞վ է Այս՝ փառքի Թագավորը և զորությունների Տերը:*
*Դպ - *Հանդիսավոր կերպով հրեշտակների արարողությունը ընծայելով կատարենք:*
Սրկ - *Սա Ինքն է փառքի Թագավորը:*

Եվ պատարագողը ահ ու դողով երկրպագում է սեղանին ու սկիհին խնկարկելով ընդունում է ընծաները և շրջվելով բարձրացնում է ի տես ժողովրդի, և ժողովրդի վրա խաչակնքելով ասում է.

Քհ - *Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը:*
Դպ - *Ալելուիա:*

Բ. ԸՆԾԱՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

Եվ ապա շրջվում է և բազմեցնում սեղանի վրա: Եվ լվանում է իր ձեռքերի մատների ծայրերը՝ ծածուկ ասելով մի տուն սաղմոսից:

Քհ - (ծածուկ) *Տե՛ր, սրբությամբ լվանամ իմ ձեռքերը և Քո սեղանի շուրջը լինեմ:*
Սրկ - *Եվ խաղաղության համար եւս աղաչենք Տիրոջը:*
Դպ - *Տե՛ր, ողորմի՛ր:*
Սրկ -*Դարձյալ, հավատով և սրբությամբ և ահով աղոթքի կանգնենք Աստծու սուրբ սեղանի առջև՝ առանց (ծանր) խղճմտանքի և գայթակղության, առանց նենգության և խորամանկության, առանց պատրանք-*

ամբ, մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ: Այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան, կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, եւ գտցուք զողորմութեան զշնորհս յաւուր յայտնութեան եւ ի միւսանգամ գալըստեան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, կեցուսցէ եւ ողորմեսցի:

Դպ ~ *Կեցո՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Քհ ~ (ի ծածուկ, բազկատարած) *Տէր Աստուած զօրութեանց եւ Արարիչ ամենայն լինելութեանց: Որ յանէութենէ զբնաւս ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր: Որ եւ զմերս զհողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս, այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս:*

Դու Տէր, որում պատարագեմք զպատարագիսս, ընկա՛լ առ ի մէնջ զառաջադրութիւնս զայս, եւ աւարտեա՛ զսա ի խորհրդականութիւն մարմնոյ եւ արեան Միածնի Քո, դեղ թողութեան մեղաց պարգեւեա՛ ճաշակողացս † զհացս զայս եւ զբաժակս:

Քահանայն բացցէ կիսով չափ զծածկոց սկհոյն, որպես զի երեւեսցի սուրբ նշխարն ի վերայ մաղզմային ըստ եղերաց:

Սրկ ~ *Օրհնեա՛, տէր:*

Քհ ~ (ի ձայն) *Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Քեզ Հօր, միանգամայն եւ Հոգւոյդ Սրբոյ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Գ. ՈՂՋՈՅՆ

Քհ ~ † *Խաղաղութիւն ամենեցուն:*

Դպ ~ *Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ ~ *Աստուծոյ երկիրպագեսցուք:*

Դպ ~ *Առաջի Քո Տէր:*

Քահանայն փոքր ինչ հեռացեալ ի տեղւոջէն կացցէ ձեռնամած յաջ կողմն քովընտի ունելով զաչս իւր յընծայսն, եւ նախասարկաւագն համբուրեալ զսեղանն եւ

ների և խաբեության, առանց երկմտության և թերահավատության: Այլ ուղիղ վարքով, պարզ մտքով, միամիտ սրտով, կատարյալ հավատով, լեցուն սիրով, ամեն տեսակ բարի գործերով լի և գերազանց աղոթքի կանգնենք Աստծու սուրբ սեղանի առջև, և գտնենք ողորմության շնորհներ՝ մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի մյուս անգամ գալստյան և հայտնության օրը, թող Տերը ողորմի և ապրեցնի մեզ:

Դպ ~ *Ապրեցրո՛ւ, Տե՛ր, և ողորմի՛ր:*

Քհ ~ (ծածուկ բազկատարած) *Զորությունների Տեր Աստված և բոլոր ստեղծագործությունների Արարիչ, որ անէությունից ամեն ինչ երևան հանելով՝ գոյացրիր, որ նաև մարդասիրաբար պատվելով մեր հողեղեն բնությունը՝ այսպիսի ահավոր և անպատմելի խորհրդին սպասավոր կարգեցիր:*

Դու, Տե՛ր, Ում պատարագում ենք այս պատարագները, ընդունի՛ր մեզանից այս առաջադրությունը և ամբողջացրո՛ւ սա Միածնիդ մարմնի և արյան խորհրդականության մեջ և պարգևի՛ր մեզ՝ այս հացն ու բաժակը ճաշակողներիս, մեղքերի թողության դեղ:

Քահանան կիսով չափ բացում է սկիհի ծածկոցը, որպեսզի մաղզմայի եզրին երևա սուրբ նշխարը:

Սրկ ~ *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ ~ (եղանակով) *Շնորհներով և Մարդասիրությամբ մեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսի, որի հետ Քեզ՝ Հորը և միանգամայն Քո Սուրբ Հոգուն վայելում է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Գ. ՈՂՋՈՒՅՆ

Քհ ~ *Խաղաղություն ամենքին:*

Դպ ~ *Ամեն, և քո հոգուն:*

Սրկ ~ *Աստծուն երկրպագենք:*

Դպ ~ *Քո առաջ, Տե՛ր:*

Քահանան մի փոքր հեռանալով իր կանգնած տեղից, կանգնում է ձեռնամած աջ կողմում կողքանց հայացքը պահելով ընծայի վրա, և նախասարկավագը, համբուրե-

զալ քահանային՝ ի ձայն բարձր ասասցէ,

Սրկ - *Ողջոյն տո՛ւք միմեանց ի համբոյր սրբութեան, եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէ՛ք եւ աղօթեցէք:*

Եւ իջեալ ընդ հիւսիսային աստիճանս տացէ զողջոյն երիցագունի քահանայիցն բոլորելոց առաջի բեմին ի փոքր ատենի. իսկ երիցագոյնն ի քահանայից տացէ ողջոյն յաջմէ եւ յահեկէ քահանայիցն եւ նոքա միմեանց եւ բոլոր ժողովրդեան. եւ նախասարկաւագն վերստին բարձրացի ի բեմն ընդ հարաւային աստիճանն. եւ քահանայն դարձցի ի սեղանն եւ սքողեսցէ զսկիհն:

Դպ - *Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.*
Որ Էնն Աստուած աստ բազմեցաւ.
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
Սուրբ ողջունի հրաման տուաւ.
Եկեղեցիս մի անձն եղեւ,
Համբոյրս յօդ լրման տուաւ.
Թշնամութիւնն հեռացաւ,
Սէրն յընդհանուրս սփռեցաւ:
Արդ, պաշտօնեայք բարձեալ զձայն՝
Տո՛ւք զօրհնութիւն ի մի բերան.
Միասնական Աստուածութեանն,
Որում սրովբէքն են սրբաբան:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ա. ՆԱԽԵՐԳԱՆ

*Սրկ - *Որք հաւատով կայք յանդիման սուրբ սեղանոյս արքայական, տեսէք բազմեալ զՔրիստոս Արքայն, եւ շուրջ պատեալ զօրք վերնական:*

*Դպ - *Վեր համբառնամք զաչս ունելով, եւ պաղատիմք զայս ասելով. Զմեզս մեր մի՛ յիշեսցես, այլ գթութեամբ Քո քաւեսցես: Ընդ հրեշտակացն օրհնեմք զՔեզ, եւ ընդ սրբոց Քոց, Տէ՛ր, փա՛ռք Քեզ:*

լով սեղանն ու քահանայի աջը, բարձրաձայն ասում է.

Սրկ - *Ողջույն տվեք իրար Սուրբ համբույրով. և ովքեր որ չեն կարող հաղորդվել աստվածային այս խորհրդին, դուրս եկեք դռան առջև և աղոթեցե՛ք:*

Եվ իջնելով հյուսիսային աստիճաններով՝ ողջունում է բեմի առջև փոքր ատյանում բոլորաձև շարված քահանաներից ավագագույնին, իսկ ավագագույնը ողջունում է իրենից աջ ու ձախ կանգնած քահանաներին և նրանք՝ միմյանց ու ողջ ժողովրդին, և նախասարկավագը հարավային աստիճաններով կրկին բարձրանում է բեմ, քահանան շրջվում է դեպի սեղանն ու սքողում սկիհը:

Դպ - *Քրիստոս մեր մեջ հայտնվեց,*
Որ Էնն Աստված այստեղ բազմեց.
Խաղաղության ձայն հնչեց.
Սուրբ ողջույնի հրաման տրվեց.
Եկեղեցին մեկ անձ եղավ.
Այս համբույրը որպես կատարյալ կապ տրվեց.
Թշնամությունը հեռացավ.
Սերը բոլորի վրա սփռվեց:
Ուրեմն, ո՛վ պաշտոնյաներ, ձայնը բարձրացնելով
Միաբերան օրհնություն տվե՛ք
Միասնական Աստվածությանը,
Որի սրբասացներն են սերովբեները:

ԳՈՀՈՒԹՅՈՒՆ

Ա. ՆԱԽԵՐԳԱՆՔ

*Սրկ -*Դուք, որ հավատով կանգնել եք արքայական այս սուրբ սեղանի առջև, տեսեք բազմած Քրիստոս արքային և շրջապատված՝ վերին զորություններով:*

*Դպ - *Մեր աչքերը վեր ենք հառում և պաղատում ենք՝ այս ասելով. Մեր մեղքերը մի հիշիր, այլ Քո գթությամբ դրանք քավիր: Տեր, հրեշտակների հետ օրհնում ենք Քեզ և Քո սրբերի հետ՝ փառք Քեզ:*

Սրկ - *Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք, եւ նայեցարուք զգուշութեամբ:*

Դպ - *Առ Քեզ Աստուած:*

Սրկ - *Պատարագ Քրիստոս մատչի անարատ Գառն Աստուծոյ:*

Դպ - *Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:*

Սրկ - *Օրհնեա՛, տէր:*

Քհ - *Շնո՛րհք, սէ՛ր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եղիցի ընդ ձեզ, ✝ ընդ ամենեսեանդ:*

Դպ - *Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ - *Զգրունս, զգրունս, ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ: Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ:*

Դպ - *Ունիմք առ Քեզ, Տէր ամենակալ:*

Սրկ - *Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ:*

Դպ - *Արժան եւ իրաւ:* (Իսկ ի հանդիսի աւուրս ոմանք զկնի արժան եւ իրաւին ասին զայս):

*Սրկ -*Եւ զստոյգ փրկութեան, որ միշտ ընդ ամենայն տեղիս գոհութիւն մատուցանեմք Քեզ Քրիստոս:*

*Դպ -*Որով եւ զհրաշալի զյարութիւնդ Քո գովեն զօրութիւնք:*

*Սրկ -*Սարսին սերովբէքն:*

*Դպ -*Դողան քերովբէքն:*

*Սրկ -*Եւ իշխանութիւնք վերին պետութեանցն պար առեալ քաղցր ձայնիւ եղանակեն եւ ասեն.*

Մինչ նոքա երգեն, քահանայն ձեռնամած աղօթեսցէ:

Քհ - (ի ծածուկ) *Արժան է ստուգապէս եւ իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զՔեզ, Հայր ամենակալ:*

Որ Քոյին անզննելի եւ արարչակից Բանիւդ զանիծիցն բարձեր զկրճիմն: Որ ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի՝ սեպհականեաց զհաւատացեալս ի Քեզ: Եւ զննելի բնութեամբ ըստ ի կուսէն տնտեսութեան հաճեցաւ բնակիլ ի մեզ: Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար:

Վասն զի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն

Սրկ - *Ահով մնանք, երկյուղով մնանք, ուղիղ մնանք և նայենք զգուշությամբ:*

Դպ - *Քեզ մոտ, ով Աստվա՛ծ:*

Սրկ - *Քրիստոսը՝ Աստծու անարատ Գառը, պատարագ է մատուցվում:*

Դպ - *Ողորմություն և խաղաղություն, և օրհնության պատարագ:*

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - *Հոր և Որդու և Սուրբ Հոգու շնորհը, սերը և աստվածային սրբարար զորությունը թող լինի ձեր բոլորի հետ:*

Դպ - *Ամեն և քո հոգու հետ:*

Սրկ -*Դռնե՛րը,* (փակեք) *դռնե՛րը ամենայն իմաստությամբ և զգուշությամբ: Աստվածային երկյուղով վեր ուղղեցե՛ք ձեր մտքերը:*

Դպ - *Ամենակա՛լ Տեր,* (մեր մտքերը) *Քո վրա են հառած:*

Սրկ - *Ամբողջ սրտով գոհ եղեք Տիրոջից:*

Դպ - *Արժանի է և իրավացի* (իսկ հանդիսավոր օրերին ոմանք «Արժան և իրավից» հետո այս են ասում):

*Սրկ - *Քրիստո՛ս, միշտ և ամենուրեք մեր ստույգ փրկության գոհությունը մատուցում ենք Քեզ:*

*Դպ - *Որով և զորությունները գովում են Քո հրաշալի հարությունը:*

*Սրկ - *Սերովբեները սարսում են,*

*Դպ - *Քերովբեները դողում,*

*Սրկ *Եվ վերին պետությունների իշխանությունները պար բռնած՝ քաղցր ձայնով երգում են և ասում:*

Մինչ նրանք երգում են, քահանան ձեռնամած աղոթում է:

ՔՀ - (ծածուկ) *Հայր ամենակա՛լ, իսկապես արժանի է և իրավացի, միշտ հոժարամիտ փութով երկրպագելով, փառավորել Քեզ:*

Որ Քո անզննելի և արարչակից Խոսքով վերացրեցիր անեծքի միջնորմը, Որը Քեզ հավատացողներին վերցնելով որպես եկեղեցի սեփականացրեց: Եվ տեսանելի բնությամբ, որ տնօրինաբար վերցրեց կույսից, հոժարեց բնակվել մեր մեջ: Եվ աստվածային նորագործ ճարտարապետությամբ երկիրը երկնքի վերածեց:

Որովհետև Նա, Որի առջև չէին համարձակվում մնալ հրեշտակ-

ջոկք՝ զարհուրեալք ի փայլակնացայտ եւ յանմատոյց լուսոյ Աստուածութեանդ, եղեալ այդպիսիդ մարդ՝ յաղագս մերոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս:

Սրկ ~ *Օրհնեա՛, տէր:*

Քհ ~ (ի ձայն) *Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, եւ համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին եւ ասել:*

Բ. ՅԻՇԱՏԱԿՆ

Դպ ~*Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ Տէր զօրութեանց: Լի են երկինք եւ երկիր փառօք Քո: Օրհնութիւն ի բարձունս, օրհնեալ, որ եկիր եւ գալոցդ ես անուամբ Տեառն: Ովսաննա՛ ի բարձունս:*

Քհ ~ (ի ծածուկ, բազկատարած) *Սու՛րբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ ես ճշմարտապէս եւ ամենասուրբ, եւ ո՞վ ոք պանծասցի բովանդակել բանիւ զՔո ի մեզ զանբաւ բարեգործութեանդ զեղմունս:*

Որ եւ անդէն իսկ ի նախնումն զանկեալն ընդ մեղօք զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր, մարգարէիւք, օրինացն տուչութեամբ, քահանայութեամբ եւ ստուերակերպ երնջոցն մատուցմամբ: Իսկ ի վախճանն աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք, ետուր մեզ զՈրդիդ Քո Միածին Պարտապան եւ Պարտս, Զենումն եւ Օծեալ, Գառն եւ Երկնաւոր Հաց, Քահանայապետ եւ Պատարագ:

Վասն զի Ինքնդ է բաշխող, եւ նոյն Ինքնդ բաշխի ի միջի մերում միշտ անծախապէս: Վասն զի եղեալ հաւաստեաւ եւ առանց ցնորիցմարդ, եւ անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յԱստուածածնէն եւ ի սուրբ կուսէն Մարիամայ: Ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց, եւ յաշխարհակեցոյց եւ յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ ի խաչն:

Քահանայն երկպագեալ սեղանոյն բացցէ զսկիհն եւ առցէ զնուիրեալ հացն ի ձեռս իւր եւ ասասցէ:

Առեալ զհացն ի սուրբ, յաստուածային, յանմահ, յանարատ եւ

ների գնդերը՝ զարհուրելով Աստվածությանդ փայլակնացայտ և անմատչելի լույսից, մեր փրկության համար մարդ եղավ և շնորհեց մեզ երկնայինների հետ հոգեղեն պար պարել:

Սրկ ~ *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ ~ (եղանակով) *Եվ սերովբեների ու քերովբեների հետ միաձայն սրբասացությամբ հորինել նվագներ և նրանց հետ համարձակորեն գոչելով աղաղակել և ասել:*

Բ. ՀԻՇԱՏԱԿ

Դպ ~ *Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տեր զորությունների, երկինքն ու երկիրը լի են Քո փառքով, օրհնությո՛ւն բարձունքներում. օրհնյալ ես, որ եկար և գալու ես Տիրոջ անունով, օվսաննա՛ բարձունքներում:*

Քհ ~ (ծածուկ, բազկատարած) *Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ ես ճշմարտապես և ամենասուրբ, և ո՞վ կարող է պարծենալ, Քո՝ մեր հանդեպ ունեցած անչափ բարեգործության զեղումները խոսքով բովանդակելու մեջ:*

Որ արդեն իսկ նախապես մեղքերի տակ ընկածներին զանազան եղանակներով խնամելով սփոփեցիր, մարգարեներով, օրենքների տվչությամբ, քահանաներով և ստվերակերպ երինջների զոհաբերությամբ: Իսկ այս օրերի վախճանին մեր բովանդակ պարտքերի դատավճիռները խզելով՝ Քո Միածին Որդուն տվեցիր մեզ, որպես Պարտապան և Պարտք, Ողջակեզ և Օծյալ, Գառ և Երկնավոր Հաց, Քահանայապետ և Պատարագ:

Քանի որ Ինքն է բաշխողը և նույն Ինքն է բաշխվում մեր մեջ միշտ անսպառորեն: Որովհետև հաստատապես և առանց ցնորքի մարդ դառնալով և անշփոթ միավորությամբ մարմնանալով Աստվածածնից և Սուրբ Կույս Մարիամից, մարդկային կենցաղի բոլոր կրքերի միջով ճանապարհորդեց առանց մեղքի: Եվ աշխարհի և մեր փրկության համար կամավոր կերպով եկավ խաչվելու:

Քահանան երկրպագելով սեղանին, բացում է սկիհը և իր ձեռքն է վերցնում նվիրաբերված հացը և ասում է.

Հացը վերցնելով Իր աստվածային, սուրբ, անմահ, անարատ և

յարարչագործ ի ձեռս Իւր՝ † օրհնեաց, գոհացաւ, եբեկ եւ ետ Իւրոց ընտրեալ, սուրբ եւ բազմեալ աշակերտացն ասելով.

Սրկ ~ *Օրհնեա՛, տէր:*

Քահանայն զսուրբ հացն մատամբք երկուց ձեռացն ըմբռնեալ ասասցէ ի ձայն:

Քհ ~ (ի ձայն) *Առէ՛ք, կերէ՛ք, այս է* ՄԱՐՄԻՆ ԻՄ, *որ վասն ձեր եւ բազմաց բաշխի՝ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:*

Դպ ~ *Ամէն:*

Քահանայն զսուրբ մարմինն մաղզմայիւ եղեալ ի վերայ սեղանոյն, եւ առեալ ի ձեռս իւր զսկիհն ասասցէ ի ծածուկ:

Քհ ~ (ի ծածուկ) *Նոյնպէս եւ զբաժակն առեալ, † օրհնեա՛ց, գոհացաւ, էարբ եւ ետ Իւրոց ընտրեալ, սուրբ եւ բազմեալ աշակերտացն ասելով.*

Սրկ ~ *Օրհնեա՛, տէր:*

Քահանայն երկու ձեռամբ փոքր ինչ ի սեղանոյն վերացուցեալ զսկիհն ասասցէ ի ձայն:

Քհ ~ (ի ձայն) *Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան. այս է* ԱՐԻՒՆ ԻՄ ՆՈՐՈՅ ՈՒԽՏԻ, *որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի՝ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:*

Դպ ~ *Ամէն: Հայր երկնաւոր, որ զՈրդիդ Քո ետուր ի մահ վասըն մեր պարտապան պարտեաց մերոց, հեղմամբ արեան Նորա, աղաչեմք զՔեզ, ողորմեա՛ Քո բանաւոր հօտի:*

Քահանայն եղեալ զմաղզմայն ի վերայ սկհոյն սքօղեսցէ:

Քհ ~ (ի ծածուկ) *Եւ զսոյն միշտ Իւր յիշատակ առնել՝ պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդիդ Քո Միածին: Եւ իջեալ ի ստորին վայրս մահու՝ մարմնովն զոր ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ, եւ զնիգս դժոխոցն աղարտեալ հզօրեղապէս, զՔեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած, զԱստուածդ կենդանեաց եւ մեռելոց:*

Եւ կալեալ զսկիհն երկոքումբք ձեռօք, ասասցէ ի ծածուկ:

արարչագործ ձեռքը, օրհնեց, գոհացավ, բեկանեց և տվեց Իր սուրբ, ընտրյալ և բազմած աշակերտներին, ասելով.

Սրկ ~ *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քահանան սուրբ հացը երկու ձեռքերի մատներով բռնած, բարձրաձայն ասում է.

Քհ ~ (եղանակով) *Առե՛ք, կերե՛ք, այս է ԻՄ ՄԱՐՄԻՆԸ, որը բաշխվում է ձեր և շատերի համար որպես մեղքերի քավություն և թողություն:*

Դպ ~ *Ամեն:*

Քահանան սուրբ մարմինը մաղզմայով դնելով սեղանի վրա և ձեռքն առնելով սկիհը՝ ծածուկ ասում է.

Քհ ~ (ծածուկ) *Նույնպես և բաժակը վերցնելով՝ օրհնեց, գոհացավ, խմեց և տվեց Իր սուրբ, ընտրյալ և բազմած աշակերտներին, ասելով.*

Սրկ ~ *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քահանան երկու ձեռքով սկիհը սեղանից փոքր-ինչ բարձրացնելով բարձրաձայն ասում է.

Քհ ~ (եղանակով) *Բոլորդ խմեցե՛ք սրանից. այս է ՆՈՐ ՈՒԽՏԻ ԻՄ ԱՐՅՈՒՆԸ, որ թափվում է ձեր և շատերի համար, որպես մեղքերի քավություն և թողություն:*

Դպ ~ *Ամեն: Հայր երկնավոր, որ Քո Որդուն մահվան հանձնեցիր մեզ համար, որպես մեր մեղքերի պարտապան. Նրա թափած արյամբ, աղաչում ենք Քեզ, ողորմի՛ր Քո բանավոր հոտին:*

Քահանան մաղզման սկիհի վրա դնելով ծածկում է այն.

Քհ ~ (ծածուկ) *Քո բարերար Միածին Որդին մեզ պատվիրան ավանդեց, որպեսզի այս միշտ կատարենք Իր հիշատակի համար: Եվ մեր ազգակցությունից ընդունած մարմնով մահվան ստորին վայրն իջնելով՝ դժոխքի նիգերը հզորապես խորտակեց և Քեզ միայն ճանաչեցրեց որպես ճշմարիտ Աստված, Աստված ողջերի և մեռածների:*

Եվ սկիհը երկու ձեռքերով բռնելով ասում է ծածուկ.

Եվ հիմա մենք, ո՛վ Տե՛ր, տրված այս հրամանի համաձայն, կատա-

Եւ արդ մեք Տէր, ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ եւ արեան Միածնի Քո: Յիշեմք զԴորա, որ վասն մեր զփրկագործ չարչարանսն, զկենսատու խաչելութիւնն, զերեքօրեայ թաղումնն, զերանելի յարութիւնն, զաստուածապէս համբարձումնն, զնստելն ընդ Աջմէ Քո, Հա՛յր, զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք եւ օրհնեմք:

Սրկ - *Օրհնեա՛, տէր:*

Քահանայն զսուրբ խորհուրդն վերացուցեալ ի սեղանոյն սակաւ ինչ, մատուցէ առ Հայր ասելով:

Քհ - (ի ձայն) *Եւ զՔոյս ի Քոյոց Քեզ մատուցանեմք ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:*

Դպ - *Յամենայնի օրհնեալ ես Տէ՛ր, օրհնեմք զՔեզ, գովեմք զՔեզ, գոհանամք զՔէն, աղաչեմք զՔեզ, Տէր Աստուած մեր:*

Մինչ նոքա երգեն՝ քահանայն զսուրբ խորհուրդն եդեալ ի վերայ սեղանոյն, բազկատարած աղօթեսցէ:

Քհ - (ի ծածուկ) *Զքեզ արդարեւ Տէր Աստուած մեր գովեմք, եւ զՔէն գոհանամք հանապազ, որ զանց արարեր զմերով անարժանութեամբս, այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Ո՛չ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ թափուր եմք եւ միշտ ունայն գտանիմք հանապազ, այլ ի Քո բազմազեղ ներողութիւնդ ցանկ ապաւինեալ համարձակիմք մերձենալ ի սպասաւորութիւն մարմնոյ եւ արեան Միածնի Քոյ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Գ. ՎԵՐԱԿՈԶՈՒՄՆ

Սրկ - *Օրհնեա՛, տէր:*

Քհ - (ի ձայն) † *Խաղաղութիւն ամենեցուն:*

Դպ - *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ - *Աստուծոյ երկիրպագեսցուք:*

ընելով Քո Միածնի փրկական մարմնի և արյան խորհուրդը, հիշում ենք մեզ համար Նրա կրած փրկագործ չարչարանքը, կենսատու խաչելությունը, երեքօրյա թաղումը, երանելի հարությունը, աստվածապես համբարձումը և Քո աջ կողմում նստելը, ո՛վ Հայր և Նրա ահավոր և փառավոր մյուս գալուստը, խոստովանում ենք և օրհնում:

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քահանան սուրբը խորհուրդը սեղանից փոքր ինչ բարձրացնելով, մատուցում է Հորը, բարձրաձայն ասելով.

Քհ - (եղանակով) *Եվ Քոնը, Քոնը եղողներից Քեզ ենք մատուցում ամեն կերպ և ամենքի համար:*

Դպ - *Ամեն ինչում օրհնյալ ես Տեր, օրհնում ենք Քեզ, գովում ենք Քեզ, գոհանում ենք Քեզանից, աղաչում ենք Քեզ, մեր Տեր Աստված:*

Մինչ նրանք երգում են, քահանան սուրբը խորհուրդը դնելով սեղանին, բազկատարած ծածուկ աղոթում է.

Քհ - (ծածուկ) *Մեր Տեր Աստված, արդարև գովում ենք Քեզ և միշտ գոհանում Քեզանից, որ մեր անարժանությունը զանց առնելով, այսպիսի ահավոր և անպատմելի խորհրդին սպասավոր կարգեցիր: Ոչ թե մեր որևէ բարեգործության համար, որից իսպառ զուրկ ենք և միշտ գտնվում ենք ձեռնունայն, այլ Քո հորդառատ ներողամտությանը ապավինելով, համարձակվում ենք մոտենալ Քո Միածնի՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մարմնի և արյան սպասավորությանը, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Գ. ՎԵՐԱԿՈԶՈՒՄ

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - *Խաղաղություն ամենքին:*

Դպ - *Եվ քո հոգուն:*

Սրկ - *Աստծուն երկրպագենք:*

Դպ ~ *Առաջի Քո, Տէ՛ր: Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս ի մեզ, հեղմամբ արեան Քոյ սուրբ, աղաչեմք զՔեզ, ողորմեա՛ արեամբ Քով փրկեալ հօտի:*

Մինչ նոքա երգեն քահանայն խոնարհեալ երկիր պագցէ սեղանոյն եւ ասասցէ զաղօթս:

Քհ ~ (ի ծածուկ) *Երկիրպագանեմք եւ աղաչեմք եւ խնդրեմք ի Քէն բարերար Աստուած: Առաքեա՛ ի մեզ եւ յառաջի եդեալ ընծայս յայս զմշտնջենաւորակից Քո եւ զէակից Սուրբ Հոգիդ:*

Ապա բացեալ զծածկոց սկհոյն, առցէ յահեակ ձեռն զմաղզմայն, եւ երիցս խաչակնքեսցէ զսուրբ հացն, եւ նախասարկաւագին կացեալ առընթեր քահանային մեծաւ երկիւղիւ և դողութեամբ խնկարկեսցէ:

Քհ ~ (ի ցած) *Որով զհացս † օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի* (կրկնեա երիցս):

Սրկ ~ (ի ցած) *Ամէն:*

Եւ եդեալ զմաղզմայն ի վերայ սեղանոյն, առցէ յահեակ ձեռն զսկիհն, եւ խաչակնքեսցէ երիցս ասելով:

Քհ ~ (ի ցած) *Որով զհացս † օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի* (կրկնեա երիցս):

Սրկ ~ (ի ցած) *Ամէն:*

Ապա զմաղզմայն հանդերձ սուրբ մարմնովն եդեալ ի վերայ սկհոյն, խաչակնքեսցէ երիցս՝ ասելով:

Քհ ~ (ի ցած) *Որով զհացս եւ զգինիս † օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, փոխարկելով Հոգւովդ Քո Սրբով* (կրկնեա երիցս):

Սրկ ~ (ի ցած) *Ամէն:* (Ի Ձայն) *Օրհնեա՛, տէր:*

Ապա համբուրեալ քահանայն զսեղանն, աքօղեսցէ զսկիհն:

Քհ ~ (ի ցած) *Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:*

Դպ ~ *Քո առաջ, Տե՛ր: Որդի Աստծո, որ Հայրը մեզ հետ հաշտեցնելու համար պատարագվելով, բաշխվում ես մեր մեջ որպես կենաց հաց, աղաչում ենք Քեզ՝ Քո Սուրբ արյան հեղմամբ ողորմի՛ր Քո արյամբ փրկված հոտին:*

Մինչ նրանք երգում են, քահանան խոնարհվելով երկրպագում է սեղանին և ծածուկ ասում այս աղոթքը.

Քհ ~ (ծածուկ) *Ո՛վ բարերար Աստված երկրպագում, աղաչում և խնդրում ենք Քեզանից՝ մեզ և մատուցված այս ընծայի վրա ուղարկի՛ր Քո մշտնջենավորակից և էակից Սուրբ Հոգուն:*

Ապա բացելով սկիհի ծածկոցը, մաղզման վերցնում է ձախ ձեռքը և երեք անգամ խաչակնքում է սուրբ հացը, իսկ նախասարկավագը՝ կանգնելով կողքին՝ խնկարկում է:

Քհ ~ (ցածր) *Որով այս Հացն օրհնելով՝ ճշմարտապես դարձնես մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Մարմինը* (կրկնել երեք անգամ):

Սրկ ~ *Ամեն:*

Եվ մաղզման դնելով սեղանին, ձախ ձեռքն է վերցնում սկիհը և երեք անգամ խաչակնքում է՝ ասելով.

Քհ ~ (ցածր) *Եվ այս Բաժակն օրհնելով՝ ստուգապես դարձնես մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Արյունը* (կրկնել երեք անգամ):

Սրկ ~ *Ամեն:*

Ապա մաղզման սուրբ մարմնով հանդերձ դնելով սկիհի վրա, երեք անգամ խաչակնքում է՝ ասելով.

Քհ ~ (ցածր) *Որով այս հացն ու գինին օրհնելով՝ ճշմարտապես դարձնես մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը՝ փոխարկելով Քո Սուրբ Հոգով* (կրկնել երեք անգամ):

Սրկ ~ (ցածր) *Ամեն:* (եղանակով) *Օրհնի՛ր, տե՛ր:*

Ապա քահանան, համբուրելով սեղանը, աքողում է սկիհը:

Քհ ~ (եղանակով) *Որպեսզի սա մեզ՝ բոլոր մոտեցողներիս համար լինի անդատապարտություն, մեղքերի քավություն և թողություն:*

Դ. ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

Դպ - *Հոգի Աստուծոյ, որ զփառակցի Քո զխորհուրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռն մեր, հեղմամբ արեան Սորա, աղաչեմք զՔեզ. հանգո՛ զհոգիս մեր ննջեցելոցն:*

Քահանայն ոչ եւս խաչակնքեցէ այսուհետեւ ի վերայ խորհրդոյն. եւ զձեռն խոնարհագոյն քան զսկիհն տարածեսցէ, եւ զաչն միշտ առ սուրբ խորհուրդն յառեալ ունիցի:

Քհ - (ի ծածուկ) *Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի: Սրբոյ Եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, կապելոց, վտանգելոց, աշխատելոց, եւ որք ի պատերազմունս բարբարոսաց:*

Սովաւ եւ օդոց շնորհեա՛ զբարեխառնութիւն, եւ անդոց՝ զպտղաբերութիւն, եւ ախտացելոց ի պէսպէս ցաւս՝ փութապէս զառողջութիւն:

Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն ի Քրիստոս զննջեցեալսն [զնախահարս, զհայրապետս, զմարգարէս, զառաքեալս, զվկայեալս], *զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւագունս, եւ զբնաւ ուխտ եկեղեցւոյ Քոյ սրբոյ: Եւ զամենեսեան որք յաշխարհական կարգէ զարս եւ զկանայս հաւատով վախճանեալս:*

Սրկ - *Օրհնեա՛, տէր:*

Քհ - (ի ձայն) *Ընդ որս եւ մեզ այց արասցես, բարերար Աստուած, աղաչեմք:*

Դպ - *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Քհ - *Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամու, եւ Յովհաննու Մկրտչին, Ստեփանոսի նախավկային, եւ ամենայն սրբոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպ - *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Սարկաւագունք անցցեն յաջակողմն սեղանոյն եւ կացցեն կարգաւ, եւ նախասարկաւագին յառաջ մատուցեալ քարոզեսցէ:

Դ. ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպ - *Հոգի Աստծո, որ երկնքից իջնելով Քո փառակցի խորհուրդն ես մեր ձեռքով կատարում, աղաչում ենք Քեզ՝ Սրա արյան հեղումով հանգիստ տուր մեր ննջեցյալների հոգիներին:*

Այսուհետև քահանան այլևս չի խաչակնքում խորհրդի վրա և ձեռքը սկիհից ավելի ցածր է տարածում և հայացքը միշտ դեպի սուրբ խորհուրդն է պահում:

Քհ - (ծածուկ) *Տե՛ր, սրանով շնորհի՛ր սեր, կայունություն և ըղձալի խաղաղություն ամբողջ աշխարհին, սուրբ եկեղեցուն, բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավագներին, աշխարհի թագավորներին, իշխաններին, ժողովուրդներին, ճանապարհորդներին, նավորդներին, բանտարկյալներին, վտանգի ենթարկվածներին, նեղվածներին և նրանց, ովքեր բարբարոսների դեմ պատերազմի մեջ են:*

Սրանով շնորհի՛ր նաև եղանակին՝ բարեխառնություն, անդաստաններին՝ պտղաբերություն և զանազան ախտերով հիվանդացածներին՝ արագ ապաքինում:

Սրանով հանգիստ շնորհիր նախկինում ի Քրիստոս վախճանված բոլոր ննջեցյալներին՝ նախահայրերին, հայրապետներին, մարգարեներին, առաքյալներին, վկայվածներին, եպիսկոպոսներին, երեցներին, սարկավագներին և Քո սուրբ եկեղեցու ամբողջ ուխտին և բոլորին, որ աշխարհական դասից են՝ հավատով վախճանված տղամարդկանց և կանանց:

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - (եղանակով) *Որոնց հետ նաև մեզ այցելիր, Բարերար Աստված, աղաչում ենք:*

Դպ - *Հիշի՛ր Տե՛ր, և ողորմի՛ր:*

Քհ - *Սուրբ կույս Մարիամ Աստվածածնի, Հովհաննես Մկրտչի, Ստեփանոս Նախավկայի և բոլոր սրբերի հիշատակը թող լինի այս սուրբ պատարագին, աղաչում ենք:*

Դպ - *Հիշի՛ր Տե՛ր, և ողորմի՛ր:*

Սարկավագներն անցնում են սեղանի աջ կողմը և կարգով կանգնում, և նախասարկավագն առաջ գալով քարոզում է:

Սրկ - *Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, եւ ամենայն հայրապետաց սրբոց, առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց, եւ ամենայն սրբոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպ - *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Յարութեան կիւրակեից զայս ասա:

Սրկ - *Օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածազարդ Յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ երկիր պագանեմք:*

Դպ - *Փառք Յարութեան Քո, Տէր:*

Սրկ - (Ի Տօնի Սրբոց) *Սուրբ եւ աստուածահաճոյ մարգարէին* (հայրապետին, առաքելոյն, մարտիրոսին), *որոյ այսօր զյիշատակն կատարեցաք, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպ -*Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Ապա նախասարկաւագին անցեալ ի գլուխ կարգի սարգաւագացն, ձեռնամած ասասցեն միաբան:

Սրկ - *Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն՝ սրբոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի առաքելոցն, եւ Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսիսի, Սահակայ, Դանիէլի եւ Խադայ, Մեսրոպայ վարդապետին, եւ Գրիգորի Նարեկացւոյն, եւ Ներսիսի Կլայեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն, եւ Գրիգորի եւ Մովսիսի Տաթեւացեացն, եւ սրբոց Գրիգորիսեանց եւ Ներսիսեանց, եւ ամենայն սրբոց հովուաց եւ հովուապետացն Հայաստանեայց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպ - *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Սրկ - *Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ աստուածասոյց կրօնաւորացն՝ Պողոսի, Անտոնի, Պողայ, Մակարայ, Ոնոփրիոսի, Աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւագրի, Պարսամայ, Յովհաննիսեանց եւ Սիմէօնեանց, սրբոց Ոսկեանց եւ Սուքիասեանց, եւ ամենայն սրբոց հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս, եղիցի*

Սրկ - *Սուրբ առաքյալների, մարգարեների, վարդապետների, մարտիրոսների, բոլոր սուրբ հայրապետների, առաքելագործ եպիսկոպոսների, երեցների, ուղղափառ սարկավագների և բոլոր սրբերի հիշատակը նույնպես թող լինի այս սուրբ պատարագին, աղաչում ենք:*

Դպ - *Հիշի՛ր Տե՛ր, և ողորմի՛ր:*

Այս ասա Հարության Կիրակիներին

Սրկ - *Երկրպագում ենք մեր Քրիստոս Աստծո՝ օրհնյալ, գովյալ և փառավորյալ, հրաշալի և աստվածազարդ Հարությանը:*

Դպ - *Փա՛ռք Քո Հարությանը, Տե՛ր:*

Սրկ - (Սրբերի տոներին) *Սուրբ և աստվածահաճո մարգարեի հիշատակը* [կամ առաքյալի, մարտիրոսի, հայրապետի], *որի հիշատակը կատարեցինք այսօր, թող լինի այս սուրբ պատարագին, աղաչում ենք:*

Դպ - *Հիշի՛ր Տե՛ր, և ողորմի՛ր:*

Ապա նախասարկավագը անցնելով սարկավագների խմբի գլուխը՝ միասին ձեռնամած ասում են.

Սրկ - *Մեր առաջնորդների և առաջին լուսավորիչների՝ սուրբ Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների, Գրիգոր Լուսավորչի, Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորիսի, Ներսեսի, Սահակի, Դանիելի և ադի, Մեսրոպ վարդապետի և Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու [Շնորհալու], Հովհաննես Որոտնեցու և Գրիգոր ու Մովսես Տաթևացիների և սուրբ Գրիգորիսյանների ու Ներսիսյանների և Հայաստանյայց բոլոր սուրբ հովիվների ու հովվապետերի հիշատակը թող լինի այս սուրբ պատարագին, աղաչում ենք:*

Դպ - *Հիշի՛ր Տե՛ր, և ողորմի՛ր:*

Սրկ - *Սուրբ մենակյացների, առաքինասեր և աստվածուսույց կրոնավորների՝ Պողոսի, Անտոնի, Պողայի, Մակարի, Օնոփրիոսի, աբբա Մարկոսի, Նեղոսի, Արսենի, Եվագրի, Պարսամի, Հովհաննիսյանների ու Սիմոնյանների, սուրբ Ոսկյանների ու Սուքիասյանների և աշխարհում նրանց բոլոր աշակերտների հիշատակը թող լինի այս սուրբ*

յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպ - *Յիշեա՛, Տէր եւ ողորմեա՛:*

Սրկ - *Թագաւորաց հաւատացելոց՝ սրբոց Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ, եւ Թէոդոսի, եւ ամենայն սուրբ եւ բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպ - *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Սրկ - *Ընդհանուր ամենայն հաւատացելոց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց եւ ամենայն չափու հասակի հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոցն, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպ - *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Եւ մինչ սարկաւագն գքարոզն ասիցէ, քահանան զաղօթս սկսի, զի ի միասին աւարտեսցեն:

Քհ - (ի ծածուկ) *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ օրհնեա՛ զսուրբ կաթուղիկէ եւ զառաքելական եկեղեցի Քո, զոր փրկեցեր պատուական արեամբ Միածնի Քո եւ ազատեցեր խաչիւն սրբով: Շնորհեա՛ սմա զանշարժ զխաղաղութիւն:*

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ օրհնեա՛ զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն ի մեզ զբանն ճշմարտութեան:

Սրկ - *Օրհնեա՛, տէր:*

Քհ - (ի ձայն) *Եւս առաւել զեպիսկոպոսապետն մեր, եւ զպատուական Հայրապետն Ամենայն Հայոց զՏէր* (անունը) *սրբազնագոյն կաթողիկոսն եւ բարեխնամ զառաջնորդն* (վիճակիս) *զՏէր* (անունը), *շնորհեսցե՛ս մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ:*

Դպ - *Ամէն:*

Նախասարկաւագն եւ սարկաւագունք համբուրեալ զսեղանն եւ անցանելով ի յետ կուսէ սեղանոյն գնասցեն ի ձախակողմն սեղանոյն, եւ ասասցեն միաբան Մեծին Խոսրովու ասացեալ զառաջնոցն օրինացն:

պատարագին, աղաչում ենք:

Դպ - *Հիշի՛ր Տե՛ր, և ողորմի՛ր:*

Սրկ - *Հավատացյալ թագավորների՝ սուրբ Աբգարի, Կոստանդիանոսի, Տրդատի և Թեոդոսների, և բոլոր սուրբ ու բարեպաշտ թագավորների և աստվածասեր իշխանների հիշատակը թող լինի այս սուրբ պատարագին, աղաչում ենք:*

Դպ - *Հիշի՛ր Տե՛ր, և ողորմի՛ր:*

Սրկ - *Ընդհանուր բոլոր հավատացյալների, տղամարդկանց և կանանց, ծերերի և երեխաների և ամեն տարիքի հավատով ու սրբությամբ ի Քրիստոս ննջածների հիշատակը թող լինի այս սուրբ պատարագին, աղաչում ենք:*

Դպ - *Հիշի՛ր Տե՛ր, և ողորմի՛ր:*

Եվ մինչ սարկավագը քարոզ է ասում, քահանան սկսում է աղոթքը, որպեսզի միասին ավարտեն:

Քհ - (ծածուկ) *Հիշի՛ր Տե՛ր, և ողորմի՛ր և օրհնի՛ր Քո Սուրբ Ընդհանրական և Առաքելական Եկեղեցին, որը փրկեցիր Քո Միածնի պատվական արյամբ և ազատեցիր սուրբ խաչով: Շնորհի՛ր նրան անշարժ խաղաղություն:*

Հիշի՛ր Տե՛ր, ողորմի՛ր և օրհնի՛ր բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, որոնք ուղիղ վարդապետությամբ մեկնաբանում են մեզ ճշմարտության խոսքը:

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - (եղանակով) *Առավել ևս մեր եպիսկոպոսապետին և ամենայն հայոց պատվական հայրապետ, Տեր* (անունը) *սրբազնագույն կաթողիկոսին: Եվ թեմիս* (վիճակի) *բարեխնամ առաջնորդ Տեր* (անունը): *Ուղիղ վարդապետությամբ երկար օրերով շնորհի՛ր մեզ:*

Դպ - *Ամեն:*

Նախասարկավագը և սարկավագը համբուրում են սեղանը և շրջանցելով այն հետևի կողմից, գալիս են սեղանի ձախակողմը և միասին մեծ խոսրովի ասած առաջին օրենքինն են ասում.

Սրկ - *Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք Քեզ, Տէր Աստուած մեր, վասն սուրբ եւ անմահ պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս: Զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցէ: Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ Եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, եպիսկոպոսապետին մերոյ եւ պատուական հայրապետին Ամենայն Հայոց, Տեառն* (անունը) *սրբազնագոյն կաթողիկոսին,* (վիճակիս) *բարեխնամ առաջնորդ, Տեառն* (անունը) *եպիսկոպոսին, եւ քահանայիս, որ զպատարագս մատուցանէ:*

Եւ վասն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից: Աղաչեսցուք եւ խնդրեսցուք եւ վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ բաբունապետացն մերոց, եւ շինողաց սուրբ եկեղեցւոյս, եւ որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ:

Ազատութիւն եղբարց մերոց գերելոց եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանգիստ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպ - *Ըստ ամենայնի, եւ յաղագս ամենեցուն:*

Քհ - (ի ծածուկ) *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ † օրհնեա՛ զՔո առաջի կացեալ ժողովուրդս եւ զպատարագիս մատուցողս: Եւ պարգեւեա՛ սոցա զպիտոյսն եւ զօգտակարսն:*

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ օրհնեա՛ զուխտաւորս եւ զպտղաբերիչս եկեղեցւոյ Քում սրբոյ, եւ որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ: Եւ հատո՛ նոցա զպարտս նոցա ըստ ընդաբոյս առատութեան Քում հարիւրապատիկ աստ եւ ի հանդերձելումդ:

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ գթա՛ ի հոգիս հանգուցելոցն: Հանգո՛ զնոսա եւ լուսաւորեա՛ եւ դասաւորեա՛ ընդ սուրբս Քո յարքայութեանդ երկնից, եւ արժանի արա՛ ողորմութեան Քում:

Յիշեա՛, Տէր, եւ զհոգի ծառայիս Քո (անունը) *եւ ողորմեա՛ նմա ըստ մեծի ողորմութեան Քում, եւ հանգո՛ այցելութեամբ ի լոյս երեսաց Քոց:* (Եթէ կենդանի է) *Փրկեա՛ զնա յամենայն որոգայթից*

Սրկ - *Մեր Տեր Աստված, գոհություն և փառաբանություն ենք մատուցում Քեզ այս սուրբ և անմահ պատարագի համար, որ այս սուրբ սեղանի վրա է: Որպեսզի սա մեզ պարգևի կյանքի սրբություն: Սրանով շնորհի՛ր սեր, հաստատություն և ըղձալի խաղաղություն ամբողջ աշխարհին, սուրբ եկեղեցուն ու բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, մեր եպիսկոպոսապետին և ամենայն Հայոց Հայրապետ, Տեր* (անունը) *սրբազնագույն կաթողիկոսին,* (վիճակիս) *բարեխնամ առաջնորդ, Տեր* (անունը) *եպիսկոպոսին, և քահանային, որը մատուցում է այս պատարագը:*

Նաև քրիստոնյա թագավորների և բարեպաշտ իշխանների զորությունների հաղթությունների համար: Աղաչենք և խնդրենք նաև մեր հանգուցյալների հոգիների համար: Առավելապես մեր հանգուցյալ բաբունապետերի, այս սուրբ եկեղեցին կառուցողների և նրանց համար, ովքեր հանգչում են սրա հովանու տակ:

Ազատություն՝ մեր գերված եղբայրներին, շնորհ՝ ներկա ժողովրդին և հանգիստ՝ հավատով ու սրբությամբ ի Քրիստոս վախճանվածներին: Նրանց հիշատակը ևս թող լինի այս սուրբ պատարագին, աղաչում ենք:

Դպ - *Ըստ ամենայնի և ամենքի համար:*

Քհ - (ծածուկ) *Հիշի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր և օրհնի՛ր Քո առաջ կանգնած ժողովրդին և այս պատարագը մատուցողներին և նրանց պարգևի՛ր պիտանին ու օգտակարը:*

Հիշի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր և օրհնի՛ր Քո Սուրբ Եկեղեցու ուխտավորներին, նվիրատուներին և նրանց, ովքեր ողորմածությամբ հիշում են աղքատներին: Եվ Քո բնական առատաձեռնությամբ հատուցիր նրանց պարտքերը՝ հարյուրապատիկը այստեղ և հանդերձյալ կյանքում:

Հիշի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր և գթա՛ հանգուցյալ հոգիներին: Հանգըստացրու նրանց և լուսավորիր և Քո սրբերի շարքը դասիր երկնային արքայության մեջ և արժանացրու Քո ողորմությանը:

Հիշի՛ր, Տե՛ր Քո ծառա (անունը) *հոգին և ողորմի՛ր նրան՝ Քո մեծ ողորմությամբ և Քո այցելությամբ նրան հանգստացրո՛ւ Քո երեսի լույսով:* (Իսկ եթե ողջ է) *Փրկիր նրան մարմնի և հոգու ամեն տեսակ*

հոգւոյ եւ մարմնոյ:

Յիշեա՛, Տէր, եւ զայնոսիկ, որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս, զկենդանիս եւ զհանգուցեալս, եւ կառավարեա՛ զկամս հայցմանց նոցա եւ զմերս ընդ ուղղորդն եւ որ լին է փրկութեամբ: Եւ վարձատրեա՛ բոլորեցունց զանանց եւ զերանելի բարութիւնսդ:

Եւ զտեալ զխորհուրդս մեր տաճարացո յընդունակութիւն մարմնոյ եւ արեան Միածնի Քո Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ընդ որում Քեզ Հօր Ամենակալի, հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւովդ, վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սրկ - *Օրհնեա՛, տէր:*

Քհ - (ի ձայն) *Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի,* † *ընդ ձեզ, ընդ ամենեսեան:*

Դպ - *Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:*

Ե. ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Սրկ - *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Դպ - *Տէր, ողորմեա:*

Սրկ - *Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք, եւս առաւելապէս զՏէր աղաչեսցուք:*

Դպ - *Տէր, ողորմեա:*

Սրկ - *Վասն մատուցեալ սուրբ եւ աստուածային անմահ պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զՏէր աղաչեսցուք:*

Դպ - *Տէր, ողորմեա:*

Սրկ - *Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ յերկնային եւ յիմանալի Իւր մատուցարանն, զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ, զՏէր աղաչեսցուք:*

Դպ - *Տէր, ողորմեա:*

Սրկ - *Ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛, եւ պահեա՛ զմեզ, Տէր, Քոյին շնորհիւդ:*

Դպ - *Կեցո, Տէր, եւ ողորմեա:*

Սրկ - *Զամենասրբուհի զԱստուածածինն, զմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ*

որոգայթներից:

Հիշի՛ր, Տե՛ր նաև նրանց, ովքեր հանձնարարեցին մեզ մեր աղոթքներում հիշել իրենց, ողջերին ու հանգուցյալներին և առաջնորդի՛ր մեր ու նրանց աղաչանքների կամքը դեպի ուղիղը, և որը լի է փրկությամբ: Եվ բոլորին վարձատրի՛ր Քո անանց և երանելի բարությամբ:

Նաև զտելով մեր խորհուրդները՝ մեզ տաճար արա՛ մեր Տիրոջ և Փրկչի՝ Քո Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի մարմնի և արյան ընդունման համար: Որի հետ Քեզ՝ Ամենակալ Հորդ, կենդանարար ու ազատիչ Սուրբ Հոգուդ հետ միասին, վայելում են փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - (եղանակով) *Եվ մեր մեծ Աստծու և Փրկիչ Հիսուս Քրիստոսի ողորմությունը թող լինի ձեր ամենքի հետ:*

Դպ - *Ամեն. և քո հոգու հետ:*

Ե. ԱՂՈԹՔ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ

Սրկ - *Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը:*

Դպ - *Տե՛ր, ողորմի՛ր:*

Սրկ - *Բոլոր սրբերով, որոնց հիշատակեցինք առավել ևս Տիրոջն աղաչենք:*

Դպ - *Տե՛ր, ողորմի՛ր:*

Սրկ - *Մատուցված, սուրբ և աստվածային անմահ պատարագի համար, որ սուրբ սեղանի վրա է Տիրոջն աղաչենք:*

Դպ - *Տե՛ր, ողորմի՛ր:*

Սրկ - *Որպեսզի մեր Տեր Աստված, որն ընդունեց այս սուրբ պատարագը Իր երկնային և իմանալի սուրբ մատուցարանում, փոխարենն ուղարկի մեզ Իր Սուրբ Հոգու շնորհները ու պարգևները, Տիրոջը աղաչենք:*

Դպ - *Տե՛ր, ողորմի՛ր:*

Սրկ - *Ընդունի՛ր, ապրեցրո՛ւ, ողորմի՛ր և պահպանի՛ր մեզ Տեր, Քո շնորհներով:*

Դպ - *Կեցո՛, Տեր և ողորմի՛ր:*

ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք:

Դպ - *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Սրկ - *Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք:*

Դպ - *Տէ՛ր, ողորմեա՛:*

Սրկ - *Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:*

Դպ - *Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:*

Սրկ - *Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:*

Դպ - *Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:*

Քհ - (ի ծածուկ, բազկատարած) *Աստուած ճշմարտութեան եւ Հայր ողորմութեան, գոհանամք զՔէն: Որ ի վեր քան զերանելի նահապետացն, զմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն: Վասն զի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ՝ Հայր հաճեցար անուանիլ գթալով:*

Եւ այժմ, Տէ՛ր, աղաչեմք զՔեզ, զայսպիսի առ ի Քէն գնորոգ եւ զպատուական անուանադրութեանս շնորհ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո՛ ի մէջ եկեղեցւոյ Քում սրբոյ:

Սրկ - *Օրհնեա, Տէր:*

Քհ - (ի ձայն) *Եւ տո՛ւր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր՝ կարդալ զՔեզ, երկնաւորդ Հա՛յր, երգել եւ ասել.*

Դպ - (բազկատարած) *ՀԱՅՐ մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո. եկեսցէ արքայութիւն Քո. եղիցին կամք Քո, որպէս յերկինս եւ յերկրի. զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ:*

Քհ - (ի ծածուկ) *Տէր տերանց, Աստուած աստուծոց, Թագաւոր յաւիտենական, Արարիչ ամենայն արարածոց, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Մի՛ տար զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ եւ ապրեցո՛ ի փորձութենէ:*

Սրկ - *Օրհնեա՛, տէր:*

Քհ - (ի ձայն) *Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:*

Սրկ - *Ամենասրբուհի և միշտ կույս Մարիամ Աստվածածնին բոլոր սրբերի հետ հիշելով՝ Տիրոջն աղաչենք:*

Դպ - *Հիշիր, Տեր և ողորմիր:*

Սրկ -*Դարձյալ միաբանված մեր ճշմարիտ և սուրբ հավատի համար, Տիրոջն աղաչենք:*

Դպ - *Տե՛ր, ողորմի՛ր:*

Սրկ - *Մեր անձերը և միմյանց ամենակալ Աստծուն հանձնենք:*

Դպ - *Քեզ՝ Տիրոջդ, հանձնվենք:*

Սրկ - *Եվ բոլորս միասին ասենք. մեր Տեր Աստված, ողորմի՛ր մեզ՝ Քո մեծ ողորմության համաձայն:*

Դպ - *Տեր ողորմի՛ր, Տեր ողորմի՛ր, Տեր ողորմի՛ր:*

Քհ - (ծածուկ բազկատարած) *Աստվա՛ծ ճշմարտության և Հայր ողորմության, գոհանում ենք Քեզանից, որ երանելի նահապետներից ավելի մեր՝ պարտականներիս, բնությունն առավել մեծարեցիր, քանի որ նրանց համար Աստված կոչվեցիր, իսկ մեզ բարեհաճեցիր Հայր անվանվել՝ գթալով:*

Եվ այժմ, Տե՛ր, աղաչում ենք Քեզ, Քո կողմից տրված նոր ու պատվական անվանադրության այս շնորհը օրըստօրե պայծառացնելով, ծաղկեցրո՛ւ Քո Սուրբ Եկեղեցու մեջ:

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - (եղանակով) *Եվ թույլ տուր մեզ համարձակ ձայնով բացել մեր բերանը, կանչել Քեզ, երկնավոր Հայր, երգել և ասել:*

Դպ - (բազկատարած) *ՀԱՅՐ մեր, որ երկնքում ես,սուրբ թող լինի Քո անունը: Քո արքայությունը թող գա,Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է: Մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր: Եվ թո՛ղ մեզ մեր պարտքերը,ինչպես և մենք ենք թողնում մեր պարտապաններին: Եվ մի՛ տանիր մեզ փորձության, այլ փրկի՛ր մեզ չարից:*

Քհ - (ծածուկ) *Տերերի Տեր, աստվածների Աստված, հավիտենական թագավոր, բոլոր արարածների Արարիչ և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, մեզ մի՛ տանիր փորձության, այլ փրկի՛ր չարից և ազատի՛ր փորձությունից:*

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քհ - (եղանակով) *Քանի որ Քոնն են արքայությունը, զորությունը և փառքը հավիտյանս. ամեն:*

Զ. ԽՈՆԱՐՀՈՒՄՆ

Քհ - ✝ *Խաղաղութիւն ամենեցուն:*
Դպ - *Եւ ընդ հոգւոյդ քում:*
Սրկ - *Աստուծոյ երկիրպագեսցուք:*
Դպ - *Առաջի Քո, Տէր:*

Ամենայն ժողովուրդն իջցէ ի ծունկս եւ քահանայն խոնարհեցուցեալ զգլուխն յաջ կողմն սկհոյն, աղօթեսցէ:

Քհ - (ի ծածուկ) *Որ աղբիւրդ ես կենաց եւ բղխումն ողորմութեան, Հոգիդ Սուրբ, ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիրպագանեն առաջի Աստուածութեան Քո: Պահեա՛ զսոսա ամբողջս, տպաւորեա՛ յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի՝ առ ի ժառանգութիւն եւ ի վիճակ հանդերձելոցդ բարեաց:*
Սրկ -*Օրհնեա՛, տէր:*

Քահանայն երկրպագելով յաջակողմն սկհոյն ասասցէ, Քրիստոսիւ, եւ երկրպագելով ի ձախակողմն ասասցէ, Յիսուսիւ, եւ երկրպագեալ ի գլուխ սկհոյն ասասցէ, Տերամբ մերով եւ այլն:

Քհ - (ի ձայն) *Քրիստոսիւ Յիսուսիւ Տէրամբ մերով, ընդ որում Քեզ Հոգւոյդ Սրբոյ եւ Հօր Ամենակալի վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Է. ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ

Սրկ - *Պռօսխումէ:*

Քահանայն բացցե զծածկոց սկհոյն, եւ ոչ եւս աքօղեսցէ այսուհետեւ. եւ մատամբք երկուց ձեռացն բարձրացուցեալ ի վեր զսուրբ մարմինն ի տես ժողովրդեան, ասասցէ բարձր ձայնիւ:

Քհ - *Ի Սրբութիւն Սրբոց:*
Դպ - *Միայն Սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր. Ամէն:*

Զ. ԽՈՆԱՐՀՈՒՄ

Քհ - *Խաղաղություն ամենքին:*
Դպ - *Եվ քո հոգուն:*
Սրկ - *Աստծուն երկրպագենք:*
Դպ - *Քո առաջ, Տե՛ր:*

Ողջ ժողովուրդը ծնկի է գալիս, և քահանան խոնարհելով գլուխը սկիհի աջ կողմում, ծածուկ աղոթում է.

Քհ - (ծածուկ) *Ո՛վ Սուրբ Հոգի, որ կյանքի աղբյուրն ու ողորմության բխումն ես, ողորմի՛ր այս ժողովրդին, որ խոնարհվելով երկրպագում է Քո Աստվածությանը: Սրանց ամբողջական պահիր, տպավորիր սրանց հոգիներում մարմնի տեսանելի ձևը՝ հանդերձյալ բարիքներիդ տիրելու ու ժառանգելու համար:*
Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քահանան երկրպագելով սկիհի աջ կողմում ասում է Քրիստոսիւ և երկրպագելով ձախ կողմում, ասում է Յիսուսիւ և երկրպագելով սկիհի վրա, ասում է Տէրամբ մերով և այլն:

Քհ - (եղանակով) *Քրիստոսով, Հիսուսով, մեր Տիրոջով, որի հետ Քեզ՝ Սուրբ Հոգուդ և ամենակալ Հորը վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Է. ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Սրկ - *Ուշադրություն:*

Քահանան վերցնում է սկիհի ծածկոցն ու այլևս չի ծածկում և երկու ձեռքերի մատներով բարձրացնելով սուրբ մարմինը վեր՝ ժողովրդին ի տես, ասում է բարձրաձայն.

Քհ - *Ի սրբություն սրբոց:*
Դպ - *Միայն Սուրբ, միայն Տեր, Հիսուս Քրիստոս, Աստծու Հոր փառքի մեջ, ամեն:*

Ը. ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մինչ դպիրք եղանակեն «Յիսուս Քրիստոս» եւ ն, քահանայն բարձրացուսցէ ի վեր զսկիհն ի տես ժողովրդեան:

Սրկ - *Օրհնեա՛, տէր:*
Քհ - *Օրհնեալ Հայր Սուրբ, Աստուած ճշմարիտ:*
Դպ - *Ամէն:*
Սրկ - *Օրհնեա՛, տէր:*
Քհ - *Օրհնեալ Որդիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:*
Դպ - *Ամէն:*
Սրկ - *Օրհնեա՛, տէր:*
Քհ - *Օրհնեալ Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:*
Դպ - *Ամէն:*
Սրկ - *Օրհնեա՛, տէր:*
Քհ - *Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*
Դպ - *Ամէն: Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, Հոգիդ Սուրբ: Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Եւ մինչ նոքա երգեն, քահանայն խոնարհեսցի եւ աղօթեսցէ:

Քհ - (ի ծածուկ) *Նայեա՛ց Տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից ի սրբութենէ Քումմէ, եւ յաթոռոյ փառաց թագաւորութեան Քո, ե՛կ՝ ի սրբել եւ ի կեցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս եւ աստ պատարագիս: Արժանի արա՛ տալ մեզ յանարատ մարմնոյ Քումմէ եւ ի պատուական յարենէ եւ ի ձեռն մեր ամենայն ժողովրդեանս:*

Ը. ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մինչ դպիրները երգում են Յիսուս Քրիստոս և այլն, քահանան բարձրացնում է սկիհը վեր, ժողովրդին ի տես:

Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*
Քհ - *Օրհնյալ է Հայրը Սուրբ, Աստված ճշմարիտ:*
Դպ - *Ամեն:*
Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*
Քհ - *Օրհնյալ է Որդին Սուրբ, Աստված ճշմարիտ:*
Դպ - *Ամեն:*
Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*
Քհ - *Օրհնյալ է Հոգին Սուրբ, Աստված ճշմարիտ:*
Դպ - *Ամեն:*
Սրկ - *Օրհնի՛ր, տե՛ր:*
Քհ - *Օրհնություն և փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*
Դպ - *Ամեն: Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, Հոգիդ Սուրբ. օրհնություն Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Մինչ նրանք երգում են, քահանան խոնարհվում է և աղոթում:

Քհ - (ծածուկ) *Մեր Տեր Հիսուս Քրիստոս, նայի՛ր երկնքի Քո սրբությունից և փառքի թագավորության աթոռից, ե՛կ մեզ սրբելու և ապրեցնելու: Որ Հոր հետ ես նստում և այստեղ պատարագվում, արժանի արա՛ մեզ տալ Քո անարատ մարմնից և պատվական արյունից և մեր միջոցով՝ այս ողջ ժողովրդին:*

ԼՐՈՒՄՆ
Ա. ԹԱԹԱԽՈՒՄՆ

Ապա քահանայն երկիր պագեալ համբուրեսցէ զսեղանն, եւ զմաղզմայն ի բաց առեալ ի սկհոյն դիցէ ի վերայ սեղանոյն, եւ առեալ զսուրբ մարմինն թացցէ ամբողջ յանապական արիւնն եւ ասասցէ ի ծածուկ:

Քհ ~ (ի ծածուկ) *Տէր Աստուած մեր, որ կոչեցեր զմեզ յանուն Միածնի Որդւոյ Քոյ Քրիստոնեայս, եւ շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգեւոր ավազանաւն ի թողութիւն մեղաց եւ արժանի արարեր զմեզ հաղորդիլ սուրբ մարմնոյ եւ արեան Միածնի Քո:*

Եւ այժմ աղաչեմք զՔեզ, Տէր, արա զմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն, եւ զոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սրկ ~ *Օրհնեա՛, տէր:*

Քահանայն առեալ զսկիհն հանդերձ սուրբ մարմնովն ի ձեռս իւր, ասասցէ բարձր ձայնիւ:

Քհ ~ (ի ձայն) *Ի սուրբ, ի սուրբ, պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի,* (դարձցի առ ժողովուրդն եւ փոքր ինչ յառաջ գնացեալ բարձրացուսցէ զսկիհն) *ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում: Սա՛ է Կեանք, Յոյս, Յարութիւն, Քաւութիւն, եւ Թողութիւն մեղաց:*

Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերոյ: Սաղմոս ասացէ՛ք երկնաւոր Թագաւորիս մերում անմահի, որ նստի ի կառս քերովբէականս:

Քահանայն վերադարձցի ի սեղանն, եւ ձգեսցի փոքր վարագոյրն: Սարկաւագունք համայն ի ձախակողմն սեղանոյն ժողովեալ սկսանիցին երգել «զՏեր ողորմեա», եւ դպիրքն ի դասեն փոփոխակի:

Դպ ~ *Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:*
Սրկ ~ *Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:*
Դպ ~ *Ամենասուրբ Երրորդութիւն, Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն:*

ԿԱՏԱՐՈՒՄ
Ա. ԹԱԹԱԽՈՒՄ

Ապա քահանան երկրպագելով համբուրում է սեղանը և մաղզման սկիհից վերցնելով դնում է սեղանին և վերցնելով սուրբ մարմինը՝ ամբողջը թրջում է անապական արյամբ և ծածուկ ասում է.

Քհ ~ (ծածուկ) *Մեր Տեր Աստված, որ մեզ Քո Միածին Որդու անունով քրիստոնյա կոչեցիր և հոգևոր ավազանի մկրտություն շնորհեցիր մեզ՝ մեղքերի թողության համար և մեզ արժանի արիր հաղորդվելու Քո Միածնի սուրբ մարմնին և արյանը:*

Եվ այժմ, Տե՛ր, աղաչում ենք Քեզ՝ մեզ արժանի արա՛ ընդունելու այս սուրբ խորհուրդը՝ մեր մեղքերի թողության համար և գոհությամբ փառավորելու Քեզ՝ Քո Որդու և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Սրկ ~ *Օրհնի՛ր, տե՛ր:*

Քահանան սկիհը սուրբ մարմնով հանդերձ վերցնելով իր ձեռքը, բարձրաձայն ասում է.

Քհ ~ (եղանակով) *Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի սուրբ, սուրբ և պատվական մարմնից ու արյունից* (դառնում է դեպի ժողովուրդը և մի փոքր առաջ գալով, բարձրացնում է սկիհը), *սրբությամբ ճաշակենք, որ երկնքից իջնելով՝ բաշխվում է մեր մեջ: Սա է կյանք, հույս, հարություն, մեղքերի քավություն և թողություն:*

Սաղմոս ասացե՛ք մեր Տեր Աստծուն: Սաղմոս ասացե՛ք մեր երկնավոր ու անմահ թագավորին, որ նստում է քերովբեական կառքերի վրա:

Քահանան վերադառնում է սեղանի մոտ և ձգվում է վարագույրը: Բոլոր սարկավագները սեղանի ձախ կողմում հավաքված սկսում են դասում կանգնած դպիրների հետ փոխնիփոխ երգել «Տէր, ողորմեա»:

Դպ ~ *Տեր ողորմիր, Տեր ողորմիր, Տեր ողորմիր:*
Սրկ ~ *Տեր ողորմիր, Տեր ողորմիր, Տեր ողորմիր:*
Դպ ~ *Ամենասուրբ Երրորդություն, տո՛ւր աշխարհիս խաղաղություն:*

Սրկ - *Եւ հիվանդաց բժշկութիւն, Ննջեցելոց արքայութիւն:*
Դպ - *Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Յիսուս Փրկիչ, մեզ ողորմեա՛:*
Սրկ - *Միջնորդութեամբ Սուրբ եւ Անմահ, եւ Կենարար Պատարագիս:*
Դպ - *Ընկա՛լ, Տէր, եւ ողորմեա՛:*

Բ. ԲԵԿՈՒՄՆ

Նախասարկաւագն ձայնէ առ դպիրսն բարձր ի թիւ:

Սրկ - *Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերոյ, դպի՛րք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս, զի Սմա վայելեն սաղմոսք եւ օրհնութիւնք, ալէլուք եւ երգք հոգեւորք: Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէ՛ք, եւ զՏէր յերկինս օրհնեցէք:*
Դպ - *Օրհնեալ է Աստուած. Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում, ալէլուիա:*
Զմարմին Իւր տայ մեզ կերակուր, եւ սուրբ զարիւն Իւր ցողէ ի մեզ, ալէլուիա:

Մատիք առ Տէր, եւ առէք զլոյս, ալէլուիա:
Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր, ալէլուիա:
Օրհնեցէք զՏէր յերկինս, ալէլուիա:
Օրհնեցէք զՆա ի բարձունս, ալէլուիա:
Օրհնեցէք զՆա ամենայն հրեշտակք Նորա, ալէլուիա:
Օրհնեցէք զՆա ամենայն զօրութիւնք Նորա, ալէլուիա:

Մինչ նոքա երգեն, քահանայն առցէ զսուրբ մարմինն ի ձեռս եւ ասասցէ արտասուօք:

Քհ - (ի ծածուկ) *Զո՛ր օրհնութիւն, կամ զո՛ր գոհութիւն ի վերայ հացիս եւ բաժակիս ասասցուք: Այլ Յիսուս զՔեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբդ եւ Ամենասուրբ Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Քահանայն յառեալ զաչս իւր ի սուրբ խորհուրդն ասասցէ:

Խոստովանիմ եւ հաւատամ, զի Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ,

Սրկ - *Եվ հիվանդներին՝ բժշկություն, ննջեցյալներին՝ արքայություն:*
Դպ - *Տեր ողորմիր, Տեր ողորմիր, Հիսուս Փրկիչ, մեզ ողորմիր:*
Սրկ - *Այս սուրբ, անմահ և կենարար պատարագի միջնորդությամբ:*
Դպ - *Տե՛ր, ընդունի՛ր և ողորմի՛ր:*

Բ. ԲԵԿՈՒՄ

Երբ ավարտում են, նախասարկավագը ձայնում է դպիրներին բառերը հատհատ արտասանելով.

Սրկ - *Ո՛վ դպիրներ, սաղմոս ասացե՛ք մեր Տեր Աստծուն և քաղցր ձայնով հոգևոր երգեր: Որովհետև Նրան վայելում են սաղմոսներ և օրհնություններ, ալելուիաներ և հոգևոր երգեր: Պաշտոնյաներ, երգելով հանդերձ սաղմոս ասացե՛ք և Տիրոջն երկնքում օրհնեցե՛ք:*
Դպ - *Օրհնյալ է Աստված:*
Քրիստոսը պատարագվելով բաշխվում է մեր մեջ, ալելուիա:
Իր մարմինը մեզ է տալիս իբրև կերակուր, իսկ Իր սուրբ արյունը ցողում է մեր մեջ, ալելուիա:
Մոտեցե՛ք Տիրոջը և առե՛ք լույսը, ալելուիա:
Ճաշակեցե՛ք և տեսե՛ք, որ քաղցր է Տերը, ալելուիա:
Օրհնեցե՛ք Տիրոջը երկնքում, ալելուիա:
Օրհնեցե՛ք Նրան բարձունքներում, ալելուիա:
Օրհնեցե՛ք Նրան, Նրա բոլոր հրեշտակներ, ալելուիա:
Օրհնեցե՛ք Նրան, Նրա բոլոր զորություններ, ալելուիա:

Մինչ նրանք երգում են, քահանան ձեռքն է առնում սուրբ մարմինը և արտասուքով ծածուկ ասում է.

Քհ - (ծածուկ) *Ինչպիսի օրհնություն կամ ինչպիսի գոհություն ասենք այս հացի ու բաժակի վրա: Այլ, Հիսո՛ւս, միայն Քեզ ենք օրհնում՝ Հորդ և Ամենասուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Քահանան, աչքերը սուրբ խորհրդին հառած, ասում է.

Խոստովանում և հավատում եմ, որ Դու ես Քրիստոսը՝ Որդին

որ բարձեր զմեղս աշխարհի:

Եւ բեկեալ զսուրբ մարմինն ի չորս մասունս, արկցէ ի բաժակն ասելով:

Լրումն Հոգւոյն Սրբոյ:

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ
Ա. ՆԱԽՀԱՂՈՐԴԱԿԱՆՔ

Եւ ապա զմի մասն միայն առեալ ի ձեռս. աղօթեսցէ ի ծածուկ արտասուօք եւ գոհութեամբ առ Հայր եւ Որդի:

Քհ ~ (ի ծածուկ) *Հայր Սուրբ, որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ Միածնի Քոյ, եւ լուսաւորեցեր մկրտութեամբ հոգեւոր աւազանին, արժանի արա՛ ընդունել զսուրբ խորհուրդս զայս՝ մեզ ի մեղաց թողութիւն:*

Տպաւորեա՛ ի մեզ զշնորհս Հոգւոյդ Սրբոյ որպէս ի սուրբ առաքեալսն, որք ճաշակեցին եւ եղեն մաքրիչք ամենայն աշխարհի:

Եւ արդ, Տէր Հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մասնաւորեա՛ ճաշակման երեկոյին աշակերտացն, բառնալով զխաւար մեղաց իմոց: Մի՛ հայիր յանարժանութիւնս իմ, եւ մի՛ արգելուր զշնորհս Հոգւոյդ Սրբոյ: Այլ ըստ անբաւ մարդասիրութեան Քում, պարգեւեա՛ զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց: Որպէս խոստացաւ եւ ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս, թէ՝ ամենայն, որ ուտէ զմարմին Իմ եւ ըմպէ զարիւն Իմ, կեցցէ յաւիտեան: Արդ արա՛ զսա մեզ ի քաւութիւն, զի որք կերիցեն եւ արբցեն ի սմանէ, հանցեն զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

† Խաղաղութիւն ամենեցուն:

Գոհանամք զՔէն Քրիստոս Թագաւոր, որ արժանի արարեր զանարժանս հաղորդիլ սուրբ մարմնոյ եւ արեան Քո: Եւ այժմ աղաչեմ զՔեզ, Տէր, մի՛ լիցի սա ինձ ի դատապարտութիւն, այլ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, յառողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ, եւ ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան,

Աստծո, որ աշխարհի մեղքերը վերցրեցիր:

Եվ սուրբ մարմինը չորս մասի բաժանելով, գցում է բաժակի մեջ՝ ասելով.

Սուրբ Հոգու կատարումը:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ
Ա. ՆԱԽԱՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Եվ ապա մի մասը միայն ձեռքն առնելով, ծածուկ աղոթում է՝ արտասվելով և գոհություն մատուցելով Հորն ու Որդուն:

Քհ ~ (ծածուկ) *Հայր Սուրբ, որ մեզ Քո Միածնի անվանակցությամբ կոչեցիր և լուսավորեցիր հոգևոր ավազանի մկրտությամբ, արժանի արա՛ ընդունելու այս սուրբ խորհուրդը՝ մեր մեղքերի թողության համար:*

Մեր մեջ էլ տպավորի՛ր Սուրբ Հոգուդ շնորհները, ինչպես որ սուրբ առաքյալների մեջ, որոնք ճաշակեցին և եղան ողջ աշխարհի մաքրագործողները:

Եվ այժմ, ո՛վ Տեր, Հայր բարերար, այս հաղորդությունը մասը դարձրո՛ւ աշակերտների երեկոյան ճաշակմանը վերցնելով մեղքերի խավարը: Մի՛ նայիր իմ անարժանությանը և մի՛ արգելիր Սուրբ Հոգուդ շնորհները: Այլ անհուն մարդասիրությանդ համաձայն՝ սա պարգևի՛ր որպես մեղքերի քավիչ և հանցանքների լուծիչ: Ինչպես որ խոստացավ և ասաց մեր Տեր Հիսուս Քրիստոսը, թե՝ «Ամեն ոք, ով ճաշակում է Իմ մարմինը և ըմպում է Իմ արյունը, հավիտյան պիտի ապրի»: Արդ սա մեզ քավություն արա, որպեսզի ովքեր ուտում և ըմպում են սրանից, օրհնություն և փառք մատուցեն Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Խաղաղություն ամենքին:

Գոհանում եմ Քեզանից, Քրիստոս թագավոր, որ ինձ՝ անարժանիս, արժանի արեցիր հաղորդվելու սուրբ մարմնիդ և արյանդ: Եվ այժմ աղաչում եմ Քեզ, Տեր, սա ինձ համար թող չլինի դատապարտություն, այլ մեղքերի քավություն և թողություն, հոգու ու մարմնի առողջություն, և բոլոր առաքինի գործերի ամբողջացում, որ-

որպէս զի սրբեսցէ սա զչունչս իմ եւ զհոգի, եւ զմարմին իմ, եւ արասցէ զիս տաճար եւ բնակարան Ամենասուրբ Երրորդութեանդ, զի ընդ սուրբս Քո արժանի եղէց փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԱՂՕԹՔ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻՆ

Գոհանամ եւ մեծացուցանեմ եւ փառաւորեմ զՔեզ, Տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուր յայսմիկ հաղորդակից լինել աստուածային եւ սոսկալի խորհրդոյ Քոյ, անարատ մարմնոյդ եւ պատուական արեանդ:

Վասն այսորիկ զսոսա ի բարեխօսութիւն ունելով, աղաչեմ յամենայն աւուրս եւ ի ժամանակս կենաց իմոց ընդ սրբութեան Քոյ պահեա՛ զիս: Որպէս զի յիշելով զբարեգթութիւնս Քո եւ կենդանի եղէց ընդ Քեզ, որ վասն մեր չարչարեցար եւ մեռար եւ յարեար:

Մի՛ մերձեսցի, Տէր իմ եւ Աստուած, խորտակիչն, կնքելով անձին իմոյ պատուական արեամբդ Քով:

Ամենակարող, մաքրեա՛ զիս սոքօք յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ: Ամրացո՛ զկեանս իմ, Տէր, յամենայն փորձութենէ, եւ զպատերազմողն իմ դարձո՛ յինէն յետս, պատկառեալ եւ ամաչեցեալ՝ որչափ յառնէ ի վերայ իմ:

Ամրացո՛ զգնացս մտաց եւ լեզուի իմոյ, եւ զամենայն ճանապարհս մարմնոյ իմոյ: Լե՛ր հանապազորդ ընդ իս, ըստ անսուտ խոստման Քո, թէ՝ որ ուտէ զմարմին Իմ, եւ ըմպէ զարիւն Իմ, նա յԻս բնակեսցէ եւ Ես՝ ի նմա: Դու ասացեր, մարդասէ՛ր, կացո՛ զբանս աստուածային անլուծանելի հրամանաց Քոց, քանզի Դու ես Աստուած ողորմութեան, եւ գթութեան եւ մարդասիրութեան եւ պարգեւիչ ամենայն բարեաց, եւ Քեզ վայելէ փառք հանդերձ Հարրդ եւ ամենասուրբ Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

պեսզի սա սրբի իմ շունչը, հոգին ու մարմինը և ինձ տաճար ու բնակարան դարձնի Քո Ամենասուրբ Երրորդությանը, որպեսզի արժանի լինեմ Քո սրբերի հետ փառավորելու Քեզ՝ Հորդ և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՂՈԹՔԸ

Իմ Տեր Աստված, գոհանում, մեծարում, և փառավորում եմ Քեզ, որովհետև ինձ՝ անարժանիս, այսօր արժանի արեցիր հաղորդակից լինելու Քո աստվածային և սոսկալի խորհրդին, անարատ մարմնիդ և պատվական արյանդ:

Դրա համար սրանց բարեխոս ունենալով՝ աղաչում եմ իմ կյանքի բոլոր օրերի և ժամանակների ընթացքում ինձ պահի՛ր Քո սրբության մեջ: Որպեսզի հիշելով Քո բարեգթությունները, կենդանի լինեմ Քեզ հետ, որ մեզ համար չարչարվեցիր, մեռար և հարություն առար:

Տե՛ր և Աստված իմ, խորտակիչը թող չմոտենա ինձ, որ կնքված եմ Քո պատվական արյամբ:

Ո՛վ ամենակարող, որ միակ անմեղն ես, սրանցով մաքրի՛ր ինձ իմ բոլոր մեռելոտի գործերից: Տե՛ր, ամրացրո՛ւ իմ կյանքն ամեն տեսակի փորձությունից և իմ դեմ պատերազմողին քանիցս, որ վեր կենա իմ դեմ ամաչած և պատկառած ետ մղիր ինձանից:

Ամրացրո՛ւ իմ լեզվի և մտքի ընթացքը և մարմնիս բոլոր ճանապարհները: Ամեն օր ինձ հետ եղի՛ր, Քո անսուտ խոստման համաձայն, թե. «Ով ուտում է Իմ մարմինը և ըմպում է Իմ արյունը, նա կբնակվի Իմ մեջ, և Ես՝ նրա մեջ»: Ո՛վ մարդասեր, քանի որ Դու ասացիր, ուրեմն պահի՛ր Քո աստվածային անքակտելի հրամանների խոսքերը, որովհետև Դու ողորմության, գթության, մարդասիրության Աստվածն ես և բոլոր բարիքներ պարգևողը, ուստի Քեզ է վայելում փառքը՝ Հորդ և Ամենասուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Բ. ՃԱՇԱԿՈՒՄՆ

Եւ ապա տեառնագրելով զինքն, խնդրեսցէ յԱստուծոյ զպէս պէս հայցուածս վասն իւր եւ ժողովրդեան, եւ թողութիւն խնդրեսցէ իւրոց յանցաւորացն թշնամեաց եւ ատելեաց, եւ անդէն ասասցէ:

Քհ ~ (ի ծածուկ) *Հաւատով հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնդ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգիդ Սուրբ:*

Եւ ապա ահիւ եւ դողութեամբ ճաշակեսցէ զմասն որ ի ձեռին իւրում է՝ ասելով:

Հաւատով ճաշակեմ զսուրբ եւ զկենդանարար եւ զփրկագործ մարմինս Քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս՝ ի թողութիւն մեղաց իմոց:

Եւ արբցէ ի բաժակէն ասելով:

Հաւատով ըմպեմ զսրբարար եւ զմաքրիչ արիւնս Քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս՝ ի թողութիւն մեղաց իմոց:

Եւ յետ ճաշակելոյ ի մարմնոյ եւ յարենէ Տեառն, ասասցէ:

Մարմին Քո անապական լիցի ինձ ի կեանս, եւ սուրբ արիւն Քո՝ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Եթէ իցեն արժանաւորք հաղորդութեան յեկեղեցականաց՝ հաղորդեսցին ի սեղանն ի ներքին կողմն վարագուրին. եւ ապա բացցի վարագոյրն, եւ նախասարկաւագն գոչեսցէ առ ժողովուրդն բարձր ձայնիւ:

Սրկ~ *Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք:*

Քահանայն ունելով զսուրբ խորհուրդն ի ձեռին դարձցի առ ժողովուրդն եւ յառաջ գնասցէ փոքր ինչ. եւ եթէ իցեն արժանաւորք, քահանայն ի ծունկս իջեալ ի բեմին հաղորդեսցէ զնոսա. եւ սարկաւագն կալցէ զսկիհն դաստառակաւ ի ձախմէ քահանային:

Քհ ~ *Ասացէք մեղայ Աստուծոյ,* [հաւատամք ի Հայր Սուրբ Աստուած ճշմարիտ, հաւատամք յՈրդին Սուրբ Աստուած ճշմարիտ, հաւատամք եւ ի Հոգին Սուրբ Աստուած ճշմարիտ: Խոստովանինք եւ հաւատամք]:

Բ. ՃԱՇԱԿՈՒՄ

Խաչակնքելով իրեն, Աստծուց իր և ժողովրդի համար տարբեր շնորհներ է հայցում և թողություն է խնդրում իր հանցավոր թշնամիների և իրեն ատողների համար և դրանից հետո ասում է.

Քհ ~ (ծածուկ) *Հավատով հավատում եմ Ամենասուրբ Երրորդությանդ՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուդ:*

Եվ ապա ահով ու դողով ճաշակում է իր ձեռքում եղած մասն՝ ասելով.

Քրիստոս Աստված իմ Հիսուս, հավատով ճաշակում եմ Քո սուրբը, կենարար և փրկագործ մարմինը՝ իմ մեղքերի թողության համար:

Եվ ըմպում է բաժակից, ասելով.

Քրիստոս Աստված իմ Հիսուս, հավատով ըմպում եմ Քո սրբարար ու մաքրագործ Արյունը՝ իմ մեղքերի թողության համար:

Եվ Տիրոջ Մարմինն ու Արյունը ճաշակելուց հետո, ասում է.

Քո անապական մարմինը թող լինի ինձ կյանք, իսկ Քո սուրբ արյունը՝ մեղքերիս քավություն և թողություն:

Եթե եկեղեցականների մեջ կլինեն հաղորդության արժանիներ, հաղորդվում են սեղանի վրա, վարագույրի հետևում, և ապա բացվում է վարագույրը և նախասարկավագը բարձր ձայնով դիմում է ժողովրդին.

Սրկ ~ *Երկյուղածությամբ և հավատով առաջ եկեք և սրբությամբ հաղորդվեցե՛ք:*

Քահանան սուրբ խորհուրդը ձեռքին դառնում է դեպի ժողովուրդը և փոքրինչ առաջ գալիս և եթե կան արժանիներ բեմի վրա ծնկի գալով հաղորդություն է տալիս ժողովրդին, իսկ սարկավագը, սկիհը դաստառակով բռնում քահանայի ձախ կողմում:

Քհ ~ *Ասացե՛ք մեղավոր եմ Աստծու առջև. հավատում ենք Սուրբ Հորը Աստծուն ճշմարիտ, հավատում ենք Սուրբ Որդուն Աստծուն ճշմարիտ, հավատում ենք և Սուրբ Հոգուն Աստծուն ճշմարիտ:*

Զի սա է պատուական Մարմին եւ Արիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ լինի մեզ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Շարական Հաղորդութեան

Որ կազմեցեր սեղան խորհրդոյ եւ արբուցեր յանմահական բաժակէն սրբոց Քոց առաքելոց այսօր ի սուրբ վերնատունն. Աղաչեմք, փրկիչ, ողորմեա՛:

Մաքրեա՛ զմիտս եւ զխորհուրդս, զի եւ մեք հաղորդեսցուք սրբութեամբ ընդ սրբոց Քոց առաքելոց այսօր ի սուրբ վերնատունն. Աղաչեմք, փրկիչ, ողորմեա՛:

Դպ ~ *Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:*

Քահանայն ունելով զսկիհն ի ձեռին օրհնեսցէ զժողովուրդն ասելով:

Քհ ~ *Կեցո՛, Տէր, զժողովուրդս Քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս Քո, հովուեա՛ եւ բարձրացո՛ զսոսա յայսմհետէ մինչեւ յաւիտեան:*

Դ. ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Դպ ~ *Լցաք ի բարութեանց Քոց, Տէր, ճաշակելով զմարմին Քո եւ զարիւն. փա՛ռք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ հանապազ կերակրես զմեզ. առաքեա՛ ի մեզ զհոգեւոր Քո զօրհնութիւն, փա՛ռք ի բարձունս կերակրողիդ զմեզ:*

Քահանայն դարձցի ի սեղանն, ձգեսցի վարագոյրն եւ ճաշակեալ զմնացեալս ի մարմնոյ եւ յարենէն, մաքրեսցէ զսկիհն ջինջ, ասելով զաղօթս:

Քհ ~ (ի ծածուկ) *Գոհանամք զՔէն, Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զեկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի Սուրբ Երրորդութիւնդ. Ալէլուիա:*

Գոհանամք զՔէն, Քրիստոս Թագաւոր, որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով եւ արեամբ Քով սրբով: Շնորհեա՛ զքաւութիւն եւ զմեծ ողորմութիւն. Ալէլուիա:

Խոստովանում և հավատում ենք: Քանի որ սա է մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի պատվական մարմինն ու արյունը, որ մեր մեղքերին քավություն և թողություն է լինում:

Շարական հաղորդության

Որ կազմեցիր խորհուրդի սեղանն և արբեցրեցիր անմահական բաժակից Քո սուրբ առաքյալներին այսօր սուրբ վերնատանը. աղաչում ենք, Փրկիչ, ողորմի՛ր:

Մաքրիր մեր մտքերն ու խորհուրդները, որպեսզի մենք էլ այսօր Քո սուրբ առաքյալների հետ սրբությամբ հաղորդվենք սուրբ վերնատանը. աղաչում ենք, Փրկիչ, ողորմի՛ր:

Դպ ~*Մեր Տերն ու մեր Աստվածը մեզ երևաց. օրհնյա՛լ լինի Տիրոջ անունով եկողը:*

Քահանան սկիհը ձեռքին բռնած օրհնում է ժողովրդին՝ (ասելով).

Քհ ~ *Ո՛վ Տեր, ապրեցրո՛ւ Քո ժողովրդին և օրհնի՛ր Քո ժառանգությունը. հովվի՛ր և բարձրացրո՛ւ սրանց այսուհետև մինչև հավիտյան:*

Գ. ԳՈՀԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դպ ~ *Տե՛ր, ճաշակելով Քո մարմինն ու արյունը, լցվեցինք Քո բարիքներով. փա՛ռք բարձունքներում՝ մեզ կերակրողիդ: Դու, որ միշտ կերակրում ես մեզ, ուղարկի՛ր Քո հոգևոր օրհնությունը. փա՛ռք բարձունքներում՝ մեզ կերակրողիդ:*

Քահանան վերադառնում է սեղանի մոտ, ձգվում է վարագույրը և ճաշակելով մնացյալ մարմինն ու արյունը հատակ մաքրում է սկիհը, ծածուկ ասելով այս աղոթքը.

Քհ ~ (ծածուկ) *Ամենակալ Հայր, գոհանում ենք Քեզանից, որ մեզ համար սուրբ եկեղեցին նավահանգիստ և սրբության տաճար պատրաստեցիր, ուր փառաբանվում է Սուրբ Երրորդությունդ, ալելուիա:*

Գոհանում ենք Քեզանից, Քրիստոս թագավոր, որ Քո կենարար մարմնով և սուրբ արյամբ մեզ կենդանություն պարգևեցիր: Շնորհի՛ր քավություն և մեծ ողորմություն, ալելուիա:

Գոհանամք զՔէն, Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի: Անարատ պահեա՛ հաւատով Երրորդութեանդ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան. Ալէլուիա:

Սրկ- *Ամէն: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Դպ- *Տէր, ողորմեա:*

Սրկ- *Եւ եւս հաւատով ընկալեաք յաստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ եւ յանապական խորհրդոյս, զՏեառնէ գոհարացուք:*

Դպ- *Գոհանամք զՔեն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ Քոյ: Բաշխելով զմարմինդ եւ զարիւնդ ի փրկութիւն աշխարհի, եւ Կեանք անձանց մերոց:*

Քհ - (ծածուկ) *Գոհանամք զՔէն, Քրիստոս Աստուած մեր, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի սրբութիւն կենդանութեան: Սովիմբ պահեա՛ զմեզ սուրբս եւ անարատս, բնակեալ զմեօք Քո աստուածային խնամօքդ:*

Հովուեա՛ զմեզ յանդաստանի կամաց Քոց սրբոց եւ բարեսիրաց: Որով ամրացեալք յամենայն բանսարկուին ընդդիմութեանց, Քում եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի, եւ Քեզ միայնոյ քաջայաղթ եւ ճշմարիտ Հովուիդ հետեւիլ: Եւ առ ի Քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից:

Աստուած մեր եւ Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

† Խաղաղութիւն ամենեցուն:

Անքնին, անհաս, երրեակ ինքնութեանդ, հաստիչ, ընդունող եւ անբաժանելի միասնական Սուրբ Երրորդութեանդ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Քահանայն լուացեալ զձեռս դիցէ զխոյրն. եթէ իցէ եպիսկոպոս՝ զթագն, եւ զգեցցի զեմիփորոնն. ապա բացցի վարագոյրն:

Գոհանում ենք Քեզանից, Հոգի ճշմարիտ, որ նորոգեցիր սուրբ եկեղեցին. անարատ պահի՛ր այն Երրորդությանդ հավատով այսուհետև մինչև հավիտյան. ալելուիա:

Սրկ - *Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը:*

Դպ - *Տե՛ր, ողորմի՛ր:*

Սրկ - *Առավել ևս դուք, այս աստվածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ և անապական խորհուրդը հավատով ընդունածներ, գոհացե՛ք Տիրոջից:*

Դպ -*Տե՛ր, գոհանում ենք Քեզանից, որ մեզ կերակրեցիր Քո անմահական սեղանից՝ բաշխելով մարմինդ և արյունդ, որպես աշխարհի փրկություն և կյանք՝ մեր անձերի համար:*

Քհ - (ծածուկ) *Քրիստոս Աստված մեր, գոհանում ենք Քեզանից, որ այսպիսի բարության ճաշակում շնորհեցիր մեզ մեր կյանքի սրբության համար: Սրանով սուրբ և անարատ պահի՛ր մեզ, բնակվելով մեր շուրջը Քո Աստվածային խնամքով:*

Հովվի՛ր մեզ Քո սուրբ և բարեսեր կամքի անդաստանում, որով ամրացած բանսարկու թշնամու ամեն տեսակ հակառակությունների դեմ, արժանի լինենք լսելու Քո ձայնը և հետևելու Քեզ՝ միակ ճշմարիտ և քաջահաղթ Հովվիդ, և Քեզանից ընդունելու երկնային արքայությանդ մեջ մեզ համար պատրաստված տեղը:

Աստված մեր և Տեր մեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս, որ օրհնյալ ես Քո Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Խաղաղություն ամենքին:

Անքննելի, անհասանելի, եռյակ Ինքնությանդ, հաստատող, ընդունող և անբաժանելի, միասնական Սուրբ Երրորդությանդ վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Քահանան լվանալով ձեռքերը, դնում է խույրը, իսկ եթե եպիսկոպոս է՝ թագը և հագնում է եմիփորոնը, ապա բացվում է վարագույրը:

ԱՐՁԱԿՈՒՄՆ
ԱՂՕԹՔ Ի ՄԷՋ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Սրկ ~ *Օրհնեա՛, տէր:*

Եւ քահանայն երկրպագեալ զսուրբ սեղանոյն՝ առցէ սուրբ աւետարանն ի ձեռս, եւ ընդ հարաւային աստիճանս իջանելով ի դասն:

Քհ ~ (ի ձայն) *Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զՔեզ, Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի Քեզ:*

Դպ ~ *Օրհնեա՛լ է Աստուած:*

Քհ ~ *Կեցո՛ զժողովուրդս Քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս Քո, զլրումն Եկեղեցւոյ Քո պահեա՛:*

Դպ ~ *Ամէն:*

Քհ ~*Սրբեա՛ զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան Քոյ, Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ Քով, եւ մի՛ թողուր զյուսացեալս ի Քեզ:*

Դպ ~*Ամէն:*

Քհ ~*Զխաղաղութիւն պարգեւեա՛ ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից եւ զինուորեալ մանկանց նոցա եւ ամենայն ժողովրդեանս:*

Դպ ~ *Ամէն:*

Քհ ~ *Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Քէն, որ ես Հայր լուսոյ եւ Քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Դպ ~ *Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան:* (Երիցս կրկնեա):

Քհ ~ *Կատարումն օրինաց եւ մարգարէից Դու ես Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն Հայրական տնօրէնութիւնս Քո, լի՛ց եւ զմեզ Հոգւովդ Քով Սրբով:*

ԱՐՁԱԿՈՒՄ
ԱՂՈԹՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵՋ

Սրկ ~ *Օրհնի՛ր, տե՛ր:*

Եվ քահանան երկրպագելով սուրբ սեղանին, ձեռքն է վերցնում սուրբ ավետարանը և հարավային աստիճաններով իջնելով դաս (ասում է).

Քհ ~ (եղանակով) *Տե՛ր, որ օրհնում ես նրանց, ովքեր օրհնում են Քեզ և սրբացնում ես Քեզ հուսացողներին:*

Դպ ~ *Օրհնյա՛լ է Աստված:*

Քհ ~ *Ապրեցրո՛ւ Քո ժողովրդին և օրհնի՛ր Քո ժառանգությունը, պահի՛ր Քո եկեղեցու ամբողջությունը:*

Դպ ~ *Ամեն:*

Քհ ~ *Մաքրի՛ր սրանց, որոնք սիրով ողջունեցին Քո տան վայելչությունը: Դու մեզ փառավորի՛ր Քո աստվածային զորությամբ և մի՛ լքիր Քեզ հուսացողներիս:*

Դպ ~ *Ամեն:*

Քհ ~ *Խաղաղություն պարգևի՛ր ամբողջ աշխարհին, եկեղեցիներին, քահանաներին, քրիստոնյա թագավորներին, նրանց զինվորներին և ողջ ժողովրդին:*

Դպ ~ *Ամեն:*

Քհ ~ *Որովհետև բոլոր բարի տուրքերը և բոլոր կատարյալ պարգևները Քո կողմից՝ վերևից են իջել, Դու, որ լույսի Հայրն ես և Քեզ վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Դպ ~ *Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը այժմվանից մինչև հավիտյան* (կրկնիր երեք անգամ)*:*

Քհ ~ *Օրենքների ու մարգարեների կատարումը դու ես, մեր Փրկիչ Քրիստոս Աստված, որ լրացրիր Հայրական Քո բոլոր տնօրինությունները, մեզ նույնպես լցրո՛ւ Քո Սուրբ Հոգով:*

ՎԵՐՋԻՆ ԱՒԵՏԱՐԱՆ

Սրկ -*Օրթի:*

Քահանայն դառնալով առ ժողովուրդն ասասցէ:

Քհ - ✝ *Խաղաղութիւն ամենեցուն:*
Դպ - *Եւ ընդ հոգւոյդ քում:*
Սրկ - *Երկիւղածութեամբ լուարուք:*
Քհ - *Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Յովհաննու:*
Դպ - *Փա՛ռք Քեզ, Տէր Աստուած մեր:*
Սրկ - *Պռօսխումէ:*
Դպ - *Ասէ Աստուած:*

Ապա կարդան Ս. Աւետարան

Քհ - Արձակման Աւետարան (Յովհ. Ա 1-14): *Ի Հօրէ լուսոյ:*

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ Նովաւ եղեւ, եւ առանց Նորա եղեւ եւ ոչ ինչ, որ ինչ եղեւն:

Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան: Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար Նմա ոչ եղեւ հասու:

Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս: Սա եկն ի վկայութիւն, զի վկայեսցէ վասն Լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Ոչ էր նա Լոյսն, այլ զի վկայեսցէ վասն Լուսոյն:

Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ: Յաշխարհի էր, եւ աշխարհ Նովաւ եղեւ, եւ աշխարհ զՆա ոչ ծանեաւ:

Յիւրսն եկն, եւ իւրքն զՆա ոչ ընկալան: Իսկ որք ընկալան զՆա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատասցեն յանուն Նորա: Որք ոչ յարեանէ եւ ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան:

Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս Նորա, զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:
Դպ -*Փառք Քեզ, Տէր Աստուած մեր:*

ՎԵՐՋԻՆ ԱՎԵՏԱՐԱՆ

Սրկ - [Ալելուիա], *ոտքի:*

Քահանան դառնալով դեպի ժողովուրդը՝ ասում է.

Քհ - *Խաղաղություն ամենքին:*
Դպ - *Եվ քո հոգուն:*
Սրկ - *Երկյուղածությամբ լսեցե՛ք:*
Քհ - *Հիսուս Քրիստոսի Սուրբ Ավետարանին՝ ըստ Հովհաննեսի:*
Դպ - *Փառք Քեզ, մեր Տեր Աստված:*
Սրկ - *Ուշադրությո՛ւն:*
Դպ - *Աստված է խոսում:*

Եվ ապա կարդում են Արձակման Ավետարանը «Ի Հօրէ լուսոյ»:

Քհ - *Արձակման Ավետարան* (Հովհ. Ա 1-14):

Սկզբից էր Բանը, և Բանն Աստծու մոտ էր, և Բանն Աստված էր: Նա սկզբից Աստծու մոտ էր: Ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղել է:

Կյանքը Նրանով էր: Եվ կյանքը մարդկանց լույս էր: Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը Նրան չնվաճեց:

Կար մի մարդ՝ Աստծուց ուղարկված. նրա անունը՝ Հովհաննես: Սա եկավ որպես վկա, որպեսզի վկայի Լույսի մասին, որ բոլորը նրա միջոցով հավատան: Ինքը Լույսը չէր, այլ եկել էր, որ վկայի Լույսի մասին:

Նա էր ճշմարիտ Լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ: Նա աշխարհի մեջ էր, և աշխարհը Նրանով եղավ, սակայն աշխարհը Նրան չճանաչեց:

Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները Նրան չընդունեցին: Իսկ ովքեր Նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծու որդիներ, նրանց, որոնք Իր անվանը կհավատան: Նրանք ո՛չ արյունից, ո՛չ մարմնի կամքից և ո՛չ էլ այր մարդու կամքից, այլ Աստծուց ծնվեցին:

Եվ Բանը Մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, և մենք տեսանք Նրա փառքը, որպես փառքը Միածնի՝ Հոր կողմից՝ լի շնորհներով և ճշմարտությամբ:

Սրկ - *Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա:*

Քհ - *Տէր ողորմեա, Տէր ողորմեա: Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչի Քոյ ի խաղաղութեան. փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՐՁԱԿՄԱՆ

Սրկ - *Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն Նորա ի բերան իմ:*

Եւ քահանայն խաչակնքեսցէ սուրբ աւետարանաւն ի վերայ ժողովրդեան ասելով:

Քհ - † *Օրհնա՛լք եղերո՛ւք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ եւ Տէր Յիսուս Քրիստոս եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեան. Ամէն:*

Եւ դպիրքն մինչ ասեն Ի Տէր պարծեսցի, (Սաղմոս (ԼԳ) Արձակման) բաշխեսցի Մասն ամենայն ժողովրդեան:

Դպ - *Ի Տէր պարծեսցի անձն իմ. լուիցեն հեզք եւ ուրախ եղիցին:*
Մեծ արարէք զՏէր ինեւ. եւ բարձր արասցուք զանուն Նորա ի միասին:
Խնդրեցի ի Տեառնէ եւ լուաւ ինձ. յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս:
Մատիք առ Տէր եւ առեք զլոյս. եւ երեսք ձեր մի՛ ամաչեսցեն:
Այս աղքատ կարդաց առ Տէր, եւ Տէր լուաւ սմա. յամենայն նեղութենէ սորա փրկեաց զսա:
Բանակ հրեշտակաց Տեառն շուրջ է զերկիւղածովք իւովք. եւ պահէ զնոսա:
Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր. երանեալ է այր որ յուսայ ի Նա:
Երկերո՛ւք ի Տեառնէ ամենայն սուրբք Նորա. զի ոչ ինչ է պակասութիւն երկիւղածաց Նորա:
Մեծամեծք աղքատացան եւ քաղցեան. բայց ոյք խնդրեն զՏէր, մի՛

Դպ - *Փառք Քեզ, Տեր Աստված մեր:*

Սրկ - *Սուրբ Խաչով աղաչենք Տիրոջը, որպեսզի սրանով փրկի մեզ մեղքերից և Իր ողորմության շնորհիվ պահպանի մեզ: Ամենակալ Տեր Աստված մեր, ապրեցրու և ողորմիր:*

Քհ - *Տեր ողորմիր, Տեր ողորմիր: Պահպանիր մեզ Քրիստոս Աստված մեր Քո սուրբ և պատվական խաչի հովանու տակ խաղաղությամբ, փրկիր երևացող և աներևույթ թշնամուց: Արժանի արա գոհությամբ փառավորելու Քեզ՝ Հոր և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿՄԱՆ

Սրկ - *Ամեն ժամ Տիրոջն օրհներգեմ, Նրա օրհնությունն ամեն ժամ բերանումս լինի:*

Եվ քահանան սուրբ ավետարանով խաչակնքում է ժողովրդին՝ ասելով.

Քհ - *Օրհնյա՛լ եղեք Սուրբ հոգու շնորհներով, գնացեք խաղաղությամբ, և Տեր Հիսուս Քրիստոսը թող լինի ձեզ և ամենքիդ հետ. ամեն:*

Եվ դպիրները մինչ ասում են Ի Տէր պարծեսցի (Սաղմոս 33/34 Արձակման), բաշխում են մասը ողջ ժողովրդին:

Դպ - *Անձս Տիրոջով պարծենա, հեզերը թող լսեն և ուրախանան:*
Մեծարեցեք Տիրոջն ինձ հետ, բարձրացնենք Նրա անունը միասին:
Խնդրեցի Տիրոջն, ու լսեց ինձ և բոլոր նեղություններից փրկեց:
Մոտեցեք Տիրոջն ու լույս առեք, և թող ձեր երեսները չամաչեն:
Աղքատն այս Տիրոջը դիմեց, և Տերը լսեց նրան ու նրա բոլոր նեղություններից փրկեց սա: Տիրոջ հրեշտակների բանակն Իր երկյուղածների շուրջն է և պահպանում է նրանց:
Ճաշակեցեք և տեսեք, որ քաղցր է Տերը. երանելի է այն մարդը, որ հուսացել է Նրան:
Վախեցեք Տիրոջից. բոլոր սրբերդ Նրա, քանզի Նրանից վախեցողները պակասություն չեն ունենա:
Մեծամեծներն աղքատացան ու սովի մատնվեցին, բայց ովքեր

պակասեսցէ ի նոցանէ ամենայն բարութիւն:

Եկա՛յք, որդեակք իմ, եւ լուարուք ինձ. եւ զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ:

Ո՞վ է մարդ որ կամի զկեանս. սիրէ զաւուրս իւր տեսանել ի բարութեան:

Լռեցո՛ զլեզու քո ի չարութենէ. եւ շրթունք քո մի՛ խօսեսցի զնենգութիւն:

Խոտորեա՛ ի չարէ եւ արա՛ զբարի, խնդրեա՛ զխաղաղութիւն եւ ե՛րթ զհետ նորա:

Աչք Տեառն ի վերայ արդարոց. եւ ականջք Նորա ի վերայ աղօթից նոցա:

Երեսք Տեառն ի վերայ չարագործաց. սատակել յերկրէ զյիշատակս նոցա:

Կարդացին արդարք առ Տէր, եւ Տէր լուաւ նոցա. յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:

Մերձ է Տէր առ այնոսիկ, որ մաշեալ են սրտիւք. եւ զխոնարհս հոգւով կեցուցանէ:

Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր. եւ պահէ զամենայն ոսկերս նոցա եւ մի ի նոցանէ մի՛ փշրեսցի:

Մահ մեղաւորին չար է. բայց որ ատեայ զարդարն զղջասցի:

Փրկէ Տէր զանձինս ծառայից Իւրոց. մի՛ զղջասցին ամենեքեան, ոյք յուսացեալ են ի Նա:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Եւ քահանայն դարձցի յարեւելս եւ երկիրպագցէ առաջի բեմին երիցս եւ ասասցէ:

Քհ - *Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա՛ ինձ:*

Եւ մտեալ յաւանդատունն մերկացի ի զգեստուցն:

Տիրոջն են փնտրում, նրանցից ոչ մի բարիք չի պակասի:

Եկե՛ք, իմ որդիներ, և լսեցեք ինձ, որ Տիրոջ երկյուղը ձեզ սովորեցնեմ:

Ո՞վ է մարդն այն, որ սիրում է կյանքը, և ուզում է իր օրերը բարության մեջ տեսնել:

Լեզուդ պահի՛ր չարությունից, և շրթունքդ թող նենգություն չխոսի:

Խուսափի՛ր չարից և բարիք գործիր, խաղաղություն փնտրիր և նրան հետևիր:

Տիրոջ աչքերն ուղղված են արդարներին, իսկ ականջները՝ նրանց աղոթքին:

Տիրոջ երեսը չարագործների դեմ է՝ նրանց հիշատակն աշխարհից ջնջելու համար:

Արդարները Տիրոջն աղոթեցին, և Տերը լսեց նրանց, ու փրկեց իրենց բոլոր նեղություններից:

Տերը նրանց կողքին է, ովքեր սրտամաշ են եղել, և նա փրկում հոգով խոնարհներին:

Արդարների նեղությունները շատ են, և բոլորից ազատում է Տերը նրանց: Եվ պահպանում է նրանց բոլոր ոսկորները, որոնցից ոչ մեկը չի փշրվի:

Մեղավորի մահը չարաչար է, և արդարին ատողը՝ կզղջա:

Տերը փրկում է Իր ծառաների անձերը, և բոլոր Նրան հուսացողները չեն զղջա:

Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն.

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Եվ քահանան պիտի դառնա դեպի արևելք և երեք անգամ երկրպագի բեմի առաջ՝ ասելով.

Քհ - *Տեր Աստված Հիսուս Քրիստոս, ողորմի՛ր ինձ:*

Քահանան մտնելով ավանդատուն՝ հանում է հանդերձները: